Հայաստանի Հանրապետության

Կադաստրի կոմիտե

Հյուսիսային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

ԵՐԵՎԱՆ

Հյուսիսային Ամերիկայի

խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների

տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը: Տեղեկատու-բառարանը նախատեսված է գիտական և կրթական համակարգի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում Հյուսիսային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

Ներկայացված տեղեկատու-բառարանում փորձ է արվել ի մի բերել Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների հայեցի գրելաձևը, ինչպես նաև տրվել են նրանց մասին կարևոր տեղեկություններ, որոնք առավելապես բնութագրում են իրենց:

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի 368 խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը, այդ թվում՝

- ֆիզաշխարհագրական օբյեկտի անվանումը հայերեն և պաշտոնական լեզվով (լեզուներով)
- ֆիզաշխարհագրական օբյեկտի բնութագրումը

Ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների տեղեկատու-բառարանը ներկայացված է այբբենական կարգով:

Նյութը մշակվել է Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի աշխարհագրական անվանումների խմբի աշխատակիցների կողմից:

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

մ	-	մետր
մ^3/վրկ	-	խորանարդ մետր /վայրկյան
կմ	-	կիլոմետր
կմ^2	-	քառակուսի կիլոմետր
կմ^3	-	խորանարդ կիլոմետր

Ա

ԱԲԵԳՎԵՅԹ - անգլերեն Abegweit Passage, ֆրանսերեն Passage Abegweit. նեղուց Կանադայում, **Նորթամբեռլանդ** նեղուցի ամենանեղ մասը՝ Թրավերս հրվանդանի, **Արքայազն Էդուարդի** կղզու և Թորմենթայն հրվանդանի միջև:
Անվանումն առաջացել է հնդկացիական միքմակ լեզվի abahquit *հողին զուգահեռ պառկած* կամ epeqweit *ջրում պառկած* բառերից: Abahquit անվանումն ազատ թարգմանությամբ հաճախ ընկալվում է որպես *օրորոց ալիքների վրա* :

ԱԳՈՒԱՆԱՎԱԼ - իսպաներեն Río Aguanaval. գետ Մեքսիկայում: Սկիզբ է առնում Սյեռա դե Սակատեկաս լեռների հյուսիսային լանջերից: Երկարությունը՝ 1 080 կմ: Ջրահավաք ավազանը՝ 89 239 կմ^2:
Վերին հոսանքում հայտնի է Տրուխիլյո, Գրանդե, Նյևես, Մարավիլյաս անուններով:
Գետի Aguanaval անվանումը կազմված է իսպաներեն agua *ջուր* և naval *ծովային* բառերից:

ԱԴԵԼԵՅԴ - անգլերեն Adelaide Peninsula, ֆրանսերեն Péninsule Adelaide, ինուկտիկուտ Iluilik. խոշոր թերակղզի Կանադայի հյուսիս-արևմուտքում: Ողողվում է արևմուտքից՝ Քուին Մոդ ծոցի, հյուսիսից՝ Սիմփսոն, արևելքից՝ Չանտրի և հարավից՝ Շերման նեղուցների ջրերով: Թերակղզու մակերեսը ծածկված է բազմաթիվ լճերով:
Անվանվել է Միացյալ Թագավորության թագավոր Ուիլյամ IV-ի կնոջ *Ադելաիդա Սաքս-Մայնինգենի* պատվին:

ԱԹԱԲԱՍԿԱ - անգլերեն Lake Athabasca, ֆրանսերեն Lac Athabasca, անտառային կրի Aðapaskāw. խոշոր, քաղցրահամ լիճ Կանադայում, Սասկաչևան և Ալբերտա պրովինցիաների սահմանին: Երկարությունը մինչև 286 կմ, լայնությունը մինչև 50 կմ: Մակերեսը՝ 7 849 կմ^2: Միջին խորությունը՝ 22 մ, առավելագույնը՝ 124 մ: Ծավալը՝ 1 727 կմ^3, հայելու մակերեսի բարձրությունը՝ 210 մ: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 274 540 կմ^2: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ մոտ 1 900 կմ: Լիճն է թափվում **Աթաբասկա**, իսկ արտահոսում՝ **Ստրուկների** գետերը:
Նախկինում հայտնի էր Աթապիսոն, Մեծ Արաբուսկա և Աթապասկով անուններով:
1820թ-ին Ջորջ Սիմփսոնի կողմից ստացել է Աթաբասկա անվանումը, որի հիմքում ընկած է հնդկացիական անտառային կրի ցեղի aðapaskāw *(որտեղ) կան իրար հաջորդող բույսեր* արտահայտությունը:

ԱԹԱԲԱՍԿԱ - անգլերեն Athabasca River, ֆրանսերեն Rivière Athabasca. գետ Կանադայում, Ալբերտա պրովինցիայում: Սկիզբ է առնում Քոլամբիա սառցադաշտից և հոսելով հյուսիսարևելյան, ապա հյուսիսային ուղղությամբ, թափվում **Աթաբասկա** լիճը: Երկարությունը՝ 1 231 կմ: Ջրի ծախսը՝ 783 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 95 300 կմ^2:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական անտառային կրի ցեղի aðapaskāw *(որտեղ) կան իրար հաջորդող բույսեր* արտահայտությունը:

ԱԼԱԲԱՄԱ - անգլերեն Alabama River. գետ ԱՄՆ-ում Ալաբամա նահանգում: Կազմավորվում է **Ապալաչների** հարավարևմտյան եզրի լանջերից՝ Տալապուսա և Կուսա գետերի միախառնումից: Խոշորագույն վտակն է Կահաբա գետը: Երկարությունը՝ 512,6 կմ: Ջրահավաք ավազանը՝ 106 000 կմ^2:
Անունը ստացել է հնդկացիական *ալաբամա* ցեղից:

ԱԼԵԳԵՅՆԻ - անգլերեն Allegheny River. գետ ԱՄՆ-ում, Փենսիլվանիա և Նյու Յորք նահանգներում: Գլխավոր վտակներն են՝ Քլարիոն, Ռեդբանք Քրիկ, Քրուքեդ Քրիկ, Օյլ Քրիկ, Ֆրենչ Քրիկ, Բալ Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 523 կմ: Ջրի ծախսը՝ 559 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 29 992 կմ^2:
Allegheny անվանումը հավանաբար առաջացել է հնդկացիական լենապե ցեղի լեզվի welhik hane *լավագույն հոսող գետը բլուրներում* կամ oolikhanna *գեղատեսիլ հոսք* անուններից:

ԱԼԵՈՒՏՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Aleutian Islands, ալեուտերեն Tanam Unangaa. Ալյասկայի հարավարևմտյան ծայրամասից մինչև Կամչատկա թերակղզի աղեղնաձև շուրջ 1 900 կմ երկարությամբ ձգվող հրաբխային ծագման կղզեխումբ: Կազմված է 110 կղզիներից և ավելի քան 200 կղզյակներից ու ժայռերից: Մակերեսը՝ 17 669 կմ^2: Բարձր կետը Շիշալդին հրաբուխն է 2 857 մ, Ունիմակ կղզում: Խոշոր կղզիներն են՝ Ունիմակ, Ունալասկա, Ադակ և այլն: Կղզիները կազմված են 5՝ Մոտակա, Առնետների, Անդրեյանովի, Քառաբլուր և Աղվեսների կղզեխմբերից:
Մինչև 1867թ-ը հայտնի էին *Քեթրին* կղզեխումբ անվամբ:
Ներկայիս անվանումը ստացել են այստեղ բնակվող *ալեուտ* ցեղախմբի պատվին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՂԶԵԽՈՒՄԲ - անգլերեն Alexander Archipelago. կղզեխումբ Խաղաղ օվկիանոսի հյուսիսարևելյան մասում, Ալյասկա նահանգից հարավ-արևելք: Կազմված է շուրջ 1 100 կղզիներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 35 000 կմ^2: Ձգվում են 500 կմ երկարությամբ: Խոշոր կղզիներն են՝ **Ուելսի Արքայազնի**, **Չիչագով**, Ադմիրալտի, Բարանով և այլն:
Անվանվել է Ռուսաստանի *Ալեքսանդր II կայսեր* պատվին, ում օրոք ԱՄՆ-ն գնեց այս տարածքները:

ԱԼՅԱՍԿԱ - անգլերեն Gulf of Alaska, ֆրանսերեն Golfe d'Alaska. արևմուտքում՝ **Ալյասկա** թերակղզու և **Կոդյակ** կղզու, արևելքում՝ **Ալեքսանդրի** կղզեխմբով սահմանափակված Խաղաղ օվկիանոսի ծոց: Առավելագույն խորությունը՝ 5 659մ: Երկարությունը՝ 850 կմ, լայնությունը՝ 340 կմ:
Անվանումը ստացել է *Ալյասկա* թերակղզուց:

ԱԼՅԱՍԿԱ - անգլերեն Alaska Peninsula. թերակղզի Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևմտյան մասում: Ողողվում է հյուսիս-արևելքից Բրիստոլի ծոցի,հյուսիսից՝ Բերինգի ծովի և հարավից՝ Խաղաղ օվկիանոսի ջրերով: Երկարությունը մինչև 800 կմ, լայնությունը 10-ից մինչև 170 կմ: Բարձր կետը Վենիամինով հրաբուխն է 2 507 մ:
Ալեուտերեն алясхах անվանումը բացատրվում է որպես *մայրցամաք, մեծ կղզի:*
Մեկ այլ վարկածի համաձայն՝ *կետի տեղ, առատ կետ* :

ԱԼՅԱՍԿԱՅԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ - անգլերեն Alaska Range. լեռնաղթա ԱՄՆ-ում՝ Ալյասկայում: Երկարությունը՝ 699 կմ: Լայնությունը՝ 444 կմ: Մակերեսը՝ 144 752 կմ^2: Լեռների բարձր կետը **Դենալի** գագաթն է 6 190 մ: Հայտնի են նաև **Ֆորեյքեր** (5 303,5 մ), Հանտեր (4 442 մ), Հեյես (4 216 մ), Սիլվերթրոուն (4 029 մ) և այլ գագաթներ:
Նախկինում հայտնի էր նաև *Չիգմիտ* անվամբ:
Անվանումն առաջին անգամ օգտագործվել է 1869թ-ին ամերիկացի բնախույզ Ու.Հ. Դոլլի կողմից:

ԱԼՍԵՔ - անգլերեն Alsek River. գետ Կանադայում և ԱՄՆ-ում՝ Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում և Ալյասկա նահանգում: Սկիզբ է առնում **Սուրբ Եղիայի** լեռներից և թափվում Դրայ ծոցը, Ալյասկայում: Վտակներն են՝ Բեյթս, Տատշենշինի և այլ գետեր: Երկարությունը՝ 250 կմ: Ջրի միջին ծախսը 862,6 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 28 023 կմ^2:
Անվանումը հնդկացիական տլինգիտ լեզվից թարգմանաբար նշանակում է *վայր, որտեղ մարդիկ հանգստանում են* :

ԱԼՎԵՐՍԹՈՈՒՆ - անգլերեն Mount Alverstone, ֆրանսերեն Mont Alverstone. լեռ Ալյասկայի և Կանադայի Յուկոն վարչական տարածքի սահմանագլխին, **Սուրբ Եղիայի** լեռներում: Գտնվում է Հաբարդ (հարավ) և Քենեդի (արևելք) լեռների միջև: Բացարձակ բարձրությունը՝ 4 420 մ, հարաբերականը՝ 594 մ:
Անվանվել է 1908թ-ին բրիտանացի փաստաբան և քաղաքական գործիչ *Ռիչարդ Էվերարդ Ուեբստեր, Ալվերսթոուն 1-ին վիկոնտի* պատվին:

ԱԼՏԱՄԱՀԱ - անգլերեն Altamaha Rive. գետ ԱՄՆ-ում, Ջորջիա նահանգում: Կազմավորվում է Օկոն և Օկմուլգ գետերի միախառնումից: Երկարությունը՝ 220 կմ: Ջրի միջին ծախսը՝ 383 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 36 260 կմ^2:
Անվանումը հնդկացիական տամա լեզվից բառացի նշանակում է *մենք գետի այն կողմից ենք* :

ԱԿԱԴԻԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ - ֆրանսերեն Péninsule acadienne, անգլերեն Acadian Peninsula. թերակղզի Կանադայի արևելքում: Ողողվում է հյուսիսից՝ Շալյոր, իսկ արևելքից՝ **Սուրբ Լավրենտիոսի** ծոցերի ջրերով:
Նախկինում հայտնի էր*Բաս դյու Կոնտե* անվամբ:
Անվանումը ստացել է ի պատիվ այս վայրերում XVII-XVIII դարերում գոյություն ունեցող *Ակադիա* ֆրանսիական գաղութի:

ԱՂԻ ՄԵԾ ԼԻՃ - անգլերեն Great Salt Lake. աղի լիճ ԱՄՆ-ի արևմուտքում՝ Յուտա նահանգի հյուսիսարևմտյան մասում: Երկարությունը մինչև 120 կմ, լայնությունը մինչև 45 կմ: Մակերեսը՝ 4 400 կմ^2: Միջին խորությունը՝ 6 մ, առավելագույնը՝ 15 մ: Ծավալը՝ 26,4 կմ^3, հայելու մակերեսի բարձրությունը՝ 1 280 մ: Լիճն են թափվում՝ Բեր, Վեբեր, Ջորդան և այլ փոքր գետեր: Առանձին տարիներին ջրի աղիությունը հասնում է 300 ‰: Լճում կան 11 կղզիներ, որոնցից ամենամեծը Անտիլոպն է:
Անվանումը լճի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ԱՄԱՋՈՒԱԿ - անգլերեն Amadjuak Lake, ֆրանսերեն Lac Amadjuak. աղի լիճ Կանադայում, Նունավուտ վարչական տարածքում: Երկարությունը մինչև 80 կմ, լայնությունը մինչև 45 կմ: Մակերեսը՝ 3 087 կմ^2, հայելու մակերեսի բարձրությունը՝ 115 մ: Լիճը սնվում է Մինգո լճից և մի քանի փոքր գետակներից, լճից արտահոսում է Ամաջուակ գետը: Անվան հիմքում ընկած է ինուկտիտուտ լեզվի ammaq *շերտաքար* բառը:

ԱՄՈՒՆԴ ՌԻՆԳՆԵՍ - անգլերեն Amund Ringnes Island, ֆրանսերեն Île Amund Ringnes. կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում, **Սվերդրուփի** կղզիների կազմում: Երկարությունը՝ 119 կմ, լայնությունը՝ 75 կմ: Մակերեսը՝ 5 255 կմ^2: Ափագծի երկարությունը մոտ 500 կմ: Բարձր գագաթը՝ 265 մ:
Անվանվել է 1901թ-ին Օտտո Սվերդրուփի կողմից, իր արշավախմբի երկու մեկենաս եղբայրներից ավագ՝*Ամունդ Ռինգնեսի* պատվին:

ԱՄՈՒՆԴՍԵՆԻ ԾՈՑ - անգլերեն Amundsen Gulf, ֆրանսերեն Golfe d'Amundsen. Կանադայի հյուսիսային ափերով և **Վիկտորիա** ու **Բենքս** կղզիներով եզերված Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց: Ծոցն են թափվում բազմաթիվ գետեր, որոնցից ամենախոշորներն են՝ Հորտոնն ու Հոռնադեյը: Լայնությունը՝ 213 կմ: Ափագծի երկարությունը՝ 445 կմ: Առավելագույն խորությունը՝ 285 մ:
Անվանվել է նորվեգացի բևեռախույզ և ճանապարհորդ *Ռուալ Էնգելբրեգտ Գրավնինգ Ամունդսենի* պատվին:

ԱՄՉԻՏԿԱ - անգլերեն Amchitka Pass. նեղուց **Ալեուտյան** կղզեխմբում: Իրարից բաժանում է Առնետների կղզեխումբը (արևմուտքում) և Դելարով կղզիները (արևելքում): Լայնությունը՝ 80,5 կմ: Խորությունը՝ 76-1 829 մ:
Անվանումը ստացել է *Ամչիտկա* կղզուց:

ԱՆԿՈՄՓԱԳՐԻ ՊԻԿ - անգլերեն Uncompahgre Peak. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Սան Խուան լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 365 մ, հարաբերականը՝ 1 304 մ:
Անվանումը ստացել է Գանիսոն գետի վտակ Անկոմփագրիից, որի անունը յուտա լեզվից թարգմանաբար նշանակում է *պղտոր* կամ *կարմիր ջուր* : Հավանաբար անվանվել է Օուրեյ բնակավայրից ոչ հեռու գտնվող ջերմուկների առկայության շնորհիվ:

ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ԼԻՃ - անգլերեն Rainy Lake, ֆրանսերեն Lac à la Pluie, օջիբվե Gojiji-zaaga'igan. լիճ Կանադայում և ԱՄՆ-ում: Երկարությունը մինչև 80 կմ, լայնությունը մինչև 48 կմ: Մակերեսը՝ 932 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 50 մ, հայելու մակերեսի բարձրությունը՝ 338 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ շուրջ 5 962,4 կմ է: Լճից արտահոսում է Ռեյնի գետը:
Նախկինում հայտնի էր *Տեկամամիուեն* և *Ուիյչիչիկ* անուններով:
Անվանումը լճի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:
Լճի օջիբվե լեզվի Gojiji-zaaga'igan անվան հիմքում ընկած gojijiing *մուտքերի վայր* բառը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԻՃ - անգլերեն Lake of the Woods, ֆրանսերեն Lac des Bois. լիճ Կանադայում և ԱՄՆ-ում: Մակերեսը՝ 4 348,6 կմ^2: Առավելագույն խորությունը 64 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ շուրջ 105 000 կմ է: Լիճն է թափվում Ռեյնին, իսկ արտահոսում՝ Վինիպեգ գետերը: Լճում կան 14 632 կղզիներ, որոնցից խոշորներն են՝ Բիգս Բին, Օակ, Ֆլագ, Պենաս, Մագնուսոն և այլն:
Անվանումը լճի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ԱՆՏԵՐՈ - անգլերեն Mount Antero. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայի հարավային մասում: Բացարձակ բարձրությունը՝ 4 351.4 մ, հարաբերականը՝ 763 մ:
Անվանվել է յուտա հնդկացիների առաջնորդ *Անտերոյի* պատվին:

ԱՆՏԻԼՆԵՐ - իսպաներեն Antillas, ֆրանսերեն Antilles, անգլերեն Antilles, նիդերլանդերեն Antillen, պորտուգալերեն Antilhas. կղզիներ **Կարիբյան** ծովում և **Մեքսիկական** ծոցում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների միջև: Կազմված են շուրջ 50 կղզիներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 216 728,2 կմ^2: Բարձր կետը **Դուարտե Պիկն** է 3 098մ, Դոմինիկանայում: Աղեղնաձև ձգվում են շուրջ 3 510 կմ: Խոշոր կղզիներն են՝

Կուբա, **Հայիթի**, **Ջամայկա**, **Պուերտո Ռիկո**, Տրինիդադ և այլն: Բաժանվում է 2 հիմնական մասի՝ **Մեծ** և **Փոքր Անտիլներ**:
Նախկինում հայտնի էին նաև ***Կարիբյան***, *Կարիբենյաս* և *Կամերկանես* անուններով:
Անվանումն առաջին անգամ 1493թ-ին հանդիպում է Իսպանիայի թագավորներ Ֆերդինանդ Արագոնացու և Իզաբելա Կաստիլացու պալատական՝ իտալացի պատմաբան Պեդրո Մարտիր դե Անգլերիայի մոտ:

ԱՆՏԻԿՈՍՏԻ - ֆրանսերեն Île d'Anticosti, անգլերեն Anticosti Island, իննու Notiskuan, միկմակ Natigostec. կղզի Կանադայի արևելքում, **Սուրբ Լավրենտիոսի** ծոցում: Երկարությունը՝ 217 կմ, լայնությունը՝ 48 կմ: Մակերեսը՝ 7 892,53 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 554 կմ: Բարձր կետը՝ 327,09 մ:
Կղզու անվանումը հնդկացիական լեզուներից մեկից թարգմանաբար նշանակում է *վայր, որտեղ արջ են որսում*:

ԱՊԱԼԱՉԻԿՈԼԱ - անգլերեն Apalachicola River. գետ ԱՄՆ-ում, Ֆլորիդա նահանգում: Կազմավորվում է Չատահուչի և Ֆլինտ գետերի միախառնումից: Երկարությունը՝ 269 կմ: Ջրի միջին ծախսը՝ 470 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 50 505 կմ^2:
Անվանումը ստացել է հնդկացիական ապալաչիկոլա ցեղից, որի անունը թարգմանաբար նշանակում է *այլ կողմի մարդիկ*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը թարգմանաբար նշանակում է *բարյացակամ մարդկանց երկիր*:

ԱՊԱԼԱՉՆԵՐ - անգլերեն Appalachian Mountains, ֆրանսերեն Appalaches. լեռնային համակարգ Հյուսիսային Ամերիկայի արևելքում, ԱՄՆ-ում և Կանադայում: Ձգվում են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք շուրջ 2 400 կմ երկարությամբ և 480 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 1 908 538 կմ^2: Բարձր կետը Միտչել գագաթն է 2 037 մ: Լեռնահամակարգի կարևորագույն գագաթներն են՝ Քլինգմանս Դոմ (2 025մ), Վաշինգտոն (1 917մ), Ռոջերս (1 746մ), Մարսի (1 629մ) և այլն: Աշխարհագրորեն լեռնահամակարգը բաժանվում է 2 մասի՝ Հյուսիսային և Հարավային Ապալաչների:
Նախկինում հայտնի էր նաև *Ալեգենի Մաունթինս, Ալեգենիզ, Ալեգանիա* անուններով:
Անվանվել է հնդկացիական *ապալաչ* ցեղի պատվին:

ԱՌԱՓՆՅԱ ԼԵՌՆԱՇՂԹԱ - անգլերեն Coast Mountains, ֆրանսերեն Chaîne Côtière. Հյուսիսային Ամերիկայի Ատլին լճից մինչև **Ֆրեյզեր** գետը ձգվող լեռնաշղթաներից ամենաարևմտյանը: Լեռնաշղթան կազմում է **Կորդիլյեռա** լեռնահամակարգի **Խաղաղօվկիանոսյան Առափնյա լեռնաշղթաների** մաս: Ձգվում է շուրջ 1 600 կմ երկարությամբ և մինչև 300 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 336 962 կմ^2: Բարձր կետը Ուոդինգտոն գագաթն է 4 019 մ: Աշխարհագրորեն լեռնահամակարգը կարելի է բաժանել 3 մասերի:
Անվանումը պաշտոնապես ընդունվել է Կանադայի Աշխարհագրական խորհրդի կողմից՝ 1902թ-ի հունիսի 30-ին:
Անվանումը լեռնաշղթայի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ԱՍՈՒԵՐՈ - իսպաներեն Península de Azuero. թերակղզի Կենտրոնական Ամերիկայում՝ Պանամայի հարավում: Ողողվում է արևելքից **Պանամայի** ծոցի, հարավից և արևմուտքից՝ Խաղաղ օվկիանոսի ջրերով: Այստեղ է գտնվում Հյուսիսային Ամերիկայի հարավային մայրցամաքային **Մարյատո** ծայրակետը: Երկարությունը՝ 100 կմ, լայնությունը՝ 90 կմ: Մակերեսը մոտ 8 000 կմ^2:

Անվանվել է կոլումբիացի փաստաբան, քաղաքական գործիչ և լրագրող *Վիսենտե Անսելմո դե Ասուերո ի Պլատայի* պատվին:

ԱՎԱԼՈՆ - անգլերեն Avalon Peninsula, ֆրանսերեն Péninsule. խոշոր թերակղզի Կանադայում՝ **Նյուֆաունդլենդ** կղզու հարավարևելյան մասում: Երկարությունը շուրջ 100 կմ: Մակերեսը՝ 10 360 կմ^2:
Անվանումը ստացել է ի պատիվ կելտական դիցաբանությունից հայտնի *Ավալոն* կղզու:

ԱՏԻՏԼԱՆ - իսպաներեն Lago Atitlán. խոշոր, անհոսք լիճ Կենտրոնական Ամերիկայում, Գվատեմալայի հարավարևմտյան մասում: Երկարությունը մինչև 19 կմ, լայնությունը մինչև 10 կմ: Մակերեսը՝ 130,1 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 350 մ, հայելու մակերեսի բարձրությունը 1 558 մ:
Անվանումը նաուատլ լեզվից թարգմանաբար նշանակում է *ջրերի միջև* :
Մեկ այլ վարկածի համաձայն լիճն իր անվանումը ստացել է մայաներից և բառացի թարգմանվում է *վայր որտեղ ծիածանը ստանում է իր գույները*:

ԱՏՈՒ - անգլերեն Attu Island, ալեուտերեն Atan. կղզի ԱՄՆ-ում՝ **Ալեուտյան** կղզիներում: Այստեղ է գտնվում Հյուսիսային Ամերիկայի 52° 55′ 13,06″N, 172°25′ 38,21″W կոորդինատներով արևմտյան կղզային ծայրակետը՝ Վրանգել հրվանդանը: Երկարությունը՝ 56 կմ, լայնությունը՝ 30 կմ: Մակերեսը՝ 892,795 կմ^2: Բարձր կետը Ատու գագաթն է 897,9 մ:
Նախկինում հայտնի էր *Սուրբ Թեոդորոս* անվամբ:
Այժմյան անվանումը կղզու ալեուտերեն Atan անվան ձևափոխության արդյունք է:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՅԵՌԱ ՄԱԴՐԵ - իսպաներեն Sierra Madre Oriental. լեռնաշղթա Մեքսիկայի հյուսիս-արևելքում, Մեքսիկական բարձրավանդակի արևելյան եզրին: Ձգվում է 1 116 կմ երկարությամբ և մինչև 641 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 297 819 կմ^2: Բարձր կետը Սան Ռաֆայել գագաթն է 3 751 մ:
Լեռների իսպաներենից Sierra Madre Oriental անվանումը թարգմանաբար նշանակում է *արևելյան մայրական լեռներ*:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍՅԵՌԱ ՄԱԴՐԵ - իսպաներեն Sierra Madre Occidental. լեռնաշղթա Մեքսիկայում, Մեքսիկական բարձրավանդակի արևմտյան եզրին: Համարվում է **Կորդիլյեռաների** շարունակությունը: Ձգվում է 1 098 կմ երկարությամբ և մինչև 826 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 324 645 կմ^2: Բարձր կետը Գորդո գագաթն է 3 352 մ:
Լեռների իսպաներենից Sierra Madre Occidental անվանումը թարգմանաբար նշանակում է *արևմտյան մայրական լեռներ*:

ԱՐԿԱՆԶԱՍ - անգլերեն Arkansas River. գետ ԱՄՆ-ում, Կոլորադո, Կանզաս, Օկլահոմա և Արկանզաս նահանգներում: Սկիզբ է առնում **Ժայռոտ** լեռներից և հոսելով արևելյան, ապա հարավարևելյան ուղղությամբ, Արկանզաս նահանգի Դեշա շրջանի տարածքում թափվում **Միսիսիպի** գետը: Երկարությունը՝ 2 364 կմ: Ջրի միջին ծախսը՝ 1 147մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 435 123 կմ^2:
Անվանման հիմքում ընկած է հնդկացիական սիու լեզվի akansa *հոսանքն ի վայր, տեղ* բառը:

ԱՐՋԻ ՄԵԾ ԼԻՃ - անգլերեն Great Bear Lake, ֆրանսերեն Grand lac de l'Ours, սլեյվի Sahtú. ներքին լիճ Կանադայում: Երկարությունը մինչև 320 կմ, լայնությունը մինչև 175

կմ: Մակերեսը՝ 31 153 կմ^2: Միջին խորությունը՝ 77,7 մ, առավելագույնը՝ 446 մ: Ծավալը՝ 2 233,7 կմ^3, հայելու բարձրությունը՝ 156 մ: Ջրահավաք ավազանի մակերեսն է 114 717 կմ^2: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ 2 719 կմ: Լճում կան 26 կղզիներ: Լճից արտահոսում է Արջի մեծ գետը:
Անվանումը լճի անգլերեն Great Bear անվան բառացի պատճենումն է:

ԱՐՏԻԲՈՆԻՏ - իսպաներեն Río Artibonito, ֆրանսերեն Artibonite / Rivière de l'Artibonite, կրեոլերեն Latibonit. գետ **Հայիթի** կղզու արևմուտքում՝ Դոմինիկանայում և Հայիթիում: Սկիզբ է առնում Կորդիլյերա Սենտրալ լեռների Նալգա դե Մակո լեռան լանջերից և հոսելով հարավարևմտյան և արևմտյան ուղղությամբ թափվում Լեոգանե ծոցը: Վտակներն են՝ Բլանշ, Էստեր, Մակասիա, Գասկոն և այլ գետեր: Երկարությունը՝ 321 կմ: Ջրի ծախսը՝ 99 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 9 013 կմ^2:
Անվանումը գետի տաինո լեզվի Hatiboniko անվան աղճատված ձևն է:

ԱՐՔԱՅԱԶՆ ԳՈՒՍՏԱՎ ԱԴՈԼՖԻ ԾՈՎ - անգլերեն Prince Gustav Adolf Sea, ֆրանսերեն Mer du Prince-Gustave-Adolphe. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի միջկղզային փոքր ծով **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Արևմուտքից՝ սահմանափակված է Բորդեն և Մակքենզի Քինգ, արևելքից՝ **Էլլեֆ Ռինգնես**, հարավից՝ Լահիդ կղզիներով: Երկարությունը մոտ 250 կմ, լայնությունը մոտ 180 կմ:
Անվանվել է 1898 թ-ին նորվեգացի բևեռախույզ Օտտո Սվերդրուփի կողմից, շվեդիայի *արքայազն Գուստավ Ադոլֆի* (հետագայում Գուստավ VI Ադոլֆ թագավոր) պատվին:

ԱՐՔԱՅԱԶՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԿՂԶԻ - անգլերեն Prince Edward Island, ֆրանսերեն Île-du-Prince-Édouard, միկմակ Epekwitk , շոտլանդերեն Eilean Eòin / Eilean a' Phrionnsa. կղզի Կանադայի արևելքում, Սուրբ Լավրենտոսի ծոցի հարավային մասում: Երկարությունը՝ 222,5 կմ, լայնությունը՝ 78 կմ: Մակերեսը՝ 5 660 կմ^2: Բարձր կետը՝ 142 մ:
Նախկինում հայտնի էր *Սեն Ժան* և *Սենթ Ջոնս* անուններով:
1798թ-ին կղզին ստացավ իր այժմյան անվանումը:

ԱՔՍԵԼ ՀԵՅԲԵՐԳ - անգլերեն Axel Heiberg Island, ֆրանսերեն Île Axel Heiberg. կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Կազմում է **Սվերդրուփի** և **Եղիսաբեթ թագուհու** կղզիների մասը: Երկարությունը մինչև 380 կմ, լայնությունը մինչև 246 կմ: Մակերեսը՝ 43 178 կմ^2: Բարձր կետը Աութլուք Պիկ գագաթն է 2 211մ:
Անվանվել է նորվեգացի բարերար *Աքսել Հեյբերգի* պատվին:

Բ

ԲԱԼՍԱՍ - իսպաներեն Río Balsas. գետ Հարավային Մեքսիկայի կենտրոնական մասում: Կազմավորվում է Մեքսիկական բարձրավանդակի հարավում՝ Սան Մարտին և Ջաուապան գետերի միախառնումից, հոսում հարավարևմտյան, ապա արևմտյան ուղղությամբ և Լասարո Կարդենաս քաղաքի մոտ թափվում Խաղաղ օվկիանոս: Վտակներն են՝ Կալդերոն, Կուպատիցյո, Կուցամալա, Դել Մարկես և այլ գետեր: Երկարությունը՝ 771 կմ: Ջրի ծախսը՝ 94 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 112 320 կմ^2:
Վերին հոսանքներում հայտնի է Ամակուզակ, Միկստեկո, Ատոյակ և Մեսկալա անուններով:
Գետի իսպաներեն Balsas անվանումը բառացի նշանակում է *Լաստեր*:

ԲԱԼՔԼԻ - անգլերեն Bulkley River. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի արևմուտքում, **Սկինա** գետի խոշորագույն ձախ վտակը: Սկիզբ է առնում համանուն լճից և հիմնականում հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ Հեյզլտոն բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Մաքսան Քրիկ, **Մորիս**, Տոբոգան Քրիկ, Տելկվա, Սուսկվա և այլ գետեր: Երկարությունը՝ 257 կմ: Ջրի ծախսը՝ 173 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 12 400 կմ^2:
Գետը նախկինում հնդկացիների կողմից կոչվում էր Wet'sinkwha *կապույտ* ու *կանաչ* գետ:
Անվանվել է Ռուս-ամերիկյան հեռագրի շինարարության ղեկավար *Չառլզ Բալքլիի* պատվին:

ԲԱՀԱՄԱԿԱՆ ՀԻՆ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Canal Viejo de Bahama, անգլերեն Old Bahama Channel. նեղուց **Կուբայի** հյուսիսարևելյան ափերի մոտ՝ **Կուբայի** և **Լուկայան** կղզիների միջև: Երկարությունը՝ 161 կմ, լայնությունը՝ 24 կմ:
Անվանումը ստացել է *Բահամաներ* երկրից:

ԲԱՅԼՈԹ - անգլերեն Bylot Island, ֆրանսերեն Île Bylot. կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Երկարությունը՝ 182 կմ, լայնությունը՝ 110 կմ: Մակերեսը՝ 11 067 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 579 կմ: Բարձր կետը Անգիլաակ գագաթն է 1 951 մ:
Անվանվել է 1616թ-ին կղզին հայտնաբերած բրիտանացի հետազոտող *Ռոբերտ Բայլոթի* պատվին:

ԲԱՍԱՍԵԱՉԻ - իսպաներեն Cascada de Basaseachi. ջրվեժ Մեքսիկայում, Սյեռա Մադրե լեռներում, համանուն գետի վրա: Անկման բարձրությունը՝ 246 մ:
Հավանական է, որ անվանումը հնդկացիական ռարամուրի լեզվից թարգմանաբար նշանակում է *կոյոտների* կամ *ջրվեժի վայր* :

ԲԱՏԱԲԱՆՈ - իսպաներեն Golfo de Batabanó. **Կարիբյան** ծովի ծոց **Կուբայի** հարավարևմտյան ափերին: Երկարությունը՝ 130 կմ, լայնությունը՝ 80 կմ: Միջին խորությունը՝ 6,5 մ, առավելագույնը՝ 61 մ: Ծոցում է տեղակայված շուրջ 350 կղզիներից և կղզյակներից կազմված Լոս Կանառեոս կղզեխումբը: Ծոցն է թափվում Մայաբեկե գետը:
Ըստ պատմաբանների այժմյան Բատաբանո անվանումը նախկինում հնդկացիների կողմից ծոցին տված *Մատամանո* անվան աղճատման արդյունք է:

ԲԱՏԵՐՍԹ - անգլերեն Bathurst Island, ֆրանսերեն Île Bathurst. կղզի **Եղիսաբեթ թագուհու** կղզիների կազմում: Երկարությունը՝ 188 կմ, լայնությունը՝ մինչև 151 կմ: Մակերեսը՝ 16 042 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 2 069 կմ: Բարձր կետը Սթոքս գագաթն է 413 մ:
Անվանվել է 1819թ-ին անգլիացի ծովագնաց Ուիլյամ Փարրիի կողմից բրիտանացի քաղաքական գործիչ *Հենրի Բատերսթ, Բատերսթ 3-րդ կոմսի* պատվին:

ԲԱՖՖԻՆԻ ԵՐԿԻՐ - անգլերեն Baffin Island, ֆրանսերեն Île de Baffin, ինուկտիտուտ ᕿᑭᖅᑖᓗᒃ / Qikiqtaaluk. կղզի Կանադայում, Նունավուտ վարչական տարածքում:
Կանադայի խոշորագույն կղզին: Մակերեսը՝ 507 451 կմ^2: Բարձր կետը Օդին գագաթն է 2 147 մ:
Անվանվել է բրիտանացի ծովագնաց *Ուիլյամ Բաֆֆինի* պատվին:

ԲԱՖՖԻՆԻ ԾՈՎ - անգլերեն Baffin Bay, ֆրանսերեն Baie de Baffin, ինուկտիկուտ Saknirutiak Imanga, գրենլանդերեն Avannaata Imaa. ծով Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: Սահմանակից է Ատլանտյան օվկիանոսի **Լաբրադոր** ծովին և ողողում է **Գրենլանդիա** կղզու արևմտյան ափը: Երկարությունը՝ 1 450 կմ, լայնությունը՝ 110-650 կմ: Միջին խորությունը՝ 861 մ, առավելագույնը՝ 2 136 մ: Մակերեսը՝ 689 000 կմ^2: Ծավալը՝ մոտ 593 200 կմ^3:
Անվանվել է բրիտանացի ծովագնաց *Ուիլյամ Բաֆֆինի* պատվին:
Հայտնի է նաև *Բաֆֆինի ծոց* անվամբ:

ԲԵԱՐ - անգլերեն Mount Bear. բարձրադիր սառցային պիկ Ալյասկայում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Լեռան հարավարևմտյան լանջերից է սկիզբ առնում Բառնարդ, իսկ հյուսիսային լանջերից՝ Կլուտլան սառցադաշտերը: Բացարձակ բարձրությունը՝ 4 520 մ, հարաբերականը՝ 1 540 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Արջ*:

ԲԵԼ - անգլերեն Bell Peninsula, ֆրանսերեն Péninsule Bell, ինուկտիկուտ Kingngailap Nunanga. թերակղզի Կանադայում՝ **Կանադական Արկտիկական** կղզեխմբի **Սաութհեմփտոն** կղզու հարավարևելյան մասում: Բարձր կետը Մինտո (Քոնիկալ Հիլ) գագաթն է 213 մ: Մինչև 1910 թ. համարվում էր կղզի:
Անվանվել է հետազոտող և Հադսոնի Ծոցի Ընկերության կառավարիչ *Ջոն Բելի* պատվին:

ԲԵԼՉԵՐ - անգլերեն Belcher Islands, ֆրանսերեն Îles Belcher, ինուիտերեն Sanikiluaq. կղզիներ Կանադայում՝ **Հադսոնի** ծոցի հարավարևելյան մասում: Կղզիների քանակը՝ մոտ 1 500, որոնց ընդհանուր մակերեսը 2 896 կմ^2 է: Բարձր կետը՝ 155մ: Կղզեխումբը կազմված է 4 խմբերից՝ Հյուսիսային Բելչեր (Ջոնսոն, Լեդդի, Սլինիտ), Բեյքերս Դոզեն, Արևելյան Բելչեր և Ֆլայերթի: Խոշոր կղզիներն են՝ Ֆլայերթի, Կուգոնգ, Տուկարակ, Ինետալինգ և այլն:
Անվանվել է անգլիացի աշխարհագրագետ, ճանապարհորդ և բևեռախույզ, ծովակալ *սըր Էդուարդ Բելչերի* պատվին:

ԲԵՆՔՍ - անգլերեն Banks Island, ֆրանսերեն Île Banks. կղզի, **Կանադական Արկտիկական** կղզեխմբի խոշոր կղզիներից մեկը: Երկարությունը՝ 380 կմ, լայնությունը՝ 290 կմ: Մակերեսը՝ 70 028 կմ^2: Բարձր գագաթը Դարհամ բարձունքն է 732 մ: Խոշոր գետերն են Տոմսեն, Բիգ, Բեռնարդ և այլն:
Անվանվել է 1820թ-ին սըր Ուիլյամ Փարրիի կողմից անգլիացի բնագետ և բուսաբան, Թագավորական Ընկերության նախագահ *սըր Ջոզեֆ Բենքսի* պատվին:

ԲԵՐՄՈՒԴԱՆԵՐ - անգլերեն Bermuda, իսպաներեն Bermudas. մարջանե կղզիներ և խութեր, Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևմտյան մասում՝ Միացյալ Թագավորության անդրծովյան տարածք: Կղզիների քանակը՝ 158, ընդհանուր մակերեսը՝ 53,2 կմ^2: Ափագծի երկարությունը 103 կմ: Բարձր կետը՝ Թաուն Հիլ 79 մ: Խոշորագույն կղզին է Մեյնը:
Կղզիները 1503 թ-ին հայտնաբերվել են իսպանացի ծովագնաց *Խուան Բերմուդեսի* կողմից և ստացել իր անունը:

ԲԼԱՆԿԱ ՊԻԿ - անգլերեն Blanca Peak, նավախո Sisnaajiní. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, ***Ժայռոտ*** լեռների Սյեռա Բլանկա լեռնազանգվածի Սանգրե դե Կրիստո լեռնաշղթայի ամենաբարձր կետը: Լեռը վեր է խոյանում Սան Լուիս հովտի արևմտյան մասում: Նրա արևմտյան լանջերից է սկիզբ առնում Հոլբրուք Քրիկ գետը: Լեռան վրա են տեղակայված մի շարք լճեր՝ Երկնագույն լճերը, Կրատերը և Կոմոն: Բացարձակ բարձրությունը՝ 4 374 մ, հարաբերականը՝ 1 623 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սպիտակ Պիկ* :
Լեռան Sisnaajiní անվանումը նավախո լեզվից թարգմանաբար նշանակում է *Արևելքի Սուրբ լեռ* :

ԲԼԵՔԲԵՌՆ - անգլերեն Mount Blackburn. երկգագաթ հանգած վահանաձև հրաբուխ Ալյասկայում՝ **Վրանգելի** լեռների կենտրոնական մասում, Սուրբ Եղիա ազգային պարկում: Լեռնազանգվածը գրեթե ամբողջությամբ ծածկված է սառցադաշտերով և համարվում է Կենիկոտ սառցադաշտի հիմնական սնման աղբյուրը: Լեռն իր մեծ լուման է ներդնում նաև Նաբեսնա և Կուսկուլանա սառցադաշտերի սնուցման գործում: Բացարձակ բարձրությունը՝ 4 996 մ:
Անվանվել է 1885թ-ին լեյտենանտ Հ. Ալենի կողմից ԱՄՆ-ի Կենտուկի նահանգից սենատոր *Ջոզեֆ Քլեյ Սթայլզ Բլեքբեռնի* պատվին:

ԲԼՅՈՒ ՄԱՈՒՆԹԻՆ ՊԻԿ - անգլերեն Blue Mountain Peak. լեռ **Վեստ Ինդիայում**, **Ջամայկա** կղզու ամենաբարձր կետը: Բարձրությունը՝ 2 256 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Կապույտ լեռան պիկ* :
Հայտնի է նաև իր իսպաներեն *Պիկո Մոնտանյա Ազուլ* անվամբ:

ԲՈՆԱ - անգլերեն Mount Bona. հանգած ստրատոհրաբուխ ԱՄՆ-ում, Ալյասկայի հարավ-արևելքում, Յուկոն վարչական տարածքից ոչ հեռու: Այն համարվում է ԱՄՆ-ի ամենաբարձր հրաբուխը: Բացարձակ բարձրությունը՝ 5 040 մ, հարաբերականը՝ 2 068մ: Հրաբուխը գրեթե ամբողջությամբ ծածկված է սառցադաշտերով ու սառույցներով և համարվում է Կլուտլան սառցադաշտին սառույցով հիմնական մատակարարը: Լեռը միաժամանակ մեծ քանակի սառույց է մատակարարում Ռասսելի սառցադաշտերի հյուսիսային համակարգին:
Անվանվել է 1897թ-ին իտալացի դուքս Լուիջի Ամեդեու Աբրուցիի կողմից իր *«Բոնա»* վազքամակույկի անվամբ:

ԲՈՉԱՐՈՎ - անգլերեն Becharof Lake. լիճ ԱՄՆ-ում, Ալյասկա նահանգում: Երկարությունը մինչև 60 կմ, լայնությունը մինչև 24 կմ: Մակերեսը՝ 1 170 կմ^2:
Հայտնի է նաև Ուգաշեկ անվամբ:
1868թ-ին անվանվել է ամերիկացի բնագետ Ուիլյամ Հեյլի Դոլի կողմից XVIII-րդ դարի ռուս հետազոտող և «Տրի Սվյատիտելյա» նավի ղեկապետ *Դմիտրի Իվանովիչ Բոչարովի* պատվին:

ԲՈՐԴԵՆ - անգլերեն Borden Peninsula, ֆրանսերեն Péninsule Borden. թերակղզի Կանադայում՝ **Բաֆֆինի երկիր** կղզու հյուսիսային մասում: Ողողվում է հյուսիսից՝ Լանկաստեր նեղուցի, արևմուտքից՝ Ծովակալության, իսկ արևելքից՝ Ծովակալության Խորհրդի ծովախորշերի ջրերով: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 64-169 կմ: Այստեղ են գտնվում Հարց լեռները (մինչև 914 մ բարձրությամբ):
Անվանվել է կանադացի քաղաքական գործիչ և իրավաբան *սըր Ռոբերտ Լերդ Բորդենի* պատվին:

ԲՈՖՈՐՏԻ ԾՈՎ - անգլերեն Beaufort Sea, ֆրանսերեն Mer de Beaufort. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծով: Ողողում է Կանադայի հյուսիսարևմտյան և Ալյասկայի հյուսիսային ափերը: Միջին խորությունը՝ 1 004 մ, առավելագույնը՝ 4 683 մ: Երկարությունը՝ 1 140 կմ, լայնությունը՝ 700 կմ: Մակերեսը՝ 478 000 կմ^2: Ծավալը՝ 479 912 կմ^3:
Անվանվել է 1826թ-ին բեւեռախույզ Ջոն Ֆրանկլինի կողմից, բրիտանացի ջրագիր և դեր-ծովակալ*սը Ֆրենսիս Բոֆորտի* պատվին:

ԲՐՈՒՔՍ - անգլերեն Brooks Range, ֆրանսերեն Chaîne Brooks, գվիչին Gwazhał. անդրբևեռային լեռնաշղթա Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևմուտքում՝ Ալյասկայում: Ձգվում է արևմուտքից արևելք 1 192 կմ երկարությամբ և մինչև 535 կմ լայնությամբ: Լեռների բարձր կետը Իստո գագաթն է 2 735,6 մ: Հայտնի են նաև Հաբլի (2 717մ), Չեմբեռլեն (2 712,3մ), Մայքլսոն (2 699մ) և այլ գագաթներ:
Անվանվել է ամերիկացի երկրաբան*Ալֆրեդ Հալզ Բրուքսի* պատվին:

ԲՈՒԹԻԱ - անգլերեն Gulf of Boothia, ֆրանսերեն Golfe de Boothia. **Բութիա** թերակղզու և **Բաֆֆինի երկիր** կղզու միջև ընկած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց: Լայնությունը՝ 220 կմ: Ափագծի երկարությունը՝ 518 կմ:
Անվանվել է բևեռախույզ Ջոն Ռոսի կողմից, իր արշավախումբը հովանավորած լոնդոնյան մեծահարուստ և խմիչքներ արտադրող *Ֆելիքս Բութի* պատվին:

ԲՈՒԹԻԱ - անգլերեն Boothia Peninsula, ֆրանսերեն Péninsule Boothia, ինուկտիկուտ Kingngailap Nunanga. թերակղզի Կանադական Արկտիկայում **Սոմերսեթ** կղզուց հարավ: Երկարությունը՝ 525 կմ, լայնությունը՝ 199 կմ: Մակերեսը՝ 32 300 կմ^2:
Նախկինում հայտնի էր Բութիա Ֆելիքս անունով:
Անվանվել է 1829 թ-ին բևեռախույզ Ջոն Ռոսի կողմից, իր երկրորդ արշավախումբը հովանավորած լոնդոնյան մեծահարուստ և խմիչքներ արտադրող *Ֆելիքս Բութի* պատվին:

Գ

ԳԱՍՊԵ - ֆրանսերեն Gaspésie, անգլերեն Gaspé Peninsula. խոշոր թերակղզի Կանադայում՝ Քվեբեկ պրովինցիայի արևելյան մասում: Երկարությունը շուրջ 200 կմ: Մակերեսը՝ 31 075,36 կմ^2: Բարձր կետը Ժակ Կարտյե գագաթն է 1 268 մ:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական միկմակ լեզվի gespe'g *վերջ* բառը, որով ակնարկվում է բնակելի երկրի վերջը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը բասկերեն geizpe *ապաստան* բառի ձևափոխման արդյունք է:

ԳՎԱԴԵԼՈՒՊ - ֆրանսերեն Guadeloupe, կրեոլերեն Gwadloup, կարաիբերեն Guadeloupe. կղզի **Կարիբյան** ծովի արևելյան մասում: Մակերեսը՝ 1 628 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 306 կմ: Բարձր կետը **Սուֆրիեր** հրաբուխն է 1 467 մ:
1493թ-ի նոյեմբերի 4-ին Քրիստափոր Կոլումբոսը հայտնաբերել է կղզին և այն անվանել ի պատիվ իսպանական հռչակավոր Santa María de Guadalupe de Extremadura վանքի:

ԳՐԵՀԵՄ - անգլերեն Graham Island, ֆրանսերեն Île Graham. կղզի Կանադայում, **Հայդա Գուայ** կղզեխմբի խոշորագույն կղզին: Երկարությունը ավելի քան 300 կմ, լայնությունը՝ 102 կմ: Մակերեսը՝ 6 361 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 106 կմ: Բարձր կետը Մորսբի գագաթն է 1 164 մ:
Անվանվել է 1853թ-ին բրիտանացի ծովակալ Ջեյմս Չառլզ Պրևոյի կողմից պետական գործիչ *սըր Ջեյմ Ռոբերտ Ջորջ Գրեհեմի* պատվին:

ԳՐԵՅՍ ՊԻԿ - անգլերեն Grays Peak. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռներում՝ Արապահո Ազգային Անտառում: Բացարձակ բարձրությունը՝ 4 352 մ, հարաբերականը՝ 844 մ:
Անվանվել է 1861թ-ին բուսաբան Չ. Կ. Փարրիի կողմից իր ընկերոջ՝ բուսաբան *Էյզա Գրեյի* պատվին:

ԳՐԵՆԼԱՆԴԱԿԱՆ ԾՈՎ - դանիերեն Grønlandshavet, նորվեգերեն Grønlandshavet. **Գրենլանդիայի**, Իսլանդիայի, Սվալբարդի և Յան Մայեն կղզիների միջև ընկած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի մասը: Միջին խորությունը՝ 1 444 մ, առավելագույնը՝ 5 608մ: Երկարությունը՝ 1 100 կմ, լայնությունը՝ 1 080 կմ: Մակերեսը՝ 1 205 000 կմ^2: Ծավալը՝ 1 740 020 կմ^3:
Անվանումը ստացել է *Գրենլանդիա* կղզուց:

ԳՐԵՆԼԱՆԴԱԿԱՆ ՍԱՌՑԵ ՎԱՀԱՆ - գրենլանդերեն Sermersuaq, դանիերեն Grønlands indlandsis. աշխարհում իր չափերով Անտարկտիկականից հետո 2-րդ սառցե վահանը, **Գրենլանդիայում**: Երկարությունը՝ 2 530 կմ, առավելագույն լայնությունը 1 094 կմ: Մակերեսը՝ 1 726 400 կմ^2: Սառույցի առավելագույն հաստությունը՝ 3 366,5 մ, միջին հաստությունը՝ 2 135 մ: Սառույցի ծավալը 3 685 864 կմ^3:

ԳՐԵՆԼԱՆԴԻԱ - գրենլանդերեն Kalaallit Nunaat, դանիերեն Grønland. կղզի Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևելքում: Ողողվում է Ատլանտյան և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսներով: Աշխարհի խոշորագույն կղզին է: Ծածկված է շուրջ 3 685 864 կմ^3 սառույցով: Երկարությունը՝ 2 670 կմ, լայնությունը՝ մինչև 1 050 կմ: Մակերեսը՝ 2 166 086 կմ^2: Բարձր կետը Գունբյոռն սառցագմբեթն է 3 694 մ:
Անվանումը սկանդինավյան լեզուներից թարգմանաբար նշանակում է *Կանաչ երկիր* :

ԳՐԻԽԱԼՎԱ - իսպաներեն Río Grijalva. գետ Գվատեմալայում և Մեքսիկայի հարավ-արևելքում: Սկիզբ է առնում Գվատեմալայի Կուչումատանես լեռներից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ մինչև Նեսաուալկոյոտլ ջրամբար, ապա փոխելով ուղղությունը հյուսիսարևելյանի՝ թափվում Կամպեչե ծոցը: Երկարությունը՝ 600 կմ: Ջրի ծախսը՝ 2 750 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 51 569 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Տաբասկո* , իսկ այժմ նաև *Մեսկալապա* անվամբ:
Գետն անվանվել է իսպանացի ճանապարհորդ և զավթիչ *Խուան դե Գրիխալվայի* պատվին, ով այն հայտնաբերել է 1518 թ-ի հունիսի 8-ին:

ԳՈՒԱՆԱՀԱԿԱԲԻԲԵՍ - իսպաներեն Península de Guanahacabibes. թերակղզի **Կուբա** կղզու ծայր արևմտյան մասում: Ողողվում է հյուսիսից Գուադիանա ծոցի, արևմուտքից՝ **Յուկատանի** նեղուցի, հարավից՝ Կոռյենտես ծովախորշի ու **Կարիբյան** ծովի և արևելքից՝ Կոռտես ծովախորշի ջրերով: Մակերեսը՝ 1 200 կմ^2: Այստեղ է գտնվում Կուբայի արևմտյան ծայրակետը՝ Սան Անտոնյո հրվանդանը:

Անվանումը ստացել է ժամանակին այստեղ բնակվող հնդկացիական *գուանախատաբեյես* ցեղի անվան աղճատումից:

Դ

ԴԱՆԻԱԿԱՆ ՆԵՂՈՒՑ - դանիերեն Danmarksstrædet, իսլանդերեն Grænlandssund. նեղուց **Գրենլանդիա** և Իսլանդիա կղզիների միջև: Իրար է միացնում Ատլանտյան օվկիանոսը **Գրենլանդական** ծովի հետ: Երկարությունը մինչև 480 կմ, լայնությունը մինչև 289 կմ: Առավելագույն խորությունը՝ 650 մ:
Անվանումը ստացել է *Դանիա* պետությունից:
Հայտնի է նաև *Գրենլանդական նեղուց* անվամբ:

ԴԱՐՅԵՆԻ ԾՈՑ - իսպաներեն Golfo de Darién. ծոց **Կարիբյան** ծովի հարավարևմտյան մասում, Պանամայում և Կոլումբիայում: Ծոցի մասը կազմող Ուրաբա ծոցը իր մեջ է ընդունում Ատրատո գետի ջրերը: Առավելագույն խորությունը ավելի քան 2000 մ է: Երկարությունը՝ 165 կմ:
Անվանումն առաջացել է հնդկացիական կուևա ցեղի Ատրատո գետին տրված *Տանել* կամ *Տանելա* անվան իսպանացիների կողմից աղավաղելու արդյունքում:

ԴԵ ՄՈՅՆ - անգլերեն Des Moines River, ֆրանսերեն Des Moines. գետ ԱՄՆ-ում, Միսիսիպիի աջ վտակը: Սկիզբ է առնում Մինեսոտա նահանգի Շետեկ լճից և Այովա նահանգում թափվում **Միսիսիպի** գետը: Երկարությունը՝ 845 կմ: Ջրի ծախսը՝ 246 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 38 337 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Ռիո դես Օտենտաս, Կեոշաուկուա, Ինյան Շաշա, Էաշավապատա, Լը Մոինգոնա* և այլ անուններով:
Հայտնի է, որ նախկինում ֆրանսիացի հետազոտողները գետն անվանում էին La Rivière des Moines *Վանականների գետ* անվամբ, որը հետագայում կրճատվելով ստացավ այժմյան ձևը:

ԴԵԼԱՎԵՐ - անգլերեն Delaware River. գետ ԱՄՆ-ում, Փենսիլվանիա, Նյու Յորք, Նյու Ջերսի և Դելավեր նահանգներում: Կազմավորվում է Արևմտյան և Արևելյան Բրենչ Դելավերներ գետերի միախառնումից և թափվում համանուն ծոցը: Երկարությունը՝ 579 կմ: Ջրի ծախսը՝ 371 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 36 568 կմ^2:
Անվանվել է անգլիացի ազնվական *Թոմաս Ուեսթ, 3-րդ (12-րդ) Դե Լա Վեր բարոնի* պատվին:

ԴԵՅՎԻՍԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Davis Strait, ֆրանսերեն Détroit de Davis, դանիերեն Davisstrædet. նեղուց **Գրենլանդիա** և **Բաֆֆինի երկիր** կղզիների միջև: Լայնությունը՝ 338-644 կմ: Երկարությունը՝ 700-1 070 կմ: Առավելագույն խորությունը՝ 3 660 մ, միջինը՝ 104 մ:
Անվանվել է անգլիացի ծովագնաց *Ջոն Դեյվիսի* պատվին:

ԴԵՆԱԼԻ - անգլերեն Denali, տլինգիտ Dinale / Denali. երկգագաթ լեռ Ալյասկայի կենտրոնական մասի հարավում, Հյուսիսային Ամերիկայի ամենաբարձր կետը: Բարձրությունը՝ 6 190 մ, հարաբերականը՝ 6 135 մ:
Նախկինում հայտնի էր *Բոլշայա Գորա, ՄկՔինլի* անուններով:

2015 թ-ի օգոստոսի 28-ին վերանվանվել է Դենալի, որը հնդկացիական աթաբասկերեն լեզուներից թարգմանաբար նշանակում է *Մեծ* :

ԴԵՎՈՆ - անգլերեն Devon Island, ֆրանսերեն Île Devon, ինուկտիտուտ Tatlurutit. կղզի **Եղիսաբեթ թագուհու** կղզիների կազմում: Խոշորագույն անմարդաբնակ կղզին աշխարհում: Երկարությունը՝ 524 կմ, լայնությունը՝ 476 կմ: Մակերեսը՝ 55 247 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 3 589 կմ: Բարձր կետը Դևոն Այս Կապ գագաթն է 1 920 մ:
Անվանվել է 1819թ-ին անգլիացի ծովագնաց Ուիլյամ Փարրիի կողմից, Միացյալ Թագավորության *Դևոն* կոմսության պատվին:

ԴԻՆ - անգլերեն Dean River. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի արևմտյան մասում: Սկիզբ է առնում Նեչակո սարավանդից և թափվում Դին ծովախորշը: Վտակներն են՝ Իլտասյուկո, Տակիա, Նուսկուլա Քրիկ գետերը: Երկարությունը՝ 260 կմ: Ջրահավաք ավազանը՝ 8 752 կմ^2:
1927թ-ին անունը ստացել է համանուն ծովախորշից, որն իր հերթին, 1793թ-ին բրիտանացի ծովագնաց Ջորջ Վանկուվերի կողմից անվանվել է Ռաֆո մայրավանքի, այդ ժամանակվա դեկան (անգլ. dean) *հայր Ջեյմս Քինգի* պատվին:

ԴԻՔՍՈՆ ԷՆԹՐԱՆՍ - անգլերեն Dixon Entrance, ֆրանսերեն Entrée Dixon. նեղուց Խաղաղ օվկիանոսի հյուսիսարևելյան մասում, ԱՄՆ-ում և Կանադայում: Իրարից բաժանում է **Հայդա Գուայ** կղզիները **Ալեքսանդրի** կղզեխմբից և Խաղաղ օվկիանոսի հետ է միացնում Հեկատե և Քլարենս նեղուցները: Երկարությունը՝ 80 կմ, լայնությունը՝ 80 կմ: Նախկինում հայտնի էր *Միգել* անվամբ:
Անվանվել է 1788 թ-ին Ջոզեֆ Բենքսի կողմից, բրիտանական նավատորմի սպա և հետազոտող *Ջորջ Դիքսոնի* պատվին:

ԴՈՒԱՐՏԵ ՊԻԿ - իսպաներեն Pico Duarte. լեռ Դոմինիկանայում, Կորդիլյեռա Սենտրալ լեռնաշղթայում: Բարձրությունը՝ 3 098 մ:
Անվանվել է Դոմինիկանայի քաղաքական գործիչ և ազգային ազատագրական պայքարի հերոս *Խուան Պաբլո Դուարտեի* պատվին:
Հայտնի է նաև *Պիլոնա Գրանդե, Մոնտե Տինա, Պիկ Տռուխիլյո* անուններով:

ԴՈՒԲՈՆԹ - անգլերեն Dubawnt Lake, ֆրանսերեն Lac Dubawnt, չիպևյան Tobotua. լիճ Կանադայում՝ Նունավուտ վարչական տարածքում: Երկարությունը՝ մինչև 109 կմ, լայնությունը՝ մինչև 68 կմ: Մակերեսը՝ 3 833 կմ^2, հայելու մակերեսի բարձրությունը՝ 236 մ: Լիճն է թափվում և արտահոսում համանուն Դուբոնթ գետը: Լճում կան բազմաթիվ կղզիներ:
Անունը լճի չիպևյան Tobotua անվան հնչյունանափոխության արդյունք է և բառացի նշանակում է *Ջրի եզր*:

Ե

ԵԼ - անգլերեն Mount Yale. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայի Կոլեգիալ Պիկերի ամենաբարձր գագաթը: Բացարձակ բարձրությունը՝ 4 328.2 մ, հարաբերականը՝ 578 մ:
Լեռն անվանվել է *Ելի* համալսարանի պատվին:

ԵԼՈՈՒՍՏՈՆ - անգլերեն Yellowstone River, ֆրանսերեն Yellowstone, հիդացա Mi tse a-da-zi. գետ ԱՄՆ-ի հյուսիս-արևմուտքում, **Միսուրիի** աջ վտակը: Սկիզբ է առնում Վայոմինգ նահանգի Աբսարոկա լեռնաշղթայից և Հյուսիսային Դակոտա նահանգի ՄկՔենզի շրջանում թափվում մայր գետը: Վտակներն են՝ Գարդներ, Շիլդս, Լամար, Բիգ Հոռն, Տոնգ, Փաուդեր և այլ գետեր: Երկարությունը՝ 1 114 կմ : Ջրի ծախսը՝ 390 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 181 299 կմ^2: Նախկինում հայտնի էր Նիսիս ա Դազի, Վապիտի, Ռոշժոն անուններով:
Այժմյան անգլերեն Yellowstone *Դեղնաքարային* անվանումն առաջացել է գետի նախկինում ֆրանսերեն Roche Jaune *Դեղին ժայռ* անվան անգլերեն պատճենումից:

ԵՂԻՍԱԲԵԹ ԹԱԳՈՒՀՈՒ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Queen Elizabeth Islands, ֆրանսերեն Îles de la Reine-Élisabeth. կղզիներ **Կանադական Արկտիկական** կղզեխմբի հյուսիսային մասում: Կղզիների քանակը 2 126 է, որոնց ընդհանուր մակերեսը՝ 419 061կմ^2: Բարձր կետը՝ Մոն Բարբյո գագաթն է 2 616 մ **Էլսմիր** կղզում: Խոշոր կղզիներն են՝ **Էլսմիր**, **Դեվոն**, **Մելվիլ**, **Բատերսթ**, **Էլլեֆ Ռինգնես**, **Ամունդ Ռինգնես** և այլն:
Նախկինում հայտնի էր Փարրի կղզիներ անվամբ, որն այժմ օգտագործվում է միայն կղզեխմբի հարավարևմտյան մասի համար:
1953թ-ին վերանվանվել են *Եղիսաբեթ II թագուհու* Կանադայի թագուհի թագադրման առթիվ:

ԵՂՋԵՐՎԻ ԼԻՃ - անգլերեն Reindeer Lake, ֆրանսերեն Lac Reindeer. լիճ Կանադայի կենտրոնական մասում, Սասկաչևան և Մանիտոբա պրովինցիաների սահմանին: Երկարությունը մինչև 233 կմ, լայնությունը մինչև 60 կմ: Մակերեսը՝ 5 658 կմ^2: Միջին խորությունը՝ 17 մ, առավելագույնը՝ 219 մ: Ծավալը՝ 96,2 կմ^3, հայելու մակերեսի բարձրությունը՝ 336,4 մ (2019թ.): Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 62 600 կմ^2: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ 3 394 կմ: Լճից արտահոսում է Ռեյնդիր գետը:
Անվանումը լճի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:
Հայտնի է նաև *Կարիբու* անվամբ:

Է

ԷԼԲԵՐԹ - անգլերեն Mount Elbert. լեռ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում, **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 401.2 մ, հարաբերականը՝ 2 772 մ:
Անվանվել է 1874 թ-ին Հենրի Ու. Շտուկլի կողմից, Կոլորադոյի այդ ժամանակվա նահանգապետ *Սեմյուել Հիտ Էլբերթի* պատվին:

ԷԼԼԵՖ ՌԻՆԳՆԵՍ - անգլերեն Ellef Ringnes Island, ֆրանսերեն Île Ellef Ringnes. կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում, **Սվերդրուփի** կղզիների կազմում: Երկարությունը՝ 218 կմ, լայնությունը՝ 110 կմ: Մակերեսը՝ 11 295 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 027 կմ: Բարձր կետը Իսակսեն Դոմ գագաթն է 260 մ:
Անվանվել է 1901թ-ին Օտտո Սվերդրուփի կողմից, իր արշավախմբի երկու մեկենաս եղբայրներից կրտսեր՝ *Էլլեֆ Ռիգնեսի* պատվին:

ԷԼՍՄԻՐ - անգլերեն Ellesmere Island, ֆրանսերեն Île d'Ellesmere, ինուկտիտուտ Umingmak Nuna. կղզի **Եղիսաբեթ թագուհու** կղզիների կազմում: Այստեղ է գտնվում

Կանադայի ամենահյուսիսային Կոլումբիա ծայրակետը: Երկարությունը՝ 830 կմ, լայնությունը՝ 645 կմ: Մակերեսը՝ 196 235 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 10 748 կմ: Բարձր կետը Մոն Բարբո գագաթն է 2 616 մ:
Անվանվել է 1852 թ-ին բրիտանացի քաղաքական և հասարակական գործիչ, ճանապարհորդ, գրող և մեկենաս *Ֆրենսիս Էգերտոն, Էլսմիր 1-ին կոմսի* պատվին:
Կղզու ինուկտիտուտ լեզվի Umingmak Nuna անվանումը թարգմանաբար նշանակում է *Խոյացուլի երկիր*:

ԷՆՐԻԿԻԼՅՈ - իսպաներեն Lago Enriquillo. անհոսք, աղի լիճ **Հայիթի** կղզում, Դոմինիկանայի արևմտյան մասում: Երկարությունը մինչև 20 կմ, լայնությունը մինչև 15 կմ: Մակերեսը՝ 375 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 52 մ, հայելու մակերեսի բարձրությունը՝ -42 մ: Լիճն են թափվում 10 փոքր գետակներ, կան մի քանի կղզիներ՝ Բարբարիտա, Իսլիտա և այլն:
Նախկինում հայտնի էր *Կսարագուա* անվամբ:
Անվանվել է հնդկացիական տաինո ցեղի կասիկ *Էնրիկիլյոյի* պատվին:

ԷՎԱՆՍ - անգլերեն Mount Evans. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Առաջավոր լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 350 մ, հարաբերականը՝ 844 մ: Լեռը նախկինում հայտնի էր Ռոզալի անվամբ:
1895թ-ին անվանվել է 1862-65 թթ. Կոլորադոյի նահանգապետ *Ջոն Էվանսի* պատվին:

ԷՐԻ - անգլերեն Lake Erie, ֆրանսերեն Lac Érié, լիճ Կանադայում և ԱՄՆ-ում: Երկարությունը մինչև 388 կմ, լայնությունը մինչև 92 կմ: Մակերեսը՝ 25 667 կմ^2: Միջին խորությունը՝ 19 մ, առավելագույնը՝ 64 մ: Ծավալը՝ 487 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 173 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիների 1 402 կմ է:
Անվանումը տրվել է հնդկացիական էրի ցեղի կողմից, որի ցեղային *էրի* անվանումը իրոկեզերեն erielhonan *երկար պոչ* անվան կրճատ ձևն է:

Թ

ԹԵՆԵՍԻ - անգլերեն Tennessee River, ֆրանսերեն Tennessee. գետ ԱՄՆ-ի արևելքում, **Օհայո** գետի ամենաերկար և ջրառատ վտակը: Կազմավորվում է **Ապալաչների** արևմտյան լանջերից սկիզբ առնող և Նոքսվիլ քաղաքի մոտ միախառնվող Ֆրենչ Բրոդ և Հոլստոն գետերից և հոսելով հարավարևմտյան, ապա հյուսիսարևմտյան և հյուսիսային ուղղություններով, Կենտուկի նահանգի Պադուկա բնակավայրում թափվում մայր գետը: Երկարությունը՝ 1 049 կմ : Ջրի ծախսը՝ 1 998 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 105 868 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Կակինամպո, Կասկի, Կուսատի, Հոգոհեգի, Կալամակո, Ականսիապի* և այլ անուններով:
Այժմյան անվան հիմքում ընկած է հնդկացիական չերոկի ցեղի Tanasi բնակավայրի անունը:

Ժ

ԺԱՅՌՈՏ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Rocky Mountains, ֆրանսերեն Montagnes Rocheuses. **Կորդիլյեռաների** հիմնական լեռնաշղթան ԱՄՆ-ի և Կանադայի արևմուտքում: Ձգվում է ավելի քան 4 830 կմ երկարությամբ և մինչև 700 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 991 691 կմ^2: Լեռների բարձր կետը **Էլբերթ** գագաթն է 4 401,2 մ:
Ժամանակին հայտնի էր նաև Stoney Mountains Քարոտ լեռներ անվամբ:
Ժայռոտ լեռներ անվանումը (ֆր. Montagnes Rocheuses) 1743թ-ի հունվարի 1-ին տվել է ֆրանսիական ծագում ունեցող կանադացի հետազոտող Պիեռ Գոտիե Վառեն դը լա Վերանդրին:

Ի

ԻԼԻԱՄՆԱ - անգլերեն Iliamna Lake, դենայինա Nila Vena, յուպիկ Nanvarpak. լիճ ԱՄՆ-ում, Ալյասկայի հարավում: Երկարությունը՝ մինչև 124 կմ, լայնությունը՝ մինչև 35 կմ: Մակերեսը՝ 2 622 կմ^2: Միջին խորությունը՝ 44 մ, առավելագույնը՝ 301 մ: Ծավալը՝ 115,37 կմ^3, հայելու մակերեսի բարձրությունը 14 մ: Արտահոսում է Կվիչակ գետը:
Նախկինում հայտնի էր նաև *Շելեխովո* և *Մեծ Իլյամնա* անուններով:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական դենայինա լեզվի Nila Vena *Կղզիների լիճ* անունը:

ԻԼԻՆՈՅՍ - անգլերեն Illinois River, մայամի-իլինոյս Inoka Siipiiwi, ֆրանսերեն Illinois. գետ ԱՄՆ-ում, համանուն նահանգում, **Միսիսիպիի** ձախ վտակը: Սկիզբ է առնում Կանկանի և Դե Պլենս գետերի միախառնումից և Գրաֆտոն բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Լը Մոյն, Վերմիլիոն, **Ֆոքս** և այլ գետեր: Երկարությունը՝ 439 կմ: Ջրի ծախսը՝ 659 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 74 479 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական մայամի-իլինոյս լեզվի irenwe·wa *նա խոսում է սովորական ձևով* արտահայտությունից, որը հետագայում ֆրանսիացիների կողմից ձևափոխվելով ստացել է այժմյան տեսքը:

ԻԿԱԿՈՍ - իսպաներեն Península de Hicacos. թերակղզի **Կուբա** կղզու հյուսիսում: Ողողվում է արևմուտքից՝ Կարդենաս ծոցի, իսկ հյուսիսից՝ Նիկոլաս նեղուցի ջրերով: Այստեղ է գտնվում **Կուբայի** հյուսիսային ծայրակետը՝ Իկակոս հրվանդանը: Երկարությունը՝ 18 կմ, լայնությունը՝ 2,5 կմ:
Անվանումն առաջացել է այս վայրերում լայն տարածում ունեցող ոսկե կամ արմավենու սալորի Chrizobalanus icaco տեսակի տեղական *իկակո* անունից:

ԻԿԵՐԱՍԱՍՍՈՒԱԿ - գրենլանդերեն Ikerasassuaq, դանիերեն Prins Christians Sund. նեղուց Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևմտյան մասում՝ **Գրենլանդիայի** հարավում: Իրար է միացնում **Լաբրադոր** և **Իրմինգեր** ծովերը: Երկարությունը՝ 100 կմ, լայնությունը՝ 2.7 կմ:
Ikerasassuaq անվան հիմքում ընկած է մեկ կամ երկու կղզիների ու մայրցամաքի միջև ընկած ջրանցումի կամ նեղուցի գրենլանդերեն ikerasak բառը:
Հայտնի է նաև Արքայազն Քրիստիանի նեղուց անվամբ, ի պատիվ Դանիայի Քրիստիան VIII թագավորի:

ԻՍԱԲԱԼ - իսպաներեն Lago de Izabal. լիճ Գվատեմալայի արևելյան մասում, հյուսիս-արևմուտքում՝ Սանտա Կրուս, իսկ հարավում Մինաս և Իսիդրո լեռներով եզերված իջվածքում: Երկարությունը մինչև 48 կմ, լայնությունը մինչև 22 կմ: Մակերեսը՝ 589,6 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 18 մ: Հայելու մակերեսի բարձրությունը 1,8 մ: Լիճն է թափվում Պոլոչիկ, իսկ արտահոսում՝ Ռիո Դուլսե գետերը:
Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է բասկերեն zabal *լայնություն* բառը:

ԻՍՏԱԿՍԻՈՒԱՏԼ - իսպաներեն Iztaccíhuatl, նաուատլ Iztaccihuatl. քառագագաթ հրաբուխ Մեխիկոյից 70 կմ հարավ-արևելք: Բացարձակ բարձրությունը՝ 5 230 մ, հարաբերականը՝ 1 560 մ:
Անվանումը բաղկացած է նաուատլ լեզվի Iztac-*սպիտակ* և cihuatl-*կին* բառերի միացումից՝ *Սպիտակ կին*:
Լեռը հայտնի է նաև *Իստա* անվամբ:

ԻՐՄԻՆԳԵՐ - դանիերեն Irmingerhavet, իսլանդերեն Irmingerhaf. Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևմտյան մասի եզրային ծով, **Գրենլանդիայի** և Միջինատլանտյան լեռնաշղթայի մաս կազմող Ռեյկյանես ստորջրյա լեռնաշղթայի միջև: Ծովի արևմտյան մասով է անցնում նեղ Արևելագրենլանդական հոսանքը: Միջին խորությունը՝ 2 800 մ, առավելագույնը՝ 4 600 մ: Երկարությունը՝ 480 կմ, լայնությունը՝ 290 կմ: Մակերեսը՝ 780 000 կմ^2: Ծավալը՝ 2 184 000 կմ^3:
Անվանվել է դանիացի ջրագիր, փոխծովակալ *Կառլ Լյուդվիգ Կրիստիան Իրմինգերի* պատվին:

Լ

ԼԱ ՄԱԼԻՆՉԵ - իսպաներեն La Malinche, նաուատլ Matlalcueitl. հանգած հրաբուխ Կենտրոնական Մեքսիկայի հարավային մասում, **Արևելյան Սյեռա Մադրե** լեռնահամակարգում: Վերջին անգամ ժայթքել է մ.թ.ա. 1170 թ-ին: Բացարձակ բարձրությունը՝ 4 461 մ, հարաբերականը՝ 1 920 մ:
Անվանվել է Էռնան Կորտեսի թարգմանչուհի և հարճ *Մալինչեի* պատվին, ում իսպանացիները անվանում էին նաև Դոնյա Մարինա:
Հրաբխի նաուատլ լեզվի Matlalcueitl անվանումը թարգմանաբար նշանակում է *Կապույտ շրջազգեստ*:

ԼԱ ՊԼԱՏԱ ՊԻԿ - անգլերեն La Plata Peak. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 372 մ, հարաբերականը՝ 560 մ:
Անվանումն առաջացել է իսպաներեն la Plata *Արծաթ* բառից, որը պայմանավորված է այս վայրերում արծաթի բազմաթիվ հանքավայրերի առկայությամբ:

ԼԱ ՍԵԼ ՊԻԿ - ֆրանսերեն Pic la Selle, հայիթյան կրեոլերեն Pik Lasel. լեռ **Հայիթիի** հարավ-արևելքում, Սել լեռնազանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 2 674 մ, հարաբերականը՝ 2 644 մ: Այստեղից են սկիզբ առնում Բլանշ, Գրիզ և այլ գետեր:
Անվան հիմքում ընկած է ֆրանսերեն selle *թամբ* բառը:

ԼԱԲՐԱԴՈՐ - անգլերեն Labrador Sea, ֆրանսերեն Mer du Labrador, դանիերեն Labradorhavet. Ատլանտյան օվկիանոսի ծով **Լաբրադոր** թերակղզու, **Նյուֆաունդլենդ**

կղզու և **Գրենլանդիայի** միջև: Ողողում է Կանադայի հյուսիսարևելյան և **Գրենլանդիայի** հարավարևմտյան ափերը: Միջին խորությունը՝ 1 898 մ, առավելագույնը՝ 4 316 մ: Երկարությունը՝ մոտ 1 000 կմ, լայնությունը՝ մոտ 900 կմ: Մակերեսը՝ 841 000 կմ^2: Ծավալը՝ 1 596 218 կմ^3:
Անվանումը ստացել է պորտուգալացի նավագնաց և հետազոտող *Ժոան Ֆերնանդիշ Լավրադորի* պատվին:

ԼԱԲՐԱԴՈՐ - անգլերեն Labrador Peninsula, ֆրանսերեն Péninsule du Québec-Labrador. թերակղզի Կանադայի արևելքում: Ողողվում է արևելքում Ատլանտյան օվկիանոսի, հարավում՝ **Սուրբ Լավրենտիոսի** ծոցի, հյուսիսում՝ **Հադսոնի** նեղուցի և արևմուտքում՝ **Հադսոնի** ծոցի ջրերով: Մակերեսը մոտ 1 400 000 կմ^2: Բարձր կետը Դ'Իբեռվիլ (Կոբվիկ) գագաթն է 1 652 մ: Այստեղով են հոսում բազմաթիվ գետեր՝ Չերչիլ, Առնո, Լա Գրանդ, Ջորջ, Բալեն և այլն: Թերակղզու տարածքում կան բազմաթիվ լճեր՝ **Միստասինի**, Սմոլվուդ, Բեռտե, Բյենվիլ, Լը Մոյն և այլն:
Անվանումը ստացել է պորտուգալացի նավագնաց և հետազոտող *Ժոան Ֆերնանդիշ Լավրադորի* պատվին:

ԼԱՎՐԵՆՏՅԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՅՐ - անգլերեն Laurentian Upland, ֆրանսերեն Hautes terres laurentiennes. բարձրավայր Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևելքում, Կանադայում և ԱՄՆ-ում: Մակերեսը՝ մոտ 5 000 000 կմ^2: Հարավ-արևելքում սահմանակից է **Ապալաչներին**, հարավ-արևմուտքում՝ **Մեծ Հարթավայրերին**, արևմուտքում՝ Մկ Քենզիի ցածրավայրին, հյուսիսում՝ **Հադսոնի** ծոցին: Հյուսիսում և հյուսիս-արևելքում հարում է Հյուսիսային սառուցյալ և Ատլանտյան օվկիանոսներին: Բարձր կետը Տոռնգատ գագաթն է 1 621մ:
Անվանվել է *Սուրբ Լավրենտիոսի* պատվին:

ԼԱՎՐԵՆՏՅԱՆ ԼԵՌՆԵՐ - ֆրանսերեն Laurentides, անգլերեն Laurentian Mountains. լեռնազանգված Կանադայում՝ Քվեբեկ պրովինցիայի հարավում: Ձգվում է ավելի քան 430 կմ երկարությամբ և մինչև 739 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 182 700 կմ^2: Լեռների բարձր կետը Ռաուլ Բլանշար գագաթն է 1 149 մ: Կազմում է **Լավրենտյան** բարձրավայրի մասը:
1845թ-ին անվանվել է պատմաբան Ֆրանսուա-Քսավյե Գառնոյի կողմից, *Սուրբ Լավրենտիոսի* պատվին:

ԼԵՄՊԱ - իսպաներեն Río Lempa. գետ Կենտրոնական Ամերիկայում՝ Գվատեմալայում, Հոնդուրասում և Սալվադորում: Սկիզբ է առնում Գվատեմալայի Չիկի Մուլա լեռներից և հոսելով հարավարևելյան ուղղությամբ Սալվադորի տարածքում թափվում Խաղաղ օվկիանոս: Վտակներն են՝ Տորոլա, Սումպուլ և այլ գետեր: Երկարությունը՝ 422 կմ: Ջրի ծախսը՝ 362 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 18 246 կմ^2: Գվատեմալայում գետը հայտնի է Օլոպա անվամբ:
Lempa անվանումը հնդկացիական լենկա լեզվից թարգմանաբար նշանակում է *Տիրակալ, տեր*:

ԼԵՐՄԱ - իսպաներեն Río Lerma. գետ Մեքսիկայում: Սկիզբ է առնում Տոլուկա դե Լերդո բնակավայրից հարավ-արևելք գտնվող Ալմոլոյա դել Ռիո աղբյուրներից և հոսելով արևմտյան ուղղությամբ՝ թափվում Չապալա լիճ: Երկարությունը՝ 708 կմ (1 281 կմ Մեծ Լերմա): Ջրի ծախսը՝ 83 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 47 116 կմ^2:

Նախկինում հայտնի էր *Գրանդե դե Տոլուկա, Գրանդե Չիկնաուատենկո* կամ *Չիգնաուապան* անուններով, որտեղ վերջին անվանումը հնդկացիական նաուատլ լեզվից բառացի նշանակում է *ինը ջրեր* կամ *ինն աղբյուրներ*:
Այժմյան անվանումը ստացել է 1613 թ-ի մարտի 29-ին իսպանացի պետական գործիչ *Լերմա դուքսի, Ֆրանսիսկո Գոմես դե Սանդովալ-Ռոխաս ի Բորխայի* պատվին:

ԼԻԱՐԴ - անգլերեն Liard River, ֆրանսերեն Liard. գետ Կանադայում, Յուկոն ու Հյուսիսարևմտյան Տարածքներ վարչական տարածքներում և Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Սկիզբ է առնում Փելլի լեռների Լյուիս լեռան լանջերից: **Մակքենզի** գետի ձախ վտակն է: Վտակներն են՝ Մայտեր, Ռենչերիա, Դիզ, Քոլ, Հարավային Նահաննի, Ֆորտ Նելսոն և այլ գետեր: Երկարությունը՝ 1 115 կմ: Ջրի ծախսը՝ 2 434 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 277 100 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Դիազ, Սիմփսոն, Կուրան Ֆորտ* և այլ անուններով:
Անվանվել է Populus deltoides տեսակի բարդու ֆրանսերեն liard անունից:

ԼԻՆՔՈԼՆ - անգլերեն Mount Lincoln. լեռ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Մոսկիտո լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 356.5 մ, հարաբերականը՝ 1 177 մ:
Անվանվել է ԱՄՆ-ի 16-րդ նախագահ *Աբրահամ Լինքոլնի* պատվին:

ԼԻՆՔՈԼՆ - անգլերեն Lincoln Sea, դանիերեն Lincolnhavet, ֆրանսերեն Mer de Lincoln. եզրային ծով Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: **Էլսմիր** կղզու և **Գրենլանդիայի** հյուսիսային ափերին: Արևմուտքում սահմանափակված է Կոլամբիա, արևելքում՝ Մորիս Ջեսափ հրվանդաններով: **Ներսի** նեղուցով միանում է **Բաֆֆինի** ծովին: Միջին խորությունը՝ 257 մ, առավելագույնը՝ 596 մ: Երկարությունը մոտ 600 կմ, լայնությունը մոտ 480 կմ: Մակերեսը՝ 64 000 կմ^2: Ծավալը՝ 16 448 կմ^3:
Անվանվել է 1881-84 թթ. Ադոլֆուս Վ. Գրիլի ղեկավարած արկտիկական արշավախմբի կողմից, ի պատիվ այդ ժամանակվա ռազմական նախարար *Ռոբերտ Թոդ Լինքոլնի*:

ԼՈԳԱՆ - անգլերեն Mount Logan, ֆրանսերեն Mont Logan. բազմագագաթ լեռնազանգված Հյուսիսային Ամերիկայում, Կանադայի ամենաբարձր կետը: Գտնվում է Յուկոն վարչական տարածքի հարավարևմտյան մասում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Լեռան զանգվածը համարվում է աշխարհում ամենախոշորագույներից՝ ավելի քան 100 կմ պարագծով: Լոգանի գագաթային մասը ծածկված է մինչև 300 մ հաստությամբ սառցազանգվածով: Բացարձակ բարձրությունը՝ 5 959 մ, հարաբերականը՝ 5 250մ:
Անվանվել է Կանադայի Երկրաբանության ծառայության հիմնադիր *սըր Ուիլյամ Էդմոնդ Լոգանի* պատվին:

ԼՈՆԳ ՌԵՅՆՋ - անգլերեն Long Range Mountains, ֆրանսերեն Monts Long Range, միկմակ Mekapiisk. ցածրադիր լեռներ **Նյուֆաունդլենդ** կղզու արևմտյան ափին: Ձգվում է 493 կմ երկարությամբ և մինչև 297 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 33 994 կմ^2: Բարձր կետը Կաբոքս գագաթն է 814 մ: Հայտնի գագաթներն են ՝ Գրոս Մոռն (807 մ), Բլյու Մաունթին (800 մ), Բիգ Լեվել (795 մ) և այլն:
Անվանումը անգլերենից թարգմանաբար նշանակում է *Երկար շղթա*:

ԼՈՆԳՍ ՊԻԿ - անգլերեն Longs Peak լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում՝ **Ժայռոտ** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 346 մ, հարաբերականը՝ 896 մ:
Նախկինում հայտնի էր *Հայջեթ Պիկ, Լե դո Օրեյե, Նեստոտե* անուններով:

1890թ-ին անվանվել է հնէագետ մայոր *Սթիվեն Հառիման Լոնգի* պատվին:

ԼՈՒԿԱՅԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ - անգլերեն Lucayan Archipelago, իսպաներեն Archipiélago de las Lucayas. կղզիներ Ատլանտյան օվկիանոսի արևմտյան մասում՝ **Կուբա** կղզուց հյուսիս, **Ֆլորիդա** թերակղզուց արևելք և հարավ-արևելք: Ընդգրկում է Բահամաների Համագործակցության ու Միացյալ Թագավորության անդրծովյան տարածքի՝ Տյորքս և Կայկոս կղզիները: Մակերեսը՝ 14 308 կմ^2: Բարձր կետը՝ Ալվեռնիա գագաթն է 63 մ, Քյատ կղզում:
Անունը ստացել է այժմ անհետացած lukku-cairi հնդկացիական ցեղի lucayan ինքնանունից:
Հայտնի է նաև *Բահամյան կղզեխումբ* անվամբ:

ԼՈՒԿԱՆԻԱ - անգլերեն Mount Lucania, ֆրանսերեն Mont Lucania. լեռ Կանադայի Յուկոն վարչական տարածքի հարավարևմտյան մասում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 5 240 մ, հարաբերականը՝ 3 040 մ: Երկար թամքոցով լեռը միացված է **Սթիլ** (5 073 մ) լեռան հետ:
Անվանվել է 1897թ-ի հուլիսի 31-ին իտալացի դուքս Լուիջի Ամեդեու Աբրուցիի կողմից՝ Իտալիայի հարավում նախկինում գոյություն ունեցող պատմական երկրի, այնուհետև պատմական մարզի կարգավիճակ ունեցող *Լուկանիա* երկրի պատվին:

Խ

ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԱՌԱՓՆՅԱ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ - անգլերեն Pacific Coast Ranges, ֆրանսերեն Chaînes côtières du Pacifique, իսպաներեն Cadena costera del Pacífico. Հյուսիսային Ամերիկայի, Ալյասկայից մինչև Կենտրոնական Մեքսիկա ձգվող լեռնաշղթաների համակարգ: Ձգվում են շուրջ 6 100 կմ երկարությամբ և մինչև 2 314 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 977 500 կմ^2: Բարձր կետը **Լոգան** գագաթն է 5 959 մ: Աշխարհագրորեն կազմված է 8 հիմնական մասերից՝ **Առափնյա** լեռնաշղթա (Բրիտանական Կոլումբիա) **Վանկուվեր** կղզու և **Հայդա Գուայ** կղզիների լեռներ, **Կասկադյան** (Հյուսիսային, Միջին և Հարավային) լեռներ, Օլիմպիկ լեռներ, Վաշինգտոնի և Օրեգոնի Առափնյա լեռնաշղթաներ, Կլամաթ լեռներ, Կալիֆոռնիայի Առափնյա լեռնաշղթաներ և Լայնակի լեռնաշղթաներ: Հաճախ լեռնահամակարգի մեջ են ներառում **Սյեռա Նևադա** լեռները:
Անվանումը լեռնահամակարգի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

Կ

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ - իսպաներեն Península de Baja California. երկարավուն նեղ թերակղզի Մեքսիկայի հյուսիս-արևմուտքում: Ողողվում է արևմուտքում Խաղաղ օվկիանոսի, արևելքում՝ **Կալիֆոռնիական** ծոցի ջրերով: Երկարությունը՝ 1 250 կմ, լայնությաւնը՝ 225 կմ: Մակերեսը՝ 143 396 կմ^2:
Հայտնի է նաև Ստորին Կալիֆոռնիա անվամբ:
Անվանումն առաջացել է իսպաներեն caliente fornalla *տաք հնոց (փուռ)* արտահայտությունից, որով արծարծվում է ամռանն այստեղ անտանելի շոգ լինելը:

ԿԱԼԻՖՈՌՆԻԱԿԱՆ ԾՈՑ - իսպաներեն Golfo de California. **Կալիֆոռնիա** թերակղզին Մեքսիկայի մայրցամաքային ափից անջատող ծոց Խաղաղ օվկիանոսում: Ծոցն են թափվում բազմաթիվ գետեր՝ **Կոլորադո**, Յակի, Մայո, **Ֆուերտե**, Սինալոա, Կուլյական, Մուլեխե, Սոնոյտա և այլն: Կան 2 խոշոր կղզիներ՝ Անխել դե լա Գուարդա, Տիբուրոն և բազմաթիվ մանր կղզիներ:
Նախկինում հայտնի էր *Խա Թայ Էնյոոմ (Արևելքի ծով), Կսեպե (Ծով), Մարբերմեխո (Կարմիր ծով)* և Կորտեսի ծով անուններով:
Այժմյան անվանումը ստացել է ***Կալիֆոռնիա*** թերակղզուց:

ԿԱՅՄԱՆԻ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Cayman Islands. կղզիներ **Կարիբյան** ծովում, Միացյալ Թագավորության անդրծովյան տարածք: Իր մեջ է ընդգրկում Մեծ ու Փոքր Կայման և Կայման-Բրակ կղզիները: Մակերեսը՝ 264 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 160 կմ: Բարձր կետը Բլավ բլուրն է 43 մ, Կայման-Բրակ կղզում:
Նախկինում հայտնի էին Լաս Տորտուգաս, Լագարտոս անուններով:
1530 թ-ից ստացել է իր այժմյան անվանումը, որի առաջացումը կապված է թյուրիմացության հետ՝ եվրոպացիները կղզիներում տեսնելով խոշոր իգուան մողեսներին կարծել են, թե դրանք *կայման* տեսակի կոկորդիլոսներ են:

ԿԱՆԱԴԱԿԱՆ ԱՐԿՏԻԿԱԿԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ - անգլերեն Canadian Arctic Archipelago, ֆրանսերեն Archipel arctique canadien. աշխարհի խոշորագույն կղզեխմբերից մեկը՝ մայրցամաքային Կանադայից հյուսիս: Կղզիների քանակը՝ 36 563, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1 424 500 կմ^2: Բարձր կետը Մոն Բարբյո գագաթն է 2 616 մ, **Էլսմիր** կղզում: Խոշոր կղզիներն են՝ **Բաֆֆինի երկիր**, **Վիկտորիա**, **Էլսմիր** և այլն:
Անվանումը կղզեխմբի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ԿԱՆԱԴԱԿԱՆ ՎԱՀԱՆ - անգլերեն Canadian Shield, ֆրանսերեն Bouclier canadien. հյուսիսամերիկյան (Կանադական պլատֆորմի) մինչքեմբրի ծալքավոր հիմքի ելուստ Կանադայում և ԱՄՆ-ում: Մակերեսը մոտ 7 500 000 կմ^2: Աշխարհագրորեն կազմված է է 5 մասից՝ **Լավրենտյան** բարձրավայրից, Կազան ռեգիոնից, Դեյվիսի, Հադսոնի և Ջեյմսի ֆիզաշխարհագրական մարզերից:

ԿԱՍԿԱԴՅԱՆ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Cascade Range, ֆրանսերեն Chaîne des Cascades. լեռնաշղթա Հյուսիսային Ամերիկայի արևմտյան մասում՝ ԱՄՆ-ում և Կանադայում: Ձգվում է ավելի քան 1 167 կմ երկարությամբ և մինչև 312 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 151 508 կմ^2: Բարձր կետը Ռեյնիր գագաթն է 4 392 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Վեսթեռն Մաունթինս* և *Կասկադներ* անվամբ:
Այժմյան անվանումը տրվել է շոտլանդացի կենսաբան և բուսաբան Դ.Դուգլասի կողմից, լեռնաշղթայի լանջերը սողոցող **Կոլումբիա**, **Ֆրեյզեր**, Քլամատ և այլ գետերի առաջացրած աստիճանավոր ջրվեժների՝*կասկադների* առատության պատճառով:

ԿԱՐԻԲՅԱՆ ԾՈՎ - իսպաներեն Mar Caribe, ֆրանսերեն Mer des Caraïbes, նիդերլանդերեն Caraïbische Zee, անգլերեն Caribbean Sea. կիսափակ ծով Ատլանտյան օվկիանոսի արևմտյան մասում: Արևմուտքից և հարավից եզերված է Կենտրոնական և Հարավային Ամերիկաներով, հյուսիսից և արևելքից՝ **Անտիլներով**: Հյուսիս-արևմուտքում **Յուկատանի** նեղուցով միացված է **Մեքսիկական** ծոցին: Միջին խորությունը՝ 2 500 մ, առավելագույնը՝ 7 686 մ (**Կայմանյան** կղզիների մոտ): Երկարությունը՝ 2 415կմ, լայնությունը՝ 1 450 կմ: Մակերեսը՝ 2 754 000 կմ^2: Ծավալը՝ 6 885 000 կմ^3:
Նախկինում հայտնի էր *Կարաիբյան* և *Անտիլյան* կղզիների ծով անուններով:

Այժմյան անվանումը ստացել է մինչ իսպանացիների այստեղ գալը ծովի ափերին և կղզիներում բնակվող *կարիբ* հնդկացիական ցեղից:

ԿԱՖԵԿԼՈՒԲԵՆ - դանիերեն Kaffeklubben Ø, գրենլանդերեն Inuit Qeqertaat. 83° 40′ 02,50″N, 29° 49′ 52,86″W կոորդինատներ ունեցող փոքրիկ կղզյակ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում՝ **Գրենլանդիայի** հյուսիսում, Մորիս Ջեսափ հրվանդանից արևելք: Երկարությունը մոտ 0,7 կմ: Բարձր կետը՝ 30 մ: Մակերեսը մոտ 0,2 կմ^2: Գտնվում է Հյուսիսային բևեռից 713,5 կմ հեռավորության վրա: Մինչև 1996թ. համարվում էր երկրագնդի ամենահյուսիսային ցամաքը (այժմ ATOW1996 կղզյակն է՝ 83° 41′ 06″N, 30° 45′ 36″W) : Այստեղ է գտնվում աշխարհի ամենահյուսիսային համանուն լիճը: Հայտնի է նաև Օոդաապ Կեկերտաա անվամբ:
1921 թ-ին անվանվել է դանիացի հետազոտող Սվեն Լաուգե Կոխի կողմից, Կոպենհագենի Երկրաբանական թանգարանի *սրճարանի* պատվին:

ԿԵԿԵՐՏԱՐՍՈՒԱԿ - գրենլանդերեն Qeqertarsuaq, դանիերեն Disko. կղզի **Բաֆֆինի** ծովում, **Գրենլանդիայի** արևմտյան ափի մոտ: Երկարությունը՝ մոտ 160 կմ, լայնությունը՝ 117 կմ: Մակերեսը՝ 8 578 կմ^2: Բարձր կետը՝ 1 919 մ:
Կղզու գրենլանդերեն Qeqertarsuaq անվանումը բառացի թարգմանվում է *Մեծ կղզի*:

ԿՈԴՅԱԿ - անգլերեն Kodiak Archipelago. կղզեխումբ Ալյասկա նահանգի հարավային մասում, Ալյասկա թերակղզուց արևելք: Կազմված է 186 կղզիներից՝ 13 890 կմ^2 ընդհանուր մակերեսով: Ձգվում են շուրջ 285 կմ երկարությամբ և մինչև 108 կմ լայնությամբ:
1763 թ-ին ռուս հետազոտող Ստեպան Գլոտովը հայտնաբերեց կղզիները և անվանեց Կադյակ, որը բնիկների՝ ալուտիկների լեզվի qikertaq *կղզի*, բառի աղավաղված ձևն է:
1778 թ-ին բրիտանացի ծովագնաց Ջեյմս Կուկը իր մատյանում առաջին անգամ գրանցեց այժմյան *Կոդյակ* անվանումը:

ԿՈԼԻՄԱ - իսպաներեն Nevado de Colima/ Volcán de Colima. հրաբխային զանգված Մեքսիկայի արևմուտքում, Հրաբխային Սյեռայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 271 մ, հարաբերականը՝ 2 715 մ: Կազմված է 2 կոնաձև պիկերից՝ հանգած Նևադո դե Կոլիմա և գործող՝ բուն Կոլիմա հրաբուխներից:
Նախկինում հայտնի էր *Ֆուեգո դե Կոլիմա, Վուլկան դե Ֆուեգո, Ցապոտլան* և այլ անուններով:
Այժմյան անվանումը կազմված է նաուատլ լեզվի colli *բլուր*, *հրաբուխ* և maitl *տեր, ոստան* բառերից:

ԿՈԼՈՆԻԱԼ ՔՐԻԿ - անգլերեն Colonial Creek Falls. ամենաբարձր ջրվեժը ԱՄՆ-ում, Վաշինգտոն նահանգի հյուսիսային մասում, համանուն գետակի վրա: Ունի 14 սանդղավանդ: Անկման բարձրությունը՝ 783 մ: Լայնությունը մինչև՝ 15 մ: Ջրի միջին ծախսը՝ 3 մ^3/վրկ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Գաղութային առվակ*:

ԿՈԼՈՐԱԴՈ - անգլերեն Colorado River, իսպաներեն Río Colorado. խոշոր գետ ԱՄՆ-ում և Մեքսիկայում: Սկիզբ է առնում **Ժայռոտ** լեռներից և հոսելով հարավարևմտյան, ապա փոխելով իր ուղղությունը հարավայինի՝ թափվում **Կալիֆոռնիական ծոցը**: Երկարությունը՝ 2 334 կմ: Ջրի ծախսը՝ 640 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 637 137 կմ^2: Գետն ունի ավելի քան 25 խոշոր վտակներ, որոնցից մեծը՝ Գրին գետն է:

Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *գունավոր, ներկված*, որը պայմանավորված է գետի ջրերում մեծ քանակությամբ կարմրաշագանակագույն տիղմի առկայությամբ:

ԿՈԼՈՐԱԴՈՅԻ ՍԱՐԱՎԱՆԴ - անգլերեն Colorado Plateau. սարավանդ ԱՄՆ-ում, Արիզոնա, Յուտա, Կոլորադո և Նյու Մեքսիկո նահանգներում: Մակերեսը 337 000 կմ^2: Բարձրությունը տատանվում է 1 500-3 350 մ: Սարավանդը սնուցվում է **Կոլորադո** գետի և նրա վտակներ՝ Գրին, Սան Խուան և Փոքր Կոլորադոյի ջրերով: Սարավանդը բաժանվում է մի քանի ֆիզաշխարհագրական շրջանների՝ Յուինտա իջվածք, Կանյոն Լենդս, Յուտայի Բարձրադիր, Նավահո, Դաթիլ, Մեծ Կանյոն սարավանդներ:
Նախկինում հայտնի էր *Կոլորադոյի Սարավանդ Պրովինցիա* անվամբ:
Անունը ստացել է համանուն գետից:

ԿՈԼՈՒՄԲԻԱ - անգլերեն Columbia River. գետ Կանադայում և ԱՄՆ-ում Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում և Վաշինգտոն ու Օրեգոն նահանգներում: Խոշոր վտակներն են՝ **Սնեյք**, Քութենի, Սփոքան, Յակիմա և այլ գետեր: Երկարությունը՝ 1 953 կմ: Ջրի միջին ծախսը՝ 7 500 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 668 217 կմ^2:
1792թ-ին ամերիկացի ծովագնաց Ռոբերտ Գրեյը գետն անվանել է իր « *Կոլումբիա»* նավի պատվին:
Հայտնի է *Վիմալ* և *Նչի-Ուանա* անուններով:

ԿՈԿՈ - իսպաներեն Río Coco, միսկիտո Wanki. գետ Կենտրոնական Ամերիկայում, Հոնդուրասում և Նիկարագուայում: Կազմավորվում է Հոնդուրասում՝ Սան Մարկոս դե Կոլոն բնակավայրի մոտ միախառնվող Կոմալի և Տապակալի գետերից և հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ, Գրասյաս ա Դյոս հրվանդանի մոտ թափվում **Կարիբյան** ծով: Վտակներն են՝ Բոկայ, Ուասպուկ և այլ գետեր: Երկարությունը՝ 750 կմ: Ջրահավաք ավազանը՝ 24 767 կմ^2:
Գետը հայտնի էր *Սեգովիա, Ուանկի, Քեյփ Ռիվեր, Յարա* և այլ անուններով:
Գետի անվանումն առաջացել է նրա ափերին տարածված Cocos nucifera տեսակի կոկոսյան արմավենու իսպաներեն *Կոկո* անունից:

ԿՈԿՈՍ - իսպաներեն Isla del Coco. Խաղաղ օվկիանոսի խոշորագույն անմարդաբնակ լեռնոտ կղզին: Երկարությունը մինչև 7,49 կմ, լայնությունը՝ 4,61 կմ: Մակերեսը՝ 23,85 կմ^2: Բարձր կետը Իգլեսիաս բլուրն է 634 մ: Այստեղ է գտնվում Հյուսիսային Ամերիկայի 5° 29′ 55,34″N, 87° 04′ 26,09″W կոորդինատներով հարավային կղզային ծայրակետը՝ Դամփիեր հրվանդանը:
Նախկինում հայտնի էր *Կոկես է Իսլա դե Սանտա Կրուս* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է կղզում լայն տարածում ստացած *Կոկոսյան* արմավենու առկայությամբ:

ԿՈՆՉՈՍ - իսպաներեն Río Conchos. գետ Մեքսիկայում, **Ռիո Գրանդե** գետի աջ վտակը: Սկիզբ է առնում **Արևմտյան Սյեռա Մադրեից** և հոսելով արևելյան ուղղությամբ, Սյուդադ Կամառգո բնակավայրից հետո փոխում է իր ուղղությունը հյուսիսայինի, Օխինագա բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Ֆլորիդո, Սան Պեդրո, Չուվիսկար և այլ գետեր: Երկարությունը՝ 910,34 կմ: Ջրի ծախսը՝ 100 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 62 881 կմ^2:
Անվանումը ստացել է նրա ափերին բնակվող հնդկացիական *կոնչոս* ցեղերից:

ԿՈՐԴԻԼՅԵՌԱՆԵՐ - անգլերեն American Cordillera, ֆրանսերեն Cordillère américaine, իսպաներեն Cordillera Americana, Անդերի հետ կազմում են աշխարհի ամենաերկար լեռնային համակարգը՝ ավելի քան 18 000 կմ երկարությամբ և մինչև 1 600 կմ լայնությամբ: Ձգվում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաների արևմտյան ափամերձ շրջանով՝ Ալյասկայից մինչև Հրո երկիր: Աշխարհագրորեն բաժանվում են 2 մասի՝ Հյուսիսային Ամերիկայի Կորդիլյեռաներ և Հարավային Ամերիկայի Կորդիլյեռաներ կամ Անդեր: Բարձր կետը Ակոնկագուա գագաթն է 6 960,8 մ (Հարավային Ամերիկայում), **Դենալի** լեռը 6 190 մ (Հյուսիսային Ամերիկայում): Լեռնահամակարգի սառցապատման մակերեսը կազմում է շուրջ 90 000 կմ^2, որից Հյուսիսային Ամերիկայի Կորդիլյեռաներում ավելի քան 67 000 կմ^2 է, իսկ Անդերում՝ մոտ 23 000 կմ^2:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Լեռնաշղթա* :

ԿՈՖՐԵ ԴԵ ՊԵՐՈՏԵ - իսպաներեն Cofre de Perote, նաուատլ Nauhcampatépetl. հանգած վահանաձև հրաբուխ Կենտրոնական Մեքսիկայի հարավային մասում: Բացարձակ բարձրությունը՝ 4 200 մ, հարաբերականը՝ 1 320 մ:
Լեռան իսպաներեն Cofre de Perote անվանումն առաջացել է գագաթային մասում գտնվող հսկա քառակուսի Cofre *Մնդուկ, արկղ* ժայռից և ոչ հեռու գտնվող Պերոտե քաղաքի անունից:
Նաուատլ լեզվի Nauhcampatépetl անվանումը թարգմանաբար նշանակում է *Չորս կողմերի լեռ* :

ԿՐԵՍՏՈՆ ՊԻԿ - անգլերեն Crestone Peak. երկգագաթ լեռ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Սյեռա Բլանկա լեռնազանգվածի Սանգռե դե Կրիստո լեռնաշղթայում: Վեր է խոյանում Սան Լուիս հովտի արևելյան կողմում: Բացարձակ բարձրությունը՝ 4 359 մ (Արևելյան Կրեստոն Պիկ՝ 4 348 մ), հարաբերականը՝ 1 388 մ:
Անվանվել է crestón *աքաղաղի կատար* կամ *սաղավարտի կատար* :

ԿՈՒԲԱ - իսպաներեն Cuba. կղզի **Կարիբյան** ծովի հյուսիսային մասում, խոշորագույնը **Անտիլներում**: Երկարությունը՝ 1 250 կմ, լայնությունը՝ 191 կմ: Մակերեսը՝ 104 555,61 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 5 746 կմ: Բարձր կետը **Տուրկինո Պիկ** գագաթն է 1 974 մ:
Մեծ հավանականությամբ կղզու անվանումը իր հիմքում ունի այժմ անհետացած հնդկացիական տաինո ցեղի լեզվի cubao *վայր, որտեղ բերրի հողը առատ է* կամ cubana *հրաշալի վայր* բառերը:
Մեկ այլ վարկածի համաձայն Քրիստափոր Կոլումբոսը կղզին անվանել է պորտուգալական *Կուբա* ավանի պատվին:

Հ

ՀԱԲԱՐԴ - անգլերեն Mount Hubbard, ֆրանսերեն Mont Hubbard. լեռ Ալյասկայի և Յուկոն վարչական տարածքի սահմանագլխին, **Սուրբ Եղիայի** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 557 մ, հարաբերականը՝ 2 457 մ: Արևմուտքում համանուն սառցադաշտով անջատվում է **Վանկուվեր** լեռից, իսկ գագաթից արևելք գտնվում է Լոուել սառցադաշտը:
1890թ-ին անվանվել է ամերիկացի երկրաբան Ջ.Ռասսելի կողմից, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության առաջին նախագահ *Գարդիներ Գրին Հաբարդի* պատվին:

ՀԱԴՍՈՆ - անգլերեն Hudson River. գետ ԱՄՆ-ի արևելյան մասում Նյու Յորք և Նյու Ջերսի նահանգներում: Սկիզբ է առնում Ադիրոնդակ լեռներից և Նյու Յորք քաղաքում թափվում Ատլանտյան օվկիանոսի Լոուել ծոցը: Վտակներն են՝ Բորեաս Սքրուն, Սեդար, Ինդիան և այլ գետակներ: Երկարությունը՝ 507 կմ: Ջրի ծախսը՝ 620 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 36 260 կմ^2:
Անվանվել է անգլիացի ծովագնաց *սըր Հենրի Հադսոնի* պատվին:
Հայտնի է նաև իրոկեզերեն Կահոհատատեա *Գետ* և լենապե լեզվում՝ Մուհեկուննետուկ *Երկու ձևով հոսող գետ* ,*Սան Անտոնյո, Ռիո դե Մոնտեն, Նուրտ Ռիվիեր* և այլ անուններով:

ՀԱԴՍՈՆԻ ԾՈՑ - անգլերեն Hudson Bay, ֆրանսերեն Baie d'Hudson, ինուկտիկուտ Kangiqsualuk ilua. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի մասը: Իրենից ներկայացնում է ներքին ծով: Համանուն նեղուցով միացված է **Լաբրադոր** ծովին, իսկ **Ֆոքսի** նեղուցով՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսին: Ծոցում կան բազմաթիվ կղզիներ՝ **Սաութհեմփտոն**, **Քոթս**, Սոլսբերի և այլն: Ծոցն են թափվում Չերչիլ, Սևեռն, Քեթլ, Սիլ և բազմաթիվ այլ գետեր:
Անվանվել է անգլիացի ծովագնաց *սըր Հենրի Հադսոնի* պատվին:

ՀԱԴՍՈՆԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Hudson Strait, ֆրանսերեն Détroit d'Hudson. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուց Կանադայում՝ **Լաբրադոր** թերակղզու և **Բաֆֆինի երկիր** կղզու միջև: Իրար է միացնում **Լաբրադոր** ծովը **Հադսոնի** և **Ֆոքսի** ծոցերին: Ծոցում կան բազմաթիվ կղզիներ՝ Միլ, Բաթոն, Գուդվին և այլն: Երկարությունը ավելի քան 700 կմ, լայնությունը՝ 64-240 կմ: Առավելագույն խորությունը՝ 388 մ:
Նախկինում հայտնի էր *Միսթակեն Սթրեյթ* անվամբ:
Անվանվել է անգլիացի ծովագնաց *սըր Հենրի Հադսոնի* պատվին:

ՀԱՅԴԱ ԳՈՒԱՅ - անգլերեն Haida Gwaii, ֆրանսերեն Haida Gwaii, հայդա X̱aaydaga Gwaay.yaay / X̱aayda gwaay. կղզեխումբ Կանադայի Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի հյուսիսարևմտյան ափի մոտ: Կազմված է շուրջ 150 կղզիներից, որոնց ընդհանուր մակերեսը 10 150 կմ^2 է: Բարձր կետը Մորսբի գագաթն է 1 164 մ: Խոշոր կղզիներն են՝ **Գրեհեմ**, Մորսբի, Լուիզ, Լայլ, Կանգիտ և այլն:
Նախկինում հայտնի էր *Շառլոտ թագուհու* կղզիներ անվամբ:
2010թ-ի հունիսի 3-ին կղզեխումբը ստացել է իր այժմյան X̱aayda gwaay անունը, որը նշանակում է *հայդաների* (հնդկացիական ցեղ) *կղզիներ* :

ՀԱՅԻԹԻ - իսպաներեն La Española, ֆրանսերեն Hispaniola, հայիթյան կրեոլերեն Ispayola. կղզի **Կարիբյան** ծովում, իր մեծությամբ 2-րդը Անտիլներում: Երկարությունը՝ 885 կմ, լայնությունը՝ 353 կմ:Մակերեսը՝ 76 480 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 2 337 կմ: Բարձր կետը **Դուարտե Պիկ** գագաթն է 3 098 մ:
Հայիթի անվանումը հնդկացիական տաինո լեզվից բառացի թարգմանաբար նշանակում է *Լեռնոտ* :
Հայտնի է նաև *Էսպանյոլա, Բոհյո, Կիսկեյա* և *Սանտո Դոմինգո* անուններով:

ՀԱՆԹԵՐ - անգլերեն Mount Hunter. երկգագաթ լեռ Ալյասկայում, **Ալյասկայի** լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 442 մ, հարաբերականը՝ 1 418 մ:
1903թ-ին լրագրող Ռ.Դանը այցելելով այս շրջանը՝ մոտակա լեռը, որն այժմ հայտնի է Կահիլտնա Դոմ անվամբ, անվանեց իր մորաքրոջ՝*Աննա Ֆալկոնետ Հանթերի պատվին* :

Հանթեր անվանումը 1906թ-ին սխալմամբ պետական գեոդեզիստի կողմից տրվեց այս լեռանը:
Հայտնի է նաև *Բեգգույա* անվամբ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՅԵՌԱ ՄԱԴՐԵ - իսպաներեն Sierra Madre del Sur. հնագույն լեռնային համակարգ Մեքսիկայի հարավում: Ձգվում է ավելի քան 1 000 կմ երկարությամբ և մինչև 300 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 143 447 կմ^2: Լեռների բարձր կետը Տեոտեպեկ գագաթն է 3 703 մ:
Sierra Madre անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Մայրական լեռներ*:

ՀԱՐՎԱՐԴ - անգլերեն Mount Harvard. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում, **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 395,6 մ, հարաբերականը՝ 719 մ:
1869թ. օգոստոսի 19-ին անվանվել է *Հարվարդի համալսարանի* պատվին:

ՀԵԼՄԿԵՆ - անգլերեն Helmcken Falls, ֆրանսերեն Chutes Helmcken. ջրվեժ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում, Մարթլ գետի վրա: Անկման բարձրությունը՝ 141 մ:
1913թ-ին այն անվանվել է բժիշկ *Ջոն Սեբաստիան Հելմկենի* պատվին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԵԾ ԹԵՐԱԿՂԶԻ - անգլերեն Great Northern Peninsula, ֆրանսերեն Grande Péninsule du Nord, ինուկտիկուտ Ikkarumiklua. թերակղզի Կանադայում՝ **Նյուֆաունդլենդ** կղզում: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 80 կմ: Մակերեսը՝ 17 483 կմ^2:
Անվանումը թերակղզու անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ՀՈԼԼԻ ԾՈՑ - անգլերեն Hall Basin, ֆրանսերեն Bassin Hall, դանիերեն Hall Bassin. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց **Գրենլանդիա** և **Էլսմիր** կղզիների միջև: Երկարությունը՝ 80 կմ, լայնությունը՝ 45 կմ: Գտնվում է **Ներսի** նեղուցի հյուսիսային մասում: Անվանվել է Արկտիկայի ամերիկացի հետազոտող, ազգագրագետ և գրող *Չառլզ Ֆրենսիս Հոլլի* պատվին:

ՀՈՂՄԱԿՈՂՄ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Paso de los Vientos, ֆրանսերեն Passage du Vent, անգլերեն Windward Passage. նեղուց **Կուբա** և **Հայիթի** կղզիների միջև: Լայնությունը՝ 77 կմ: Առավելագույն խորությունը՝ մինչև 1700 մ: Իրար է միացնում Ատլանտյան օվկիանոսը և **Կարիբյան** ծովը:
Նեղուցի անունը անգլերեն Windward Passage անվան հայերեն պատճենումն է:

ՀՈՆԴՈՒՐԱՍԻ ԾՈՑ - իսպաներեն Golfo de Honduras, անգլերեն Gulf of Honduras. խոշոր ծոց **Կարիբյան** ծովի արևմտյան մասում: Ողողում է Բելիզի, Գվատեմալայի և Հոնդուրասի ափերը: Երկարությունը՝ 200 կմ, լայնությունը՝ 102 կմ: Միջին խորությունը՝ 41 մ, առավելագույնը՝ ավելի քան 2000 մ: Ծոցն են թափվում Մոհո, Սարստուն, Դուլսե, Մոտագուա, Ուլուա և այլ գետեր: Ծոցի հյուսիսարևմտյան մասից է սկիզբ առնում աշխարհում իր մեծությամբ երկրորդ՝ Բելիզի արգելախութը:
Անվանումը ստացել է *Հոնդուրաս* պետությունից:

ՀՈՒՐՈՆ - անգլերեն Lake Huron, ֆրանսերեն Lac Huron. լիճ ԱՄՆ-ի Կանադայի սահմանին: Երկարությունը մինչև՝ 332 կմ, լայնությունը մինչև՝ 295 կմ: Մակերեսը՝ 59 588 կմ^2: Միջին խորությունը՝ 59 մ, առավելագույնը՝ 229 մ: Ծավալը՝ 3 516 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 176 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիների շուրջ 6 170 կմ է: Ջրահավաք ավազանը՝ շուրջ 134 100 կմ^2 (լճի մակերեսի հետ միասին): Լիճն է թափվում Սենթ Մերիս, իսկ արտահոսում՝ Սեն Կլեր գետերը: Լճում կան բազմաթիվ կղզիներ, որոնցից խոշորը՝ Մանիտուլինն է (աշխարհի քաղցրահամ լճերի խոշորագույն կղզին): Անվանումը տրվել է ֆրանսիացիների կողմից, հնդկացիական *հուրոն* ցեղի պատվին: Հայտնի է նաև *Լա Մեր Դուսե, Կարեգոնդի, Վայանդո, Լակ* անուններով:

Մ

ՄԱԴԼԵՆ - անգլերեն Magdalen Islands, ֆրանսերեն Îles de la Madeleine. կղզեխումբ Կանադայում, **Սուրբ Լավրենտիոսի** ծոցում: Խոշոր կղզիների քանակը՝ 9 է, կան բազմաթիվ մանր կղզիներ, ծանծաղուտներ և ավազալեզվակներ: Խոշոր կղզիներն են՝ Լա Գրոս, Ավր Օբեր, Գրանդ Անտրե, Բրիոն և այլն: Մակերեսը՝ 205,53 կմ^2: Բարձր կետը՝ 155 մ:
Նախկինում հայտնի էր *Մեմկիտ, Արայն, Ռամե* և այլ անուններով:
1663թ-ին անվանվել է կղզու տիրակալ Ֆրանսուա Դուբլեի կողմից իր կնոջ *Մադլեն Ֆոնտենի* պատվին:

ՄԱԼԹՆՈՄԱ - անգլերեն Multnomah Falls. ջրվեժ ԱՄՆ-ում, Օրեգոն նահանգում, Մալթնոմա Քրիկ գետակի վրա: Ունի 2 սանդղավանդ: Անկման ընդհանուր բարձրությունը՝ 191 մ: Լայնությունը՝ 3 մ:
Անվանվել է *մալթնոմա* հնդկացիական ցեղի պատվին:

ՄԱԿՔԵՆԶԻ - անգլերեն Mackenzie River, ֆրանսերեն Mackenzie. գետ Կանադայում, Հյուսիսարևմտյան Տարածքներ վարչական տարածքում: Սկիզբ է առնում **Ստրուկների Մեծ** լճից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ թափվում **Բոֆորտի** ծովը: Վտակներն են՝ **Լիարդ**, Փիլ, Մաունթին և այլ գետեր: Երկարությունը՝ 1 378 կմ: Ջրի ծախսը՝ 9 910 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 1 805 200 կմ^2:
Անվանվել է շոտլանդացի ճանապարհորդ *սըր Ալեքսանդր Մակքենզիի* պատվին, ով 1789թ-ին ուսումնասիրել է գետը և անվանել այն Disppointment *հիասթափություն, հուսախաբություն* :
Հայտնի է նաև հնդկացիական սլեյվի լեզվի Deh-Cho*Մեծ գետ* , և ինուվիալուկտուն լեզվի Kuukpak*Հսկա գետ* անվամբ:

ՄԱԿՔԵՆԶԻԻ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Mackenzie Mountains, ֆրանսերեն Monts Mackenzie. լեռնահամակարգ Կանադայի հյուսիս-արևմուտքում՝ Յուկոն և Հյուսիսարևմտյան Տարածքներ վարչական տարածքների սահմանին: Լեռները կազմված են մի քանի լեռնաշղթաներից և ձգվում են հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ շուրջ 937 կմ երկարությամբ և 795 կմ լայնությամբ: Մակերեսը՝ 330 782 կմ^2: Լեռների բարձր կետը Քիլի Պիկ գագաթն է 2 972մ:
Անվանվել են Կանադայի 2-րդ վարչապետ *Ալեքսանդր Մակքենզիի* պատվին:

ՄԱՀՎԱՆ ՀՈՎԻՏ - անգլերեն Death Valley. միջլեռնային իջվածք ԱՄՆ-ի արևմուտքում, Կալիֆոռնիա նահանգում՝ **Մոխավե** անապատում: Երկարությունը՝ մինչև 170 կմ, լայնությունը՝ 24 կմ: Մակերեսը՝ մոտ 4 000 կմ^2: Ցածր կետը Բադուոթեր ավազանն է -86 մ:
Հովիտը հայտնի է նաև tümpisa անվամբ, որը հնդկացիական տիմբիշա ցեղի լեզվից թարգմանաբար նշանակում է *Քարե ներկ*:
Անվանումը հովտի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:
Այդ անվան պատճառ է հանդիսացել 1849 թ-ին Կալիֆոռնիական ոսկետենդի տարիներին ջրի պակասի հետևանքով այստեղ ոսկի որոնողների մի մեծ խմբի մահը:

ՄԱՅԱ - անգլերեն Maya Mountains, իսպաներեն Montes Maya. լեռնաշղթա Բելիզում և Գվատեմալայում: Ձգվում է ավելի քան 120 կմ երկարությամբ: Լեռների բարձր կետը Դոյլիս Դիլայթ գագաթն է 1 124 մ:
Անվանվել է *մայա* հնդկացիական ցեղի պատվին:

ՄԱՆԱԳՈՒԱ - իսպաներեն Lago Xolotlán / Lago de Managua. խոշոր, քաղցրահամ լիճ Կենտրոնական Ամերիկայում, Նիկարագուայում: Երկարությունը՝ մինչև 65 կմ, լայնությունը՝ մինչև 58 կմ: Մակերեսը՝ 1 049 կմ^2: Միջին խորությունը՝ 9,5 մ, առավելագույնը՝ 20 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 40,5 մ: Ծավալը՝ 9,97 կմ^3: Լիճն են թափվում Սինեկապա և Վյեխո, իսկ արտահոսում՝ Տիպիտապա գետերը:
Անունը կազմված է իսպանացիների կողմից հնդկացիական մանկեմե ցեղին տրված Mangue *Մանգե* անվան և agua *ջուր* բառերի միացումից:

ՄԱՆԻՏՈԲԱ - անգլերեն Lake Manitoba, ֆրանսերեն Lac Manitoba, կրի Manitou-wapow, օջիբվե Manidoobaa. լիճ Կանադայում, Մանիտոբա պրովինցիայում: Երկարությունը մինչև 200 կմ, լայնությունը մինչև 45 կմ: Մակերեսը՝ 4 624 կմ^2: Միջին խորությունը՝ 3 մ, առավելագույնը՝ 7 մ: Ծավալը՝ 13,9 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 248 մ: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 54 630 կմ^2: Լիճն է թափվում Ուոթերհեն, իսկ արտահոսում՝ Դոֆին գետերը:
Այժմյան անվանումն առաջացել է լճի կրի լեզվի manitou-wapow *հոգիների ճամփա* անունից, կամ օջիբվե լեզվի manidoobaa *Մեծ Հոգու, Մանիտուի նեղուցներ* անունից:

ՄԱՍՍԻՎ - անգլերեն Mount Massive. հնգագաթ լեռ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում, **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայում: Լեռան գագաթային մասում են գտնվում մի քանի սառցադաշտային լճեր, իսկ ստորոտները ծածկված են անտառներով: Բացարձակ բարձրությունը՝ 4 398 մ, հարաբերականը՝ 598 մ:
1873թ-ին ամերիկացի աշխարհագրագետ Հենրի Գաննեթի կողմից, ստացել է իր այժմյան անվանումը, որով ակնարկվում է լեռան ձևը:

ՄԱՐԺԵՐԻ - անգլերեն Margerie Glacier. սառցադաշտ ԱՄՆ-ում, Ալյասկա նահանգում: Երկարությունը՝ 34 կմ, լայնությունը՝ 1,3 կմ: Սառցադաշտի հաստությունը հասնում է մինչև 110 մ: Սկիզբ է առնում Ռութ լեռան հարավային լանջերից (3 920 մ) և հոսելով հարավարևելյան, ապա կտրուկ փոխելով իր ուղղությունը հյուսիսայինի վերջանում է Թար ծովախորշում:
1923թ-ին անվանվել ԱՄՆ-ի երկրաբանական ծառայության աշխատակից Լոուրենս Մարտինի կողմից ֆրանսիացի երկրաբան և աշխարհագրագետ *Էմանուել Ժակեն դը Մարժերիի* պատվին:

ՄԱՐՅԱՏՈ - իսպաներեն Punta Mariato. 7° 12' 13.57"N, 80° 52' 31,54"W կոորդինատներով հրվանդան, Պանամայի հարավային մասում՝ **Ասուերո** թերակղզու հարավարևմտյան մասում, Հյուսիսային Ամերիկայի հարավային մայրցամաքային ծայրակետը:
Ըստ ավանդության հրվանդանն իր անունը ստացել է ժամանակին այս վայրերում ապրած ոմն *Մարիա Ատո* կնոջ պատվին:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանվել է մինչ իսպանացիների այստեղ հայտնվելը, այս տարածքում բնակվող հնդկացիական ցեղի տիրուհի *Մարյատո*-ի պատվին:

ՄԱՐՈՒՆ ԲԵԼՍ - անգլերեն Maroon Bells. երկգագաթ լեռ ԱՄՆ-ում, Կոլորադոյում՝ **Ժայռոտ** լեռների Էլք լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 317 մ, հարաբերականը՝ 712 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Մուգ կարմրագույն զանգեր*:

ՄԱՐՏԻՆԻԿ - ֆրանսերեն Martinique, կրեոլերեն Matinik / Matnik. լեռնոտ կղզի **Կարիբյան** ծովի արևելքում, **Փոքր Անտիլյան** կղզիների կենտրոնական մասում: Երկարությունը՝ մինչև 70 կմ, լայնությունը՝ մինչև 37 կմ: Մակերեսը՝ 1 128 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 350 կմ: Բարձր կետը **Պելե** հրաբուխն է 1 397 մ:
Կարաիբերենում կղզին հայտնի է loüanacaera անվամբ, որը կազմված է loüana *իգուան*, caera *կղզի* բառերի միացումից:
Այժմյան անվանումը, կղզուն տաինո բնիկների կողմից տրված madinina, madiana կամ mantinino *Առասպելական կղզի* անվան աղճատված ձևն է:

ՄԱՐՏԻՆԻԿ - ֆրանսերեն Canal de la Dominique, անգլերեն Martinique Passage. նեղուց **Մարտինիկ** և Դոմինիկա կղզիների միջև: Իրար է միացնում Ատլանտյան օվկիանոսը և **Կարիբյան** ծովը: Լայնությունը՝ 35 կմ: Առավելագույն խորությունը մինչև 1400 մ:
Անվանումը ստացել է *Մարտինիկ* կղզուց:
Հայտնի է նաև *Դոմինիկ* անվամբ:

ՄԵԼՎԻԼ - անգլերեն Lake Melville, ֆրանսերեն Lac Melville, ինուկտիտուտ Atatshuinapek. լիճ Կանադայում, **Լաբրադոր** թերակղզու արևելյան մասում: Երկարությունը՝ մինչև 207 կմ, լայնությունը՝ մինչև 40 կմ: Մակերեսը՝ 3 069 կմ^2: Միջին խորությունը՝ 102 մ, առավելագույնը 300 մ: Ծավալը՝ 313 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 1 մ: Ափագծի երկարությունը կղզիների հետ միասին՝ 528 կմ: Լիճն են թափվում Նասկունի, Չերչիլ, Կենամու և այլ գետեր:
Անվանվել է բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, իրավաբան *Հենրի Դանդաս, Մելվիլ 1-ին վիկոնտի* պատվին:

ՄԵԼՎԻԼ - անգլերեն Melville Island, ֆրանսերեն Île Melville. կղզի Կանադայում, Փարրի կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ 341 կմ, լայնությունը՝ մինչև 292 կմ: Մակերեսը 42 149 կմ^2: Բարձր կետը Բլու Հիլզ գագաթն է 776 մ:
1819թ-ին անվանվել է անգլիացի ծովագնաց Ուիլյամ Փարրի կողմից բրիտանացի քաղաքական գործիչ *Ռոբերտ Դանդաս, Մելվիլ 2-րդ վիկոնտի* պատվին:

ՄԵԼՎԻԼ - անգլերեն Melville Peninsula, ֆրանսերեն Péninsule de Melville. խոշոր թերակղզի Կանադայի հյուսիսում: Ողողվում է արևելքից **Ֆոքս**, արևմուտքից՝ Քոմիթի ծոցերի, հյուսիսից՝ Ֆյուրի և Հեկլա նեղուցի ջրերով: Երկարությունը՝ 400 կմ, լայնությունը՝ մինչև 220 կմ: Մակերեսը 62 564 կմ^2: Բարձր կետը՝ 564 մ:

Անվանվել է բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, իրավաբան *Հենրի Դանդաս, Մելվիլ 1-ին վիկոնտի* պատվին:

ՄԵԾ ԱՆՏԻԼՆԵՐ - իսպաներեն Antillas Mayores, անգլերեն Greater Antilles, ֆրանսերեն Grandes Antilles. **Կարիբյան** ծովում մի քանի խոշոր կղզիներից կազմված կղզեխումբ: Իր մեջ է ընդգրկում **Կուբա**, **Հայիթի**, **Ջամայկա**, և **Պուերտո Ռիկո** կղզիները: Զբաղեցնում է 207 411 կմ^2 տարածք: Բարձր կետը՝ **Դուարտե Պիկ** 3 098մ, Դոմինիկանայում:
Անվանումը կղզիների մի շարք լեզուներով անվան հայերեն պատճենումն է:

ՄԵԾ ԱՎԱԶԱՆ - անգլերեն Great Basin. չորային բարձրավանդակ ԱՄՆ-ի արևմտյան մասում: Ձգվում է հյուսիսից հարավ: Արևմուտքում եզերված է **Սյեռա Նևադա** և **Կասկադյան** լեռներով, արևելքում՝ **Ժայռոտ** լեռներով: Մակերեսը՝ 541 727 կմ^2: Բարձրությունը տատանվում է -86 մ-ից (**Մահվան հովտի** Բադուոթեր ավազան) մինչև 4 421,1 մ (**Ուիթնի** գագաթ):
Անվանումը բարձրավանդակի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:

ՄԵԾ ԼՃԵՐ - անգլերեն Great Lakes, ֆրանսերեն Grands Lacs . քաղցրահամ լճերի համակարգ ԱՄՆ-ում և Կանադայում: Մեծ լճերին են պատկանում **Վերին**, **Հուրոն**, **Միչիգան (**ամբողջությամբ գտնվում է ԱՄՆ-ում), **Էրի** և **Օնտարիո**, երբեմն նրանց է միացվում նաև **Սեն Կլեր** լիճը, որոնք կազմում են երկրագնդի քաղցրահամ լճերի ամենամեծ խումբը 244 106 կմ^2 մակերեսով ու ամբարում իր մեջ աշխարհի քաղցրահամ ջրերի շուրջ 21 %-ը՝ 22 671 մ^3 ծավալով: Նրանց հետ են կապված մի քանի այլ լճեր՝ Սենթ Մերիս, Մանիտու, **Նիպիգոն**, Նիպիսինգ և այլն: Ջրահավաք ավազանի մակերեսը կազմում է շուրջ 768 000 կմ^2, ներառյալ լճերի մակերեսը: Ամենախորը Վերին լիճն է՝ 406 մ:
Ափերի երկարությունը կղզիների հետ միասին մոտ 18 000 կմ է: Մեծ լճերի համակարգում կան շուրջ 35 000 կղզիներ:
Այժմյան անվանումը լճերի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:
Հայտնի են նաև *Լավրենտյան Մեծ լճեր* և *Հյուսիսային Ամերիկայի Մեծ լճեր* անվամբ:

ՄԵԾ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐ - անգլերեն Great Plains, ֆրանսերեն Grandes Plaines. նախալեռնային սարավանդ ԱՄՆ-ում և Կանադայում՝ **Ժայռոտ** լեռներից արևելք: Ձգվում է ավելի քան 3 200 կմ երկարությամբ և մինչև 800 կմ լայնությամբ: Մակերեսը կազմում է շուրջ 1 300 000 կմ^2: Միջին բարձրությունը տատանվում է 700-1 800 մ: Աշխարհագրորեն բաժանվում 3 հիմնական մասերի՝ Միսուրիի սարավանդ, Կենտրոնական Բարձր հարթավայրեր և Լյանո-Էստակադո ու Էդվարդս սարավանդի:
Այժմյան անվանումը սարավանդի անգլերեն անվան հայերեն պատճենումն է:
Հայտնի է նաև *Պրերիա* անվամբ:

ՄԵՄՖՐԵՄԱԳՈԳ - անգլերեն Lake Memphremagog, ֆրանսերեն Lac Memphrémagog, աբենակի Mamlawbagak. լիճ Կանադայի և ԱՄՆ-ի սահմանին: Երկարությունը՝ մինչև 51 կմ, լայնությունը՝ մինչև 5 կմ: Մակերեսը՝ 110 կմ^2: Միջին խորությունը 15,5 մ, առավելագույնը՝ 87 մ: Ծավալը 1,7 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 208 մ: Լճում կան 2 տասնյակից ավելի կղզիներ: Լիճն են թափվում Սերիզ, Սև, Բարտոն, Քլայդ գետերը:
Անվանումն առաջացել է լճի աբենակի լեզվի Mamlawbagak *ջրի երկար և մեծ շերտ* անունից:

ՄԵՆ - անգլերեն Gulf of Maine, ֆրանսերեն Golfe du Maine. ԱՄՆ-ի Քեյփ Քոդ և Կանադայի Նոր Շոտլանդիա թերակղզիների միջև ընկած Ատլանտյան օվկիանոսի ծոց: Ծոցն

են թափվում Աննապոլիս, Կենեբանկ, Սեն Կրուա և այլ գետեր: Առավելագույն խորությունը՝ 329 մ: Մակերեսը՝ 93 000 կմ^2:
Մեծ հավանականությամբ անվանումը ստացել է Ֆրանսիայի *Մեն* պրովինցիայից:

ՄԵՏԱ ԻՆԿՈԳՆԻՏԱ - անգլերեն Meta Incognita Peninsula, ֆրանսերեն Meta Incognita. թերակղզի Կանադայում՝ **Բաֆֆինի երկիր** կղզու հարավային մասում: Ողողվում է հարավ-արևմուտքից **Հադսոնի** նեղուցի, իսկ հյուսիս-արևելքից՝ Ֆրոբիշեր ծոցի ջրերով: Երկարությունը՝ 280 կմ, լայնությունը՝ մինչև 165 կմ: Բարձր կետը՝ 853 մ:
1577 թ-ին անգլիացի ծովագնաց Մարտին Ֆրոբիշերը այստեղի հողերը անվանել է Անգլիայի թագուհի Եղիսաբեթ I-ի պատվին, սակայն թագուհին այն վերանվանել է լատիներեն Meta Incognita-ի, որը բառացի նշանակում է *Անհայտ սահման* :

ՄԵՐՁԱՏԼԱՆՏՅԱՆ ՅԱԾՐԱՎԱՅՐ - անգլերեն Atlantic coastal plain. ցածրավայր Հյուսիսային Ամերիկայում, որն ընդգրկում է ԱՄՆ-ի արևելյան Ատլանտյան ափամերձ շրջանը, Նյու Յորքից մինչև **Ֆլորիդա** թերակղզու հարավային ծայրակետը, շուրջ 3 500 կմ երկարությամբ և 30-350 կմ լայնությամբ:
Անվանումը ցածրավայրի անգլերեն անվան թարգմանության արդյունք է:

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԾՈՑ - իսպաներեն Golfo de México, անգլերեն Gulf of Mexico. Ատլանտյան օվկիանոսի արևմտյան մասի ներքին ծով: Հյուսիս-արևմուտքից, հյուսիսից և արևելքից սահմանափակված է ԱՄՆ-ի տարածքով, հարավից և հարավ-արևմուտքից՝ Մեքսիկայի ափերով և **Կուբա** կղզով: Ծոցն են թափվում **Միսիսիպի**, **Ռիո Գրանդե**, **Ալաբամա**, Չատահուչի, Ռեդ, **Կոնչոս**, Պանուկո և բազմաթիվ այլ գետեր: Միջին խորությունը՝ 1 618 մ, առավելագույնը՝ 4 384 մ (Սիգսբի խորք): Երկարությունը՝ մինչև 1 960 կմ, լայնությունը՝ մինչև 1500 կմ: Մակերեսը 1 548 000 կմ^2: Ծավալը՝ 2 504 664 կմ^3:
Անվանումը ստացել է *Մեքսիկա* պետությունից:

ՄԻԼՔ - անգլերեն Milk River. գետ ԱՄՆ-ում և Կանադայում, Մոնտանա նահանգի հյուսիսային և Ալբերտա պրովինցիայի հարավային մասերում: **Միսուրի** գետի ձախ վտակը: Երկարությունը՝ 1 173 կմ: Ջրի ծախսը՝ 17 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 61 642 կմ^2: Գետը Milk River *Կաթնային գետ* անվանումը ստացել է ամերիկացի հետազոտող, զինվորական և պետական ծառայող Մերիուեզեր Լյուիսի կողմից:

ՄԻՆԵՍՈՏԱ - անգլերեն Minnesota River, Watpá Mnísota, ֆրանսերեն Minnesota. գետ ԱՄՆ-ում, Մինեսոտա նահանգում, **Միսիսիպիի** աջ վտակը: Սկիզբ է առնում Մինեսոտա նահանգի հարավարևմտյան մասում գտնվող Բիգ Սթոուն լճից և Ֆորտ Սնելինգի մոտ թափվում մայր գետը: Երկարությունը՝ 595 կմ: Ջրի ծախսը՝ 125 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 44 030 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Սեն Պիեռ, Ուադեբամենիսոուտե* և բազմաթիվ այլ անուններով: 1852թ-ի հունիսի 19-ին գետի այժմյան անվանումը պաշտոնապես ընդունվեց ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից:
Անվանումն առաջացել է հնդկացիական դակոտա լեզվի Mnisota Maoce *Երկիր, որտեղ ջրերը արտացոլում են երկինքը* արտահայտությունից, որտեղ mni-ն նշանակում է *ջուր* , իսկ sota-ն *գունավոր ամպոտ երկինք* :

ՄԻՉԻԳԱՆ - անգլերեն Lake Michigan, ֆրանսերեն Lac Michigan, օջիբվե Mishi-gamiing. լիճ ԱՄՆ-ում՝ **Մեծ լճերի** համակարգում: Երկարությունը՝ մինչև 494 կմ, լայնությունը՝ մինչև 190 կմ: Մակերեսը՝ 58 030 կմ^2: Միջին խորությունը՝ 85 մ, առավելագույնը՝ 281 մ:

Ծավալը՝ 4 930 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 176 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիների՝ շուրջ 2 636 կմ:
Անվանումն առաջացել է հնդկացիական օջիբվե լեզվի mishi (michi) - gami *Մեծ ջուր* բառից:

ՄԻՍԻՍԻՊԻ - անգլերեն Mississippi River, ֆրանսերեն Mississippi, օջիբվե Misi-ziibi, դակոտա Mníšošethąka, մայամի-իլինոյս Mihsi-siipiiwi, շայեն Ma'xeé'ometāā'e, կայովա Xósáu, արապահո փաունի KickaátitBeesniicie. գետ ԱՄՆ-ում, աշխարհի խոշորագույն գետերից մեկը: Սկիզբ է առնում Իտասկա լճից և հոսելով ԱՄՆ-ի 10 նահանգներով թափվում **Մեքսիկական** ծոց: Վտակներն են՝ **Միսուրի**, **Օհայո**, **Դե Մոյն**, **Արկանզաս**, Սեն Կրուա, **Վիսկոնսին** և այլ գետեր: Ընդունված է Միսիսիպին բաժանել 2 հատվածի՝ Վերին և Ստորին Միսիսիպիների: Երկարությունը՝ 3 734 մ: Ջրի ծախսը՝ 16 792 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 2 981 076 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Ռիո դել Էսպիրիտու Սանտո, Կոնսեպսյոն, Կոլբեր, Սեն Լուի* անուններով:
Անվանումը գետի հնդկացիական օջիբվե լեզվի Misi-ziibi *Մեծ գետ* անվան ձևափոխման արդյունք է:

ՄԻՍՈԼ ՀԱ - իսպաներեն Cascada de Misol-Ha. ջրվեժ Մեքսիկայում, Չյապաս նահանգում, համանուն գետի վրա: Անկման բարձրությունը՝ 45 մ:
Անվանումը հնդկացիական չոլ լեզվից թարգմանաբար նշանակում է *Ջրվեժ* :

ՄԻՍՈՒՐԻ - անգլերեն Missouri Plateau, ֆրանսերեն Coteau du Missouri. տափարակ սարահարթ ԱՄՆ-ում և Կանադայում, **Մեծ Հարթավայրերի** միջին մասում Միսուրի գետի ավազանում: Միջին բարձրությունները տատանվում են արևելքում 500 մ-ից մինչև 1 600 մ արևմուտքում, լեռնային մասերում՝ տեղ-տեղ 2 200 մ:
Անվանումը ստացել է *Միսուրի* գետից:

ՄԻՍՈՒՐԻ - անգլերեն Missouri River, ֆրանսերեն Missouri, ալգոնկիներեն Pekitanoui, Big Muddy, Mighty Mo, Wide Missouri, հարավային փաունի Kícpaaruksti՝, լակոտա Mnišoše[. գետ ԱՄՆ-ում, **Միսիսիպիի** երկարությամբ առաջին և ջրառատությամբ երկրորդ օժանդակը: Վտակներն են՝ **Ելոուստոն**, **Փլատ**, Կանզաս, Օսեյջ, Ջեֆերսոն, Մեդիսոն և այլ գետեր: Երկարությունը՝ 3 767 կմ: Ջրի ծախսը՝ 2 478 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 1 371 010 կմ^2:
Գետն անվանվել է նրա ափերին բնակություն հաստատած հնդկացիական միսուրի ցեղի պատվին, որի սիու լեզվի ouemessourit ինքնանունը բառացի նշանակում է *Նրանք, ովքեր ունեն կանոե* :

ՄԻՍՏԱՍԻՆԻ - ֆրանսերեն Lac Mistassini , անգլերեն Lake Mistassini, կրի Mista assini, ինոու Mishta ashini. լիճ Կանադայում, Քվեբեկ պրովինցիայի կենտրոնական մասում: Երկարությունը՝ մինչև 161 կմ, լայնությունը՝ մինչև 19 կմ: Մակերեսը՝ 2 335 կմ^2: Միջին խորությունը՝ 75 մ, առավելագույնը՝ 183 մ: Ծավալը՝ 175,1 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 372 մ: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 4 148 կմ^2: Ափագծի երկարությունը կղզիների հետ միասին՝ 1 295 կմ: Լճից արտահոսում է Ռուփերտ գետը:
Նախկինում հայտնի էր *Ուտակգամի, Տիմագինգ, Միստասին, Միստասինս* և այլ անուններով:
Անվանումն առաջացել է հնդկացիական կրի լեզվի mista assini *Մեծ քար* արտահայտությունից:

ՄԿԱՐԹՈՒՐ ՊԻԿ - անգլերեն McArthur Peak, ֆրանսերեն McArthur Peak. լեռնագագաթ Կանադայում, Յուկոն վարչական տարածքում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 344 մ, հարաբերականը՝ 924 մ:
1886թ-ին անվանվել է կանադացի գեոդեզիստ և լեռնագնաց *Ջեյմս Ջոզեֆ ՄկԱրթուրի* պատվին:

ՄՅՈՐՉԻՍՈՆ - անգլերեն Murchison Promontory, ֆրանսերեն Promontoire Murchison. 72° 00' 10.67"N, 94° 36' 42,44"W կոորդինատներով հրվանդան, Կանադայի Բութիա հյուսիսային մասում, Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մայրցամաքային ծայրակետը: Անվանել է հռչակավոր շոտլանդացի երկրաբան *Ռոդերիկ Իմփի Մյորչիսոնի* պատվին:

ՄՈԴ ԹԱԳՈՒՀՈՒ ԾՈՑ - անգլերեն Queen Maud Gulf, ֆրանսերեն Golfe de la Reine-Maud. Քենտ և **Ադելեյդ** հրվանդանների միջև ընկած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց: Երկարությունը՝ 72 կմ, լայնությունը՝ 135 կմ: Ափագծի երկարությունը՝ 290 կմ:
Ծոցն են թափվում բազմաթիվ գետեր՝ Էլիս Արմարկ, Փերի և այլն:
Անվանվել է Նորվեգիայի թագավոր Հոկոն VII-ի տիկին *Մոդ Շառլոտ Մերի Վիկտորիայի* պատվին:

ՄՈԽԱՎԵ - անգլերեն Mojave Desert, իսպաներեն Desierto de Mojave. անապատ ԱՄՆ-ի հարավ-արևմուտքում: Մակերեսը՝ մոտ 35 000 կմ^2: Բարձր կետը՝ Չառլզտոն Պիկ գագաթն է 3 632 մ: Ցածր կետը՝ **Մահվան հովտի** Բադուոթեր ավազանն է -86 մ:
Անվանվել է մոխավե հնդկացիական ցեղի պատվին, որի Aha macave ինքնանունը բառացի թարգմանվում է *Ջրի երկայնքով (ապրողներ)*:

ՄՈՆԱ - իսպաներեն Canal de la Mona, անգլերեն Mona Passage. նեղուց **Հայիթի** և **Պուերտո Ռիկո** կղզիների միջև: Իրար է միացնում Ատլանտյան օվկիանոսը և **Կարիբյան** ծովը: Լայնությունը՝ մինչև 140 կմ:
Անվանվել է այստեղ բնակվող հնդկացիական տաինո ցեղի առաջնորդ Ámona-յի պատվին:

ՄՈՍԿԻՏՈՍ - իսպաներեն Golfo de los Mosquitos. **Կարիբյան** ծովի ծոց Պանամայի հյուսիսային ափերի մոտ: Արևմուտքում սահմանափակված է Վալյենտե թերակղզով: Երկարությունը՝ 165 կմ, լայնությունը՝ 50 կմ: Այստեղ է գտնվում Էսկուդո դե Վերագուաս կղզին: Ծոցն են թափվում Կալովեբորա, Գուասարո, Կոնսեպսյոն, Վերագուաս, Բելեն և այլ գետեր:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Մոծակներ, մժեղներ կամ մժղուկներ* :

ՄՈՐԻՍ - անգլերեն Morice River, ֆրանսերեն Morice. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի արևմուտքում: Սկիզբ է առնում համանուն լճից և հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ՝ Հյուստոն քաղաքի մոտ միախառնվում **Բալքլի** գետին: Վտակներն են՝ Հյուստոն Թոմի Քրիկ, Լամփրի Քրիկ, Օուեն Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 90 կմ: Ջրահավաք ավազանը՝ 4 270 կմ^2:
Անվանվել է միսիոներ *հայր Ադրիեն-Գաբրիել Մորիսի* պատվին:

Յ

ՅԱԿԻ - իսպաներեն Río Yaqui. գետ Մեքսիկայի հյուսիս-արևմուտքում: Սկիզբ է առնում **Արևմտյան Սյեռա Մադրեից**՝ Բավիսպե և Պապիգոչի գետերի միախառնումից, հոսում հարավային ուղղությամբ, ապա էսպերանսա քաղաքի մոտ փոխելով իր ուղղությունը արևմտյանի՝ թափվում **Կալիֆոռնիական** ծոց: Երկարությունը՝ 410 կմ (Յակի-Պապիգոչի վտակի հետ՝ 1050 կմ): Ջրի ծախսը՝ 100 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 72 540 կմ^2: Վերին հոսանքներում հայտնի է նաև *Միրուպա, Ուապոկա, Արոս, Յոկի* և այլ անուններով:
Անվան հիմքում ընկած է իսպաներեն ya qui *և այստեղ* կամ *և ով* արտահայտությունը:

ՅՈԽՈԱ - իսպաներեն Lago de Yojoa. լիճ Կենտրոնական Ամերիկայում, Հոնդուրասում: Երկարությունը՝ մինչև 17,7 կմ, լայնությունը՝ մինչև 9,21 կմ: Մակերեսը՝ 87 կմ^2:Միջին խորությունը՝ 15 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 639 մ: Ծավալը՝ 1,3 կմ^3:
Անվանումն առաջացել է հնդկացիական մեխիկանո ցեղի լեզվից և թարգմանաբար նշանակում է *Երկնային գունավոր ջրեր*:

ՅՈՍԵՄԻԹԻ - անգլերեն Yosemite Falls, ավանիչի Cholock. ջրվեժ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիա նահանգի Յոսեմիթի ազգային պարկում: Ունի 3 սանդղավանդ: Անկման ընդհանուր բարձրությունը՝ 739 մ, լայնությունը՝ 28 մ: Ջրի միջին ծախսը՝ 48 մ^3/վրկ:
Նախկինում հայտնի էր նաև *Չոլոկ* անվամբ:
Yosemite անվանումը միվոկ հնդկացիական ցեղի լեզվից բառացի նշանակում է *Նրանք, ովքեր սպանում են*:

ՅՈՒԿԱՏԱՆ - իսպաներեն Península de Yucatán, անգլերեն Yucatán Peninsula. **Մեքսիկական** ծոցը **Կարիբյան** ծովից անջատող թերակղզի Կենտրոնական Ամերիկայում: Մակերեսը՝ 181 000 կմ^2: Յուկատան թերակղզու հյուսիս-արևմուտքում է գըտնվում 65 000 000 տարի առաջ դինոզավրերի վերացման պատճառ դարձած մեծ երկնաքարի անկմամբ առաջացած Չիկսուլուբ խառնարանը:
Մեծ հավանականությամբ անվանումն առաջացել է յուկատեկ լեզվի yuk'al-tan *բոլոր խոսողները (ասունները)* արտահայտությունից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է հնդկացիական նաուատլ լեզվի yuhcatla *Լքված վայր* բառից:

ՅՈՒԿԱՏԱՆԻ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Canal de Yucatán, անգլերեն Yucatán Channel. նեղուց Յուկատան թերակղզու և **Կուբա** կղզու միջև: Իրար է միացնում **Կարիբյան** ծովը և **Մեքսիկական** ծոցը: Նվազագույն լայնությունը՝ 217 կմ (**Կուբայի** Սան Անտոնյո և Յուկատան թերակղզու Կատոչե հրվանդանների միջև): Առավելագույն խորությունը՝ 2 779 մ: Անվանումը ստացել է *Յուկատան* թերակղզուց:

ՅՈՒԿՈՆ - անգլերեն Yukon River, ֆրանսերեն Yukon. գետ Կանադայի հյուսիս-արևմուտքում և ԱՄՆ-ի Ալյասկա նահանգում: Սկիզբ է առնում Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի Աթլին լիճը շրջապատող ճահիճներից և հոսելով հյուսիսարևմտյան, ապա արևմտյան ուղղությամբ՝ Կուսիլվակ բնակավայրի մոտ թափվում Բերինգի ծովը: Վտակներն են՝ Թեսլին, Բիգ Սալմոն, Փելլի, **Քլոնդայկ**, Ուայթ, Չառլի, Բիվեր Քրիկ և այլ

գետեր: Երկարությունը՝ 3 190 կմ: Ջրի ծախսը՝ 6 430 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 854 700 կմ^2:
Յուկոն անվանումն առաջացել է հնդկացիական գվիչին լեզվի chچ gąjj han *սպիտակ ջրի գետ* արտահայտության կրճատումից:

ՅՈՒՆԻՎԵՐՍԻԹԻ ՊԻԿ - անգլերեն University Peak. լեռ Ալյասկայում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 420 մ, հարաբերականը՝ 594 մ:
1930թ-ին անվանվել է ամերիկացի լեռնագնաց հետազոտող և Ալյասկայի համալսարանի 2-րդ նախագահ Տերիս Մուրի կողմից ի պատիվ հարազատ համալսարանի:

Ն

ՆԱՍ - անգլերեն Nass River, ֆրանսերեն Nass. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Սկիզբ է առնում **Առափնյա** լեռնաշղթայից, համանուն լճից և Փրինս Ռուփերտ քաղաքից հյուսիս-արևելք թափվում Փորթլենդ ծոցը: Վտակներն են՝ Չիտին, Կինկուշ, Քրանբերի, Ուայթ, Ֆլաթ և այլ գետեր: Երկարությունը՝ 380 կմ: Ջրի ծախսը՝ 770 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 20 839 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Լիսիմս, Գիտ Տքսաեմսիմ* անուններով:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական տլինգիտ լեզվի naas *աղիքներ* բառը, որով ընդգծվում է գետի նշանակությունը բնիկների սննդակարգում, հաշվի առնելով այստեղ Thaleichthys pacificus տեսակի խաղաղօվկիանոսյան սաղմոնիկ ձկան առատությունը:

ՆԱՍԱՍ - իսպաներեն Río Nazas. գետ Մեքսիկայում: Սկիզբ է առնում **Արևմտյան Սյեռա Մադրե** լեռներից: Երկարությունը շուրջ՝ 600 կմ: Ջրի ծախսը՝ 200 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 57 101 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Տիաուալիլո* անվամբ:
Գետի այժմյան անվանումն առաջացել է հնդկացիների կողմից ձկնորսության ժամանակ օգտագործվող հատուկ nasas անվամբ կողովներից:

ՆԵՎԱԴՈ ԴԵ ՏՈԼՈՒԿԱ - իսպաներեն Nevado de Toluca, նաուատլ Xinantecatl. ստրատոհրաբուխ Մեքսիկայում, Մեխիկոյից 80 կմ արևմուտք, Տոլուկա քաղաքի մոտ: Վեր է խոյանում **Լերմա** գետի հովտում: Բացարձակ բարձրությունը՝ 4 680 մ, հարաբերականը՝ 2 210 մ: Խառնարանի տրամագիծը 1 500 մ է: Վերջին ժայթքումը մ.թ.ա. 1350 թ.: Խառնարանը հրաբխային գմբեթով բաժանվում է 2 մասի, որոնցում տեղակայված են 2 ջրավազաններ՝ Արևի և Լուսնի լճերը:
Տոլուկա անվանումն առաջացել է նաուատլ լեզվի Tollohcan *Տոլոհ աստծո կացարան* բառից:
Հրաբխի անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ձյունե Տոլուկա*:

ՆԵՏԻԼԻՆԳ - անգլերեն Nettilling Lake, ֆրանսերեն Lac Nettilling. լիճ Կանադայի հյուսիս-արևելքում, **Բաֆֆինի երկիր** կղզու հարավային մասում: Երկարությունը՝ մինչև 123 կմ, լայնությունը՝ մինչև 87 կմ: Մակերեսը՝ 5 542 կմ^2: Միջին խորությունը՝ 21 մ, առավելագույնը՝ 132 մ: Ծավալը՝ 116,4 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 29 մ:
1883թ-ին անվանվել է ամերիկացի մարդաբան Ֆրանց Ուրի Բոասի կողմից, Foca anillada տեսակի Օղակավոր փոկի էսկիմոսերեն netsilak անունից:

ՆԵՐՍԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Nares Strait, ֆրանսերեն Détroit de Nares, դանիերեն Nares Straedet. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուցների համակարգ, **Գրենլանդիայի** հյուսիսարևմտյան մասի և **Էլսմիր** կղզու միջև: Իրար է միացնում **Բաֆֆինի** և **Լինքոլնի** ծովերը: Երկարությունը՝ մինչև 500 կմ, լայնությունը՝ 24 կմ: Անվանվել է բրիտանական նավատորմի սպա և բևեռախույզ *Ջորջ Սթրոնգ Ներսի* պատվին:

ՆԻԱԳԱՐԱՅԻ ՋՐՎԵԺ - անգլերեն Niagara Falls, ֆրանսերեն Chutes du Niagara. ջրվեժների համակարգ ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին, Նիագարա գետի վրա: Ունի 3 սանդղղավանդ: Անկման բարձրությունը՝ 51 մ, լայնությունը մինչև 792 մ: Ջրի միջին ծախսը 2 400 մ^3/վրկ:
Անվանումը ստացել է համանուն գետից, որն իր հերթին անվանվել է հնդկացիական իրոկեզ ցեղի Ongniaahra բնակավայրից, որի անունը բառացի թարգմանվում է *Երկատված երկիր* :

ՆԻԿԱՐԱԳՈՒԱ - իսպաներեն Lago Cocibolca / Gran Lago de Nicaragua. լիճ Կենտրոնական Ամերիկայում՝ Նիկարագուայում: Երկարությունը՝ մինչև 161 կմ, լայնությունը՝ մինչև 71 կմ: Մակերեսը՝ 8 264 կմ^2: Միջին խորությունը՝ 13 մ, առավելագույնը՝ 45 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 31,7 մ: Ծավալը՝ 108 կմ^3: Լիճն են թափվում Տիպատապա, իսկ արտահոսում՝ Սան Խուան գետերը: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 23 844 կմ^2:
Անվանվել է *Նիկարագուա* պետությունից:

ՆԻԿՈՅԱ - իսպաներեն Golfo de Nicoya. Խաղաղ օվկիանոսի ծոց Կոստա Ռիկայի արևմտյան ափերի մոտ: Երկարությունը՝ 121 կմ, լայնությունը՝ 61 կմ: Ծոցն են թափվում Տեմպիսկե, Գրանդե դե Տարկոլես, Բեբեդերո և այլ գետեր: Այստեղ են տեղակայված Չիրա, Վենադո Կաբալյո, Սան Լուկաս, Սեդրոս և այլ կղզիներ:
Անունը ստացել է *Նիկոյա* թերակղզուց:

ՆԻԿՈՅԱ - իսպաներեն Península de Nicoya. թերակղզի Կենտրոնական Ամերիկայում՝ Կոստա Ռիկայի հյուսիս-արևմուտքում և **Նիկոյա** ծոցը բաժանում է Խաղաղ օվկիանոսից: Երկարությունը՝ 121 կմ, լայնությունը՝ 60 կմ: Մակերեսը՝ 1 074,95 կմ^2: Բարձր կետը Ասուլ գագաթն է 1 018 մ: Այստեղ հոսող գետերից խոշորագույնը Տեմպիսկեն է:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական նաուատլ լեզվի necoyauh արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է *Երկու կողմից ջրերով պատած (երկիր)* :
Մեկ այլ վարկածի համաձայն այս վայրերի XVI դարերի տիրակալ *Նիկոյա* ցեղապետի պատվին

ՆԻՊԻԳՈՆ - անգլերեն Lake Nipigon, ֆրանսերեն Lac Nipigon, օջիբվե Animbiigoozaaga'igan. լիճ Կանադայում, Օնտարիո պրովինցիայի հյուսիս-արևմուտքում: Մակերեսը՝ 4 848 կմ^2: Միջին խորությունը՝ 54,9 մ, առավելագույնը՝ 165 մ: Ծավալը՝ 266,2 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 259 մ: Ջրահավաք ավազանը՝ 25 400 կմ^2: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ 1 044 կմ: Լճից արտահոսում է Նիպիգոն գետը: Նախկինում հայտնի էր *Ալիմիբեգ, Ալեմիպիգոն, Ալեպիգոն* և *Նեպիգոն* անուններով: Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է օջիբվե լեզվի Animbiigoong *Շարունակական ջրեր* բառը:

ՆՅՈՒԵԼԹԻՆ - անգլերեն Nueltin Lake, ֆրանսերեն Lac Nueltin, չիպևյաներեն Nu-thel-tin-tu-ch-eh. լիճ Կանադայում Մանիտոբա պրովինցիայի և Նունավուտ վարչական տարածքի սահմանին: Երկարությունը՝ մինչև 144 կմ: Մակերեսը՝ 2 279 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 278 մ: Ջրահավաք ավազանը՝ 27 000 կմ^2: Լճից արտահոսում է Տլևիազա գետը:
Անվանումը հնդկացիական չիպևյաներեն լեզվից թարգմանաբար նշանակում է *ննջող կղզու լիճ* :

ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴ - անգլերեն Newfoundland, ֆրանսերեն Terre-Neuve, միկմակ Ktaqamk / Taqamkuk, ինուու Akamassiss, ինուկտիտուտ (ինուտտիտուտ) Ikkarumikluak, շոտլանդերեն An, պորտուգալերեն Terra NovaTalamh Ùr / Talamh an Èisg / Eilean an Truisg, իտալերեն Terranova, նորվեգերեն Newfoundland. ժայռոտ կղզի Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևելյան ափերի մոտ՝ Կանադայում: Մակերեսը՝ 111 390 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 9 956 կմ: Բարձր կետը Կեբոքս գագաթն է 812 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Նոր հայտնաբերած երկիր* :

ՆՈՐ ՇՈՏԼԱՆԴԻԱ - անգլերեն Nova Scotia peninsula, ֆրանսերեն Péninsule de la Nouvelle-Écosse. թերակղզի Կանադայի հարավ-արևելքում: Ողողվում է արևելքում Կանսո, հյուսիսում՝ Նորթ Ամբեռլենդ նեղուցների, արևմուտքում՝ **Մեն**, հյուսիս-արևմուտքում՝ Ֆանդի ծոցերի, հարավում և հարավ-արևելքում՝ Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Երկարությունը մոտ 430 կմ, լայնությունը՝ 130 կմ: Ափագծի երկարությունը՝ 7 579 կմ: Բարձր կետը՝ 275 մ: Ափերը խիստ մասնատված են:
Նախկինում հայտնի էր *Ակադիական թերակղզի* անվամբ:
Անվանվել է *Շոտլանդիայի* երկրի պատվին, որին ավելացվել է *Նոր* մակդիրը:

ՆՈՐԴՈՍՏՐՈՒՆԴԻՆԳԵՆ - դանիերեն Nordostrundingen. հրվանդան **Գրենլանդիայում՝** 81° 26′ 49,34″ N, 11°07′ 52,24″ W կոորդինատներ ունեցող կղզու և Հյուսիսային Ամերիկայի արևելյան կղզային ծայրակետը:
Անվանումը դանիերենից թարգմանաբար նշանակում է *Հյուսիսարևելյան բոլորակություն* :

ՆՈՐԹ ՓԱԼԻՍԵՅԴ - անգլերեն North Palisade. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիայում՝ **Սյեռա Նևադա** լեռնազանգվածում: Լեռան լանջին է գտնվում Փալիսեյդս սառցադաշտը: Բացարձակ բարձրությունը՝ 4 343 մ, հարաբերականը՝ 882 մ:
1903թ-ի հուլիսի 23-ին անվանվել է լեռնագնաց Ջոզեֆ Նիսբեթ Լեկոնտի կողմից:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Հյուսիսային ցանկապատ (ցցապատ)* :

ՆՈՐԹԱՄԲԵՌԼԱՆԴ - անգլերեն Northumberland Strait, ֆրանսերեն Détroit de Northumberland. նեղուց Կանադայում՝ **Սուրբ Լավրենտիոսի** ծոցի հարավային մասում: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 13-43 կմ: Առավելագույն խորությունը՝ 67 մ: Անվանվել է Անգլիայի հյուսիս-արևելքում գտնվող *Նորթամբեռլանդ* կոմսության պատվին:

ՆՈՒՈՒՍՈՒԱԿ - դանիերեն Nuussuaq-halvøen. լեռնոտ թերակղզի Գրենլադիայի արևմուտքում: Ողողվում է հյուսիսից Ուումանակ ֆիորդի, արևմուտքից՝ **Բաֆֆինի** ծովի և հարավ-արևմուտքից՝ Սուլորսուակ նեղուցի ջրերով: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ 48 կմ: Բարձր կետը՝ 2 144 մ:

Նախկինում հայտնի էր նաև *Նուգսուակ* անվամբ:
Այժմյան անվանումը գրենլանդերենից թարգմանաբար նշանակում է *Մեծ թերակղզի*:

Շ

ՇԱՄՊԼԵՆ - ֆրանսերեն Lac Champlain, անգլերեն Lake Champlain, աբենակի Pitawbagok, մոհաուկերեն Kaniatarakwà:ronte. քաղցրահամ լիճ ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին: Երկարությունը՝ մինչև 172 կմ, լայնությունը՝ մինչև 23 կմ: Մակերեսը՝ 1 331 կմ^2: Միջին խորությունը՝ 19,5 մ, առավելագույնը՝ 122 մ: Ծավալը՝ 25,9 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 23 720 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը 29,6 մ: Ափագծի երկարությունը կղզիների հետ՝ 945 կմ: Լճում կա շուրջ 80 կղզիներ: Լիճն են թափվում Ուինուսկ, Օտեռ Քրիկ, իսկ արտահոսում՝ Ռիշելյո գետերը:
1609թ-ի հուլիսի 14-ին անվանվել է ֆրանսիացի ճանապարհորդ *Սամյուել դը Շամպլենի* պատվին:

ՇԱՍՏԱ - անգլերեն Mount Shasta, կարուկ (կարոկ) Úytaahkoo. ստրատոհրաբուխ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիայում, **Կասկադյան** լեռների համակարգում: Վերջին ժայթքումը գրանցվել է 1786 թ-ին: Լեռան լանջերին տեղակայված են 7 սառցադաշտեր: Բացարձակ բարձրությունը՝ 4 322 մ, հարաբերականը՝ 2 979 մ:
Úytaahkoo անվանումը կարուկ (կարոկ) լեզվից թարգմանաբար նշանակում է *Սպիտակ լեռ*:
Անվանվել է հնդկացիական *Շաստա* ցեղի պատվին:

Չ

ՉԻՈՒԱՈՒԱ - իսպաներեն Desierto de Chihuahua, անգլերեն Chihuahuan Desert. անապատ ԱՄՆ-ում և Մեքսիկայում: Երկարությունը՝ մինչև 1 280 կմ, լայնությունը՝ մինչև 440 կմ: Մակերեսը՝ 362 600 կմ^2: Բարձր կետը՝ 1 675մ:
Անվանումը հավանաբար առաջացել է նաուատլ կամ ռարամուրի լեզուներից և թարգմանաբար նշանակում է *Վայր, որտեղ հանդիպում են գետերի ջրերը*, կամ *Արտադրության վայր*:
Մեկ այլ վարկածի համաձայն անապատի անվան հիմքում ընկած է նաուատլ լեզվի xicahua *չոր ավազե վայր* բառը:

ՉԻՉԱԳՈՎ - անգլերեն Chichagof Island, տլինգիտերեն Shee Kaax. կղզի Ալյասկայի հարավ-արևելքում, **Ալեքսանդրի** կղզեխմբում: Երկարությունը՝ 121 կմ, լայնությունը՝ մինչև 89,1 կմ: Մակերեսը՝ 5 305,88 կմ^2: Բարձր կետը՝ 1 242,8 մ:
1805 թ-ին ռուս ծովագնաց Յու. Ֆ. Լիսյանսկու կողմից անվանվել է ծովակալ *Վ. Յա. Չիչագովի* պատվին:

ՉԻՐԻԿԻ - իսպաներեն Golfo de Chiriquí. Խաղաղ օվկիանոսի ծոց Պանամայի հարավ-արևմուտքում: Եզերված է արևմուտքում Բուրիկա թերակղզով, հարավում՝ Լադրոնես կղզիներով և Մոնտուոսա կղզով, արևելքում՝ Կոյբա կղզով: Երկարությունը՝ 160 կմ, լայնությունը՝ 107 կմ:

Անվանումը հնդկացիական նգաբե-բուգլե ցեղի լեզվից բառացի նշանակում է *Լունի հովիտ*:

Պ

ՊԱԼՈՒԶ - անգլերեն Palouse Falls. ջրվեժ ԱՄՆ-ում, Վաշինգտոն նահանգի հարավ-արևելյան մասում, Պալուզ գետի վրա: Բարձրությունը՝ 221 մ: Ջրի միջին ծախսը՝ 240 մ^3/վրկ:
Անվանվել է հնդկացիական *պալուզ* ցեղի պատվին:

ՊԱՆԱՄԱՅԻ ԾՈՑ - իսպաներեն Golfo de Panam. Խաղաղ օվկիանոսի ծոց Պանամայի հարավային ափերին: Միջին խորությունը՝ 87մ, առավելագույնը՝ 220մ: Երկարությունը՝ 250 կմ, լայնությունը՝ 185 կմ: Մակերեսը՝ 2 400 կմ^2: Ծավալը՝ 209 կմ^3: Պանամայի ծոցի մաս է կազմում Տարիտա ծոցը: Ծոցի հյուսիսարևելյան մասում է տեղակայված ավելի քան 200 կղզիներից կազմված Մարգարտե կղզիները, իսկ հյուսիսային ափից է սկիզբ առնում Պանամայի ջրանցքը: Ծոցն է թափվում Տուիրա գետը:
Անվանումը ստացել է *Պանամա* երկրից:

ՊԵԼԵ - ֆրանսերեն Montagne Pelée. գործող ստրատոհրաբուխ Մարտինիկում: Բարձրությունը՝ 1 397 մ: Տխրահռչակ է 1902թ-ի մայիսի 8-ի կործանարար ժայթքումով, որի հետևանքով կործանվեց Սեն Պիեռ բնակավայրը իր շուրջ 30 000 բնակիչներով:
Հրաբխի ֆրանսերեն Montagne Pelée անվանումը թարգմանաբար նշանակում է *Ճաղատ սար*:

ՊՈՆՇԱՐՏՐԵՆ - անգլերեն Lake Pontchartrain, ֆրանսերեն Lac Pontchartrain. լիճ ԱՄՆ-ում, Լուիզիանա նահանգի հարավ-արևելքում: Երկարությունը՝ մինչև 64,4 կմ, լայնությունը՝ մինչև 38,6 կմ: Մակերեսը՝ 1 630 կմ^2: Միջին խորությունը՝ 3,9 մ, առավելագույնը՝ 20 մ: Ծավալը՝ 6,36 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը 3,65 մ: Ջրահավաք ավազանը՝ 14 200 կմ^2: Լիճն են թափվում մի քանի փոքր գետեր:
Լճի հնդկացիական Okwata անվանումը բառացի նշանակում է *Մեծ ջուր*:
1699թ-ին անվանվել է ֆրանսիացի քաղաքական գործիչ *Լուի Ֆելիպո, մարկիզ դը Պոնշարտրենի* պատվին:

ՊՈՊՈԿԱՏԵՊԵՏԼ - իսպաներեն Popocatépetl, նաուատլ Popōcatepētl. գործող ստրատոհրաբուխ Մեքսիկայում՝ Մեքսիկական բարձրավանդակում: Բացարձակ բարձրությունը՝ 5 426 մ, հարաբերականը՝ 3 020 մ (2019թ.):
Անվանումը բաղկացած է նաուատլ լեզվի popōca *ծխող* և tepētl *թումբ* բառերի միացումից՝ *Ծխող թումբ*:

ՊՈՏՈՄԱԿ - անգլերեն Potomac River. գետ ԱՄՆ-ի արևելքում: Կազմավորվում է Հարավային և Հյուսիսային Պոտոմակների միախառնումից և թափվում Ատլանտյան օվկիանոսի Չեսապիկի ծոցը: Երկարությունը՝ 652 կմ: Ջրի ծախսը՝ 323 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 38 073 կմ^2: Վտակներն են՝ Մոնոկասի, Անակոստիա, Շենանդոա և այլն:
Հնդկացիների մոտ գետը հայտնի է նաև Cohongarooton *Սագի գետ* անվամբ:

Անվանումն առաջացել է գետի ափերին բնակվող հնդկացիական *պոտոմակ* ցեղի անունից, որը թարգմանաբար նշանակում է *Առևտրի վայր* կամ *Վայր, որտեղ բերում են հարկերը*:

ՊՐԵՐԻԱՆԵՐ - անգլերեն Prairie, ֆրանսերեն Prairie. տափաստանի հյուսիսամերիկյան տեսակ ԱՄՆ–ի միջին արևմուտքում ու Կանադայում: Մակերեսը՝ շուրջ 2 700 000 կմ^2:
Անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Մարգագետիններ*:

ՊՐԻԲԻԼՈՎԻ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Pribilof Islands. 4 հրաբխային կղզիներից և մի քանի ժայռերից կազմված կղզեխումբ Բերինգի ծովում: Կղզիներն են՝ Սուրբ Պողոս, Սուրբ Գևորգ, Ջրասամույրի և Ծովափղի: Մակերեսը՝ 194,436 կմ^2:
Նախկինում հայտնի էին *Հյուսիսային Մորթյա* կղզիներ անվամբ:
1789 թ-ին անվանվել է ռուս ծովագնաց և առևտրական Գրիգորի Շելիխովի կողմից, ծովագնաց և հետազոտող *Գավրիիլ Լոգինովիչ Պրիբիլովի* պատվին:

ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ - իսպաներեն Puerto Rico, անգլերեն Puerto Rico. կղզի **Կարիբյան** ծովի հյուսիսարևելյան մասում, Անտիլների կազմում: Երկարությունը՝ 170 կմ, լայնությունը՝ 60 կմ: Մակերեսը՝ 8 943,23 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 501 կմ: Բարձր կետը Սյեռա դե Պունտա գագաթն է 1 339 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Հարուստ նավահանգիստ*:

Ջ

ՋԱՄԱՅԿԱ - անգլերեն Jamaica, պատուա Jamieka. կղզի **Կարիբյան** ծովում, իր մեծությամբ 3-րդը Անտիլներում: Երկարությունը՝ 248 կմ, լայնությունը՝ մինչև 84կմ: Մակերեսը՝ 10 991 կմ: Ափագծի երկարությունը՝ 1 022 կմ: Բարձր կետը Բլյու Մաունթին Պիկ գագաթն է 2 256 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական տաինո ցեղի արավակերեն լեզվի Xaymaca *Անտառի ու ջրի երկիր* կամ *աղբյուրների երկիր* անունից:
Խոսակցականում կղզին հայտնի է Rock *Ժայռ* անվամբ:
Կղզին հայտնի է նաև մի շարք բարբառային անուններով՝ Jamrock, Jamdown (Jamdung), Ja և այլն:

ՋԱՄԱՅԿԱՅԻ ՆԵՂՈՒՑ - ֆրանսերեն Passage de la Jamaïque, անգլերեն Jamaica Channel. **Կարիբյան** ծովի նեղուց **Ջամայկա** և **Հայիթի** կղզիների միջև: Երկարությունը՝ 50 կմ, լայնությունը՝ 190: Առավելագույն խորությունը՝ մինչև 1 200 մ:
Անվանումը ստացել է *Ջամայկա* կղզուց:

ՋԵՅՄՍ ԲՐՅՈՒՍ - անգլերեն James Bruce Falls, ֆրանսերեն Chutes James Bruce. Հյուսիսային Ամերիկայի ամենաբարձր ջրվեժը՝ Կանադայի Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Անկման բարձրությունը՝ 840 մ: Լայնությունը՝ 4,6 մ:
Անվանվել է բրիտանացի պետական գործիչ *Ջեյմս Բրյուս, Էլգին 8-րդ կոմս և Քինկարդին 12-րդ կոմսի* պատվին:

ՋԵՅՄՍԻ ԾՈՑ - անգլերեն James Bay, ֆրանսերեն Baie James, կրի Wînipekw. խոշոր ծոց Կանադայում: Հարավից հարում է **Հադսոնի** ծոցին: Երկարությունը՝ 440 կմ, լայնությունը՝ 217 կմ: Միջին խորությունը՝ 60 մ: Ծոցում կան բազմաթիվ կղզիներ՝ Ակիմիսկի, Չառլտոն, Հյուսիսային Թվին, Հարավային Թվին և այլն: Ծոցն են թափվում Օլբանի, Մուս, Ռուփերթ, Լա Գրանդ և այլ գետեր:
Անվանվել է վալիացի նավապետ *Թոմաս Ջեյմսի* պատվին:

Ռ

ՌԵԴ - անգլերեն Red Lake, օջիբվե Miskwaagamiiwi-zaaga'igan. քաղցրահամ լիճ ԱՄՆ-ում, Մինեսոտա նահանգում: Երկարությունը՝ մինչև 65 կմ, լայնությունը՝ մինչև 38 կմ: Մակերեսը՝ 1 106 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 359 մ: Առավելագույն խորությունը՝ 25,6 մ:
Լճի անվանումն օջիբվե լեզվից թարգմանաբար նշանակում է *լիճ, որն իր հեղուկով (ջրով) ներկվելու է կարմիր գույնի*:
Լճի անգլերեն անվանումը թարգմանաբար նշանակում է *Կարմիր լիճ*:

ՌԵԴ - անգլերեն Red River. գետ ԱՄՆ-ի հարավում, **Միսիսիպիի** աջ վտակը: Երկարությունը՝ 2 190 կմ: Ջրի ծախսը՝ 1 600 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 169 890 կմ^2:
Գետի անգլերեն անվանումը թարգմանաբար նշանակում է *Կարմիր գետ*:
Հայտնի է նաև *Հարավային Ռեդ* անունով:

ՌԵՅՆԻՐ - անգլերեն Mount Rainier. ստրատոհրաբուխ ԱՄՆ-ում, Վաշինգտոն նահանգում՝ **Կասկադյան** լեռներում: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 1894թ-ին: Ռեյնիրի լանջերից և սառցադաշտերից են սկիզբ առնում բազմաթիվ գետեր և գետակներ՝ **Կոլումբիա,** Պույալուպա, Ուայթ Ռիվեր և այլն: Բացարձակ բարձրությունը՝ 4 392 մ, հարաբերականը՝ 4 026 մ: Գագաթը ծածկված է 87 կմ^2 մակերեսով շուրջ 40 սառցադաշտերով, որոնցից խոշորագույնը Էմոնսն է:
Անվանվել է բրիտանացի ծովագնաց Ջ. Վանկուվերի կողմից, բրիտանական թագավորական նավատորմի ծովակալ *Փիթեր Ռեյնիրի* պատվին:
Հայտնի է նաև *Տալոլ, Տակոմա* կամ *Տահոմա* անուններով:

ՌԵՎԻԼՅԱԽԻԽԵԴՈ - անգլերեն Revillagigedo Island. կղզի Ալյասկայի հարավարևելքում, **Ալեքսանդրի** կղզեխմբում: Երկարությունը՝ 89 կմ, լայնությունը՝ մինչև 56 կմ: Մակերեսը՝ 2 754,835 կմ^2: Բարձր կետը Ռեյդ գագաթն է 1 399,6 մ:
1792թ-ին բրիտանացի ծովագնաց Ջորջ Վանկուվերի կողմից անվանվել է *Խուան Վիսենտե դե Գուեմես Պաչեկո դե Պադիլյա ի Օրկասիտաս, Ռևիլյա Խիխեդո 2-րդ կոմսի* պատվին:

ՌԻՈ ԳՐԱՆԴԵ - անգլերեն Rio Grande, իսպաներեն Río Bravo / Río Bravo del Norte. սահմանային գետ ԱՄՆ-ում և Մեքսիկայում: Սկիզբ է առնում Կոլորադո նահանգի Սան Խուան լեռներից և հիմնականում հոսելով հարավարևելյան ուղղությամբ՝ թափվում **Մեքսիկական** ծոց: Երկարությունը՝ 3 051 կմ: Ջրի ծախսը՝ 68 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 607 965 կմ^2:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Մեծ գետ*:

Մեքսիկայում գետը հայտնի է Río Bravo *Խիզախ գետ* և Río Bravo del Norte *Հյուսիսային խիզախ գետ* անուններով:

ՌԻՈ ԳՐԱՆԴԵ ԴԵ ՍԱՆՏՅԱԳՈ - իսպաներեն Río Grande de Santiago. գետ Մեքսիկայի արևմուտքում: Սկիզբ է առնում Չապալա լճից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ թափվում Խաղաղ օվկիանոս: Վտակներն են՝ Վերդե, Խուչիպիլա, Ուայնամոտա, Բոլանյոս և այլ գետեր: Երկարությունը՝ 562 կմ: Ջրի ծախսը՝ 92 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 76 416 կմ^2:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սուրբ Հակոբի մեծ գետ* :
Հայտնի է նաև *Սանտյագո Տոտոլոտլան* և *Սանտյագո* անվամբ:

ՌՈԱՆՈՔ - անգլերեն Roanoke River. գետ ԱՄՆ-ի արևելքում: Սկիզբ է առնում **Ապալաչների** Կապույտ լեռներից, ապա հոսելով հարավարևելյան ուղղությամբ Հյուսիսային Կարոլինա նահանգում՝ թափվում Ատլանտյան օվկիանոսի Ալբեմառլ ծոցը: Վտակներն են՝ Բիգ Օտեր, Ֆոլինգ, Դան և այլ գետեր: Երկարությունը՝ 660 կմ: Ջրի ծախսը՝ 221 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 25 071 կմ^2:
Անվանումն առաջացել է ալգոնկինյան rawrenok հնդկացիների կողմից օգտագործվող խխունջե *վամպում* մանյակի անունից:

ՌՈԲՍՈՆԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Robeson Channel, ֆրանսերեն Passage Robeson, դանիերեն Robesonkanalen. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուց՝ **Ներսի** նեղուցի հյուսիսային հատվածի մի մասը: Իրար է միացնում **Հոլլի** ծոցը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի հետ: Իրարից բաժանում է **Գրենլանդիա** և **Էլսմիր** կղզիները: Երկարությունը մոտ 80 կմ, լայնությունը՝ 18-29 կմ:
1871 թ-ին անվանվել է ամերիկացի քաղաքական գործիչ և այդ ժամանակվա ռազմածովային ուժերի նախարար *Ջորջ Մաքսվել Ռոբսոնի* պատվին:

Ս

ՍԱԿՐԱՄԵՆՏՈ - անգլերեն Sacramento River, ֆրանսերեն Sacramento, իսպաներեն Río Sacramento / Río de los Sacramentos. գետ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիայի հյուսիսային և կենտրոնական մասում: Սկիզբ է առնում Շաստա ջրամբարից և հոսելով հարավային ուղղությամբ՝ թափվում Սեսուն ծոցը: Վտակներն են՝ **Փիթ**, Դիր, Ֆիզեր, Սթոնի Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 719 կմ: Ջրի ծախսը՝ 797 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 71 432 կմ^2:
Գետի հին իսպաներեն Río de los Sacramentos անվանումը թարգմանաբար նշանակում է *Սուրբ խորհուրդների գետ* :

ՍԱՄԱՆԱ - իսպաներեն Bahía de Samaná. ծոց Ատլանտյան օվկիանոսում՝ Դոմինիկանայի հյուսիսարևելյան ափերի մոտ: Երկարությունը՝ մինչև 65 կմ, լայնությունը՝ մինչև 25 կմ: Առավելագույն խորությունը՝ 45 մ: Մակերեսը՝ ավելի քան 500 կմ^2: Այստեղ է գտնվում Բակարդի կղզին: Ծոցն են թափվում Յունա և Բառակոտե գետերը:
Նախկինում հայտնի էր Ֆլեչաս և Սանտա Բարբարա անուններով:

Այժմյան անվանումը, դա ծոցի հնդկացիական տաինո լեզվի xamaná անվան հնչյունափոխության արդյունք է, որը ըստ տեղանվանագետ Ալբերտիի հավանաբար ունի փյունիկյան ծագում և նշանակում է վայր, ուր ժամանեց կարթագենյան ղեկավար *Զամնան,* որի անունը տեղացիների կողմից ընկալվեց որպես *Զամանա*:

ՍԱՄԱՆԱ - իսպաներեն Península de Samaná. լեռնոտ թերակղզի **Հայիթի** կղզում՝ Դոմինիկանայի հարավարևելյան մասում: Ողողվում է հյուսիսից և արևելքից՝ Ատլանտյան օվկիանոսի, հարավից՝ **Սամանա** ծոցի ջրերով: Մակերեսը՝ 1 400 կմ^2: Բարձր կետը՝ 606 մ:
Այժմյան անվանումը, դա ծոցի հնդկացիական տաինո լեզվի xamaná անվան հնչյունափոխության արդյունք է, որը ըստ տեղանվանագետ Ալբերտիի հավանաբար ունի փյունիկյան ծագում և նշանակում է վայր, ուր ժամանեց կարթագենյան ղեկավար *Զամնան,* որի անունը տեղացիների կողմից ընկալվեց որպես *Զամանա*:

ՍԱՆՏԱ ԿԱՏԱԼԻՆԱ - անգլերեն Gulf of Santa Catalina, իսպաներեն Golfo de Santa Catalina. Խաղաղ օվկիանոսի ծոց ԱՄՆ-ի հարավարևմտյան և Մեքսիկայի հյուսիսարևմտյան մասերում: Երկարությունը՝ 160 կմ, լայնությունը՝ 95 կմ: Մակերեսը՝ 42 857 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Սան Սալվադորի* ծոց անվամբ:
Անվանումը ստացել է այստեղ գտնվող Սանտա Կատալինա կղզուց, որն իր հերթին, 1602թ-ի նոյեմբերի 24-ին անվանվել է այդ օրվա Սուրբ՝ *Եկատերինա Ալեքսանդրացու* պատվին:

ՍԱՆՏԱ ՄԱՐԻԱ ՌԵԳԼԱ - իսպաներեն Prismas basálticos de Santa María Regla. բազալտե հատվածակողմեր Մեքսիկայում, Ուասակա դե Օկամպո համայնքում: Բարձրությունը՝ 30-40 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանվում է իբրև *Սուրբ Մարիամ Տիրամայր*:

ՍԱՈՒԹՀԵՄՓՏՈՆ - անգլերեն Southampton Island, ֆրանսերեն Île Southampton, ինուկտիտուտ Shugliaq. խոշոր կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում, **Հադսոնի** ծոցի մուտքի մոտ: Երկարությունը՝ 355 կմ, լայնությունը՝ 255 կմ: Մակերեսը՝ 41 214 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 944 կմ: Բարձր կետը Մաթիասեն գագաթն է 625 մ:
Անվանվել է ի պատիվ Անգլիայի *Սաութհեմփտոն* քաղաքի:

ՍԱՊԱՏԱ - իսպաներեն Península de Zapata. խոշոր թերակղզի **Կուբա** կղզու հարավային մասում: Ողողվում է հյուսիսից՝ Բրոա, արևմուտքից և հարավ-արևմուտքից՝ **Բատաբանո**, հարավից՝ Կասոնես ծոցերի և արևելքից՝ Կոչինոս ծովախորշի ջրերով: Երկարությունը՝ 135 կմ, լայնությունը՝ 90 կմ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Մաշիկ*:

ՍԱՍԿԱՉԵՎԱՆ - անգլերեն Saskatchewan River, ֆրանսերեն Rivière Saskatchewan, կրի kisiskāciwani-sīpiy. խոշոր գետ Կանադայում, Սասկաչևան և Մանիտոբա պրովինցիաներում: Կազմավորվում է Հյուսիսային և Հարավային Սասկաչևան գետերի միախառնումից ու հոսելով արևելյան ուղղությամբ՝ թափվում Սեդար լիճը: Վտակներն են՝ Բլուդվեյն, Բերենս, Փոփլար, Մանիգոտագան, Դրանքեն, Շուգար Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 547 կմ: Ջրի ծախսը՝ 634 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 335 900 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական կրի լեզվի kisiskāciwani-sīpiy *արագահոս գետ* արտահայտությունից:

ՍԱՍԿՈՒԵՀԱՆԱ - անգլերեն Susquehanna River, ունամի Siskwahane. գետ ԱՄՆ-ի արևելքում: Սկիզբ է առնում Նյու Յորք նահանգի Օտսեգո լճից և հոսելով հարավ-արևմտյան, ապա հարավային և հարավարևելյան ուղղությամբ ու Մերիլենդ նահանգում թափվում Չեսապիկի ծոց: Երկարությունը՝ 747 կմ: Ջրի ծախսը՝ 1 135 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 71 225 կմ^2:
Անվանվել է հնդկացիական սասկուեհանա ցեղից, որի անունը ալգոնկինյան լեզվից բառացի նշանակում է *կեղտոտ* կամ *քամոտ հոսք*:

ՍԱՈՒԹԵՌՆ ԻՆԴԻԱՆ ԼԵՅՔ - անգլերեն Southern Indian Lake, ֆրանսերեն Lac Southern Indian. լիճ Կանադայում՝ Մանիտոբա պրովինցիայի հյուսիսային մասում: Երկարությունը՝ մինչև 151 կմ: Մակերեսը՝ 2 247 կմ^2: Միջին խորությունը՝ 9,8 մ, առավելագույնը՝ 30 մ: Ծավալը՝ 22 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 257 մ: Ափագծի երկարությունը կղզիների հետ միասին՝ 3 798 կմ: Ջրահավաք ավազանը՝ 242 000 կմ^2:
Անվանվել է հնդկացիական կրի ցեղախմբի *հարավային* ճյուղի պատվին:
Հնդկացիները լիճն անվանում են Missi sakahigan *Մեծ լիճ*:

ՍԵԼԱՎԻԿ - անգլերեն Selawik Lake. լիճ ԱՄՆ-ում, Ալյասկա նահանգի հյուսիսարևմտյան մասում: Երկարությունը՝ մինչև 50 կմ: Մակերեսը՝ 1 050 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 0 մ:
Անվան հիմքում ընկած է ինուպիակ լեզվի siilvik *փշերի վայր* բառը:

ՍԵԼԻԾ - անգլերեն Salish Sea, ֆրանսերեն Mer des Salish. ծով, ջրային համակարգ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի հարավարևմտյան և ԱՄՆ-ի Վաշինգտոն նահանգի հյուսիսարևմտյան մասերի միջև: Իր մեջ է ընդգրկում Ջորջիա նեղուցը, Փյուջետ Սաունդ ծոցերի համակարգը և Խուան դե Ֆուկա նեղուցը, ինչպես նաև Խաղաղ օվկիանոսի ափամերձ մասերը:
Առաջին անգամ 1988թ-ին անվանումը օգտագործել է կենսաբան Բերթ Վեբերը:
Ծովն անվանվել է այստեղ բնակվող հնդկացիական *սելիշներ* ցեղերի պատվին:

ՍԵՄԻՍՈՊՈՉՆՈՅ - անգլերեն Semisopochnoi Island / Unyak Island, ալեուտերեն Unyax. հրաբխային կղզի Բերինգի ծովի հարավում՝ **Ալեուտյան** կղզեխմբում՝ Առնետների կղզիների կազմում: Երկարությունը՝ 20 կմ, լայնությունը՝ 18 կմ: Մակերեսը՝ 221,59 կմ^2: Բարձր կետը Անվիլ Պիկ գագաթն է 1 221 մ:
Անվանումն ունի ռուսական ծագում և կազմված է семь *յոթ* և сопка *լեռ, բլուր, հրաբուխ* բառերի միացումից:

ՍԵՆ ԿԼԵՐ - անգլերեն Lake St. Clair, ֆրանսերեն Lac Sainte-Claire. լիճ **Մեծ լճերի** համակարգում, ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին: Երկարությունը՝ մինչև 42 կմ, լայնությունը՝ մինչև 39 կմ: Մակերեսը՝ 1 114 կմ^2: Միջին խորությունը՝ 3,4 մ, առավելագույնը՝ 8,2 մ: Ծավալը՝ 3,78կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 175 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ շուրջ 414 կմ է:
Լիճն է թափվում Սեն Կլեր, իսկ արտահոսում՝ Դետրոյտ գետերը:
1679 թ-ի օգոստոսի 12-ին անվանվել է ֆրանսիացի հետազոտող Ռենե Ռոբեր Կավելիե դը Լա Սալի կողմից, կաթոլիկ եկեղեցու *Սուրբ Կլառայի՝ Կյարա Օֆրեդուչո Ասիզացու* պատվին:

ՍԵՆԹ ՉԱՌԼԶ - անգլերեն Cape St. Charles, ֆրանսերեն Cap St Charles. 52° 14′ 34,45″ N, 55° 33′ 01,74″ W կոորդինատներով հրվանդան, **Լաբրադոր** թերակղզու հարավարևելյան մասում, Հյուսիսային Ամերիկայի արևելյան մայրցամաքային ծայրակետը:
Անվանվել է XVII դարի ճիզվիտ *Սուրբ Շառլ* (անգլ. *Չառլզ*) *Գառնյեի* պատվին:

ՍԵՆԹ ՋՈՆՍ - անգլերեն St. Johns River, իսպաներեն Río San Juan. գետ ԱՄՆ-ում, Ֆլորիդա նահանգում: Սկիզբ է առնում Ինդիան Ռիվեր շրջանից և հոսելով հյուսիսային ուղղությամբ, Ջեքսոնվիլ բնակավայրի մոտ՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Միլս Քրիկ, Էկոնլոկհաթչի, Ուեկիվա, Թրութ, Փոտսբուրգ Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 499 կմ:
Նախկինում հայտնի էր *Ռիո դե Կոռյենտես* և *Սան Մատեո* անվանումներով:
Անվանվել է *Սուրբ Հովհաննես Առաքյալի* պատվին:

ՍԵՆՖՈՐԴ - անգլերեն Mount Sanford. վահանաձև հրաբուխ Ալյասկայի արևելյան մասում, Վրանգելի հրաբխային դաշտում՝ Կոպեռ գետի մոտ: Իրենից ներկայացնում է անդեզիտներից կազմված հնագույն պիկ: Բացարձակ բարձրությունը՝ 4 949 մ, հարաբերականը՝ 2 343 մ:
1885թ-ին անվանվել է ԱՄՆ-ի բանակի լեյտենանտ Հ.Տ. Ալենի կողմից, իր նախապապ՝ *Ռուբեն Սենֆորդի* պատվին:

ՍԹԻԼ - անգլերեն Mount Steele, ֆրանսերեն Mont Steele. լեռ Կանադայի Յուկոն վարչական տարածքում՝ **Սուրբ Եղիայի** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 5 073 մ, հարաբերականը՝ 793 մ: Լեռան գագաթից են սկսվում մի շարք սառցադաշտեր՝ Խիտինա, Ուոլշ և այլն:
1900թ-ին անվանվել է գեոդեզիստ Ջ.Ջ. ՄկԱրթուրի կողմից, Հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության գնդապետ *Ս.Բ. Սթիլի* պատվին:

ՍԻԳՈՒՈՒՊ - գրենլանդերեն Sigguup Nunaa, դանիերեն Svartenhuk Halvø, անգլերեն Nunavik Peninsula. մեծ լեռնոտ թերակղզի **Գրենլանդիայի** հյուսիսարևմտյան մասում: Մակերեսը՝ 4 486 կմ^2: Բարձր կետը՝ 1 764 մ: Ափագծի երկարությունը՝ 344 կմ:
Անվանումը գրենլանդերենից թարգմանաբար նշանակում է *Դնչի երկիր*:
Հայտնի է նաև *Սվարտենհուկ* և *Նունավիկ* անուններով:

ՍԻՏԼԱԼՏԵՊԵՏԼ - իսպաներեն Citlaltépetl, նաուատլ Cītlal-tepē-tl. ստրատոհրաբուխ, Մեքսիկայի ամենաբարձր կետը: Գտնվում է Անդրմեքսիկական հրաբխային գոտու արևելյան մասում՝ Վերակրուս և Պուեբլա նահանգների միջև: Վերջին խոշոր ժայթքումը տեղի է ունեցել 1687թ-ին: Բացարձակ բարձրությունը՝ 5 636մ, հարաբերականը՝ 4 922մ (2019 թ.):
Լեռը հայտնի էր նաև *Պոյաուտեկատլ, Սեռո դե Սան Անդրես* և *Օրիսաբա* անուններով:
Այժմյան անվանումը կազմված է նաուատլ լեզվի Cītlal *Աստղ*, tepē-tl *լեռ* բառերի միացումից՝ *Աստղալեռ*:

ՍԼԱԳԱՐԴ - անգլերեն Mount Slaggard, ֆրանսերեն Mont Slaggard. լեռ Կանադայում Կլուան ազգային պարկի հյուսիսային մասում: Շրջապատված է մի քանի բարձր լեռներով՝ **Վուդ**, **Սթիլ**, **Լուկանիա** և այլն: Հյուսիս-արևմուտքից լեռան լանջերը միաձուլվում են Անդերսոն սառցադաշտի հետ, հարավարևելյան մասում տեղակայված է Չիտինա սառցադաշտի ջրահավաք ավազանը: Բացարձակ բարձրությունը՝ 4 742 մ, հարաբերականը՝ 522 մ:

Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Անուշադիր, անփույթ*:

ՍԿԱՋԻԹ - անգլերեն Skagit River, ֆրանսերեն Skagit. գետ Կանադայում և ԱՄՆ-ում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի հարավարևմտյան և Վաշինգտոն նահանգի հյուսիսարևմտյան մասում: Սկիզբ է առնում **Կասկադյան** լեռների Ալիսոն լեռնանցքից և Սկաջիթ Սիթի բնակավայրում՝ թափվում Փյուջեթ Սաունդ ծոցը: Վտակներն են՝ Սաուկ, Բեյքեր, Սքեյսթ և այլն: Երկարությունը՝ 241 կմ: Ջրի ծախսը՝ 468 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 6 879 կմ^2:
Անունը ստացել է հնդկացիական *սկաջիթ* ցեղից:

ՍԿԻՆԱ - անգլերեն Skeena River, ֆրանսերեն La Skeena. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Սկիզբ է առնում Սպատսիզի սարավանդի հարավային մասից և հոսելով հարավարևմտյան ուղղությամբ՝ թափվում Խաղաղ օվկիանոսի Չաթհեմ նեղուցը: Վտակներն են՝ **Բալքլի**, Կիտսումկալում, Կիտուանգա և այլ գետեր: Երկարությունը՝ 579 կմ: Ջրի ծախսը՝ 1 760 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 54 400 կմ^2:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական ցիմշիաներեն լեզվի ikshenan *բաժանում* բառը: Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը թարգմանվում է իբրև *Նա ով սկիզբ է առնում ամպերից*:

ՍԿՎԱՄԻՇ - անգլերեն Squamish River, ֆրանսերեն Squamish. գետ Կանադայում, Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի հարավ-արևմուտքում: Սկիզբ է առնում Փեմբերտոն սառցադաշտից և հոսելով հարավային ուղղությամբ՝ Սկվամիշ բնակավայրում թափվում Հոու ծոց: Վտակներն են՝ Չիկամուս, Մամկվամ, Էլահո, Աշլու Քրիկ և այլ գետեր: Երկարությունը՝ 80 կմ: Ջրի ծախսը՝ 237 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 3 328 կմ^2:
Գետն իր անվանումը ստացել է նրա ափերին բնակվող հնդկացիական *սկվամիշ* ցեղից:

ՍՄԻԹԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Smith Sound, ֆրանսերեն Détroit de Smith, դանիերեն Smith Sund. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուց՝ **Ներսի** նեղուցի հյուսիսային հատվածի մի մասը: Իրար է միացնում **Բաֆֆինի** ծովը և **Քեյնի** ծոցը: Իրարից բաժանում է **Գրենլանդիա** և **Էլսմիր** կղզիները: Երկարությունը՝ մինչև 50 կմ, լայնությունը՝ 40 կմ:
1616 թ-ին անվանվել է Ուիլյամ Բաֆֆինի կողմից, բրիտանացի քաղաքական գործիչ և դիվանագետ *սըր Թոմաս Սմիթի (Սմայթի)* պատվին:

ՍՅԵՌԱ ՆԵՎԱԴԱ - իսպաներեն Sierra Nevada, անգլերեն Sierra Nevada. լեռնաշղթա **Կորդիլյեռաների** արևմտյան մասում, Կալիֆոռնիայի արևելքում: Ձգվում է 626 կմ երկարությամբ և մինչև 373 կմ լայնությամբ Ֆրեդոնյեռ լեռնանցքից (հյուսիսում) մինչև Տեաչապի լեռնանցքը (հարավում): Լեռների մակերեսը կազմում է 63 100 կմ^2: Բարձր կետը **Ուիթնի** գագաթն է 4 421 մ:
1776 թ-ին լեռները անվանվել են հայր Պեդրո Ֆոնտի կողմից՝ իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ձյունե լեռներ*:

ՍՅՈՒԱՐԴ - անգլերեն Seward Peninsula. խոշոր թերակղզի ԱՄՆ-ում՝ Ալյասկայի արևմուտքում: Ողողվում է հյուսիսից Չուկոտյան ծովի և Կոցեբու ծոցի, արևմուտքից՝ Բերինգի նեղուցի, հարավից՝ Բերինգի ծովի և Նորտոն ծոցի ջրերով: Այստեղ են գտնվում աշխարհի խոշորագույն Դեվիլ Մաունթին մաարը և Հյուսիսային Ամերիկայի արևմտյան մայրցամաքային ծայրակետը: Երկարությունը՝ մոտ 320 կմ, լայնությունը՝ 145-225 կմ: Մակերեսը՝ 53 400 կմ^2: Բարձր կետը՝ 1 437 մ:

Անվանվել է ամերիկացի քաղաքական գործիչ, ԱՄՆ-ի 24-րդ պետքարտուղար *Ուիլյամ Հենրի Սյուարդի* պատվին:

ՍՆԵՅՔ - անգլերեն Snake River. գետ ԱՄՆ-ի հյուսիս-արևմուտքում: Սկիզբ է առնում **Ժայռոտ** լեռներից՝ 3 գետակների միախառնումից: Հանդիսանում է **Կոլումբիա** գետի խոշորագույն ձախ վտակը: Երկարությունը՝ 1 735 կմ: Ջրի ծախսը՝ 1 553 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 279 719 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Շաուպատին, Լյուիս, Լյուիս Ֆորք, Կիմուենիմ, Յամպահպա, Մադ, Շոշոնի, Սեպտին* անուններով:
Գետի այժմյան անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Օձ*: Ենթադրվում է, որ դրանով ակնարկվում է գետի ափերին բնակվող հնդկացիական շոշոններ ցեղի տոտեմը:

ՍՆԵՖԵԼՍ - անգլերեն Mount Sneffels. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Սնեֆելլս լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը: Բացարձակ բարձրությունը՝ 4 315.4 մ, հարաբերականը՝ 930 մ:
Նախկինում հայտնի էր *Մաունթ Բլեյն* և *Սնեֆելս Պիկ* անուններով, որտեղ Snaefell անվանումը իսլանդերենից բառացի նշանակում է *Ձյունե լեռ*:
Այժմյան անվանումը 1906թ-ին ստացել է Իսլանդիայի Սնայֆելսնես թերակղզում տեղակայված *Սնայֆել* հրաբխից:

ՍՈԼԹՈՆ ՍԻ - անգլերեն Salton Sea, իսպաներեն Lago Saltón. աղի լիճ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիա նահանգի հարավում: Երկարությունը՝ մինչև 54 կմ, լայնությունը՝ մինչև 22 կմ: Մակերեսը՝ 889 կմ^2: Միջին խորությունը՝ 8 մ, առավելագույնը՝ 13 մ: Ծավալը՝ 25,9 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 21 700 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ -71,9 մ: Ջրի աղիությունը՝ 44‰: Լիճն են թափվում Նյու Ռիվեր, Ուայթ Ուոթեր, Ալամո գետերը:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Աղի ծով*:

ՍՈՄԱՏՐ - ֆրանսերեն Étang Saumâtre, իսպաներեն Laguna del Fondo / Lago Azuey. խոշոր, աղի լիճ **Հայիթիում**, Կուլ դը Սակ հովտի չորային մասում: Երկարությունը՝ մինչև 22 կմ, լայնությունը՝ մինչև 12 կմ: Մակերեսը՝ 170 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը 17 մ: Լիճն են թափվում շուրջ 10 գետեր, որոնցից խոշորը Բլանշն է:
Անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Աղիավուն, շոռ*:
Հայտնի է նաև *Ֆոնդո* և *Ազուեյ* անուններով:

ՍՈՄԵՐՍԵԹ - անգլերեն Somerset Island, ֆրանսերեն Île Somerset, ինուկտիտուտ Kuganajuup Qikiqtanga. լեռնոտ կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 140 կմ: Մակերեսը՝ 24 786կմ^2: Բարձր կետը Քրեսուել Պիկ գագաթն է 503 մ:
Կղզին 1819 թ-ին հայտնաբերել է անգլիացի ծովագնաց Ուիլյամ Փարրին և այն անվանել Անգլիայի իր հարազատ *Սոմերսեթ* կոմսության պատվին:

ՍՈՆՈՐԱ - իսպաներեն Desierto de Sonora, անգլերեն Sonoran Desert. ավազաքարային անապատ ԱՄՆ-ում և Մեքսիկայում: Մակերեսը՝ 260 000 կմ^2: Բարձր կետը՝ 320 մ, ցածր կետը՝ **Սոլթոն Սի** լիճը -71,9 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Հնչեղ*:
Հայտնի է նաև *Խիլա* անվամբ:

ՍՈՆՈՐԱ - իսպաներեն Río Sonora. գետ Մեքսիկայի հյուսիս-արևմուտքում : Կազմավորվում է Բակամուչի և Բակոաչի գետերի միախառնումից և հոսելով արևմտյան ուղղությամբ՝ թափվում Խաղաղ օվկիանոսի Կինո ծոցը: Երկարությունը՝ 420 կմ: Ջրի ծախսը՝ 106 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 28 950 կմ^2:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Հնչեղ*:

ՍՈՏՈ ԼԱ ՄԱՐԻՆԱ - իսպաներեն Río Soto La Marina. գետ Մեքսիկայում: Կազմավորվում է **Արևելյան Սյեռա Մադրե** լեռներում՝ Պուրիֆիկասյոն ու Կորոնա գետերի միախառնումից և հոսելով արևելյան ուղղությամբ՝ Լա Պեսկա բնակավայրի մոտ թափվում **Մեքսիկական** ծոց: Երկարությունը՝ 416 կմ: Ջրի ծախսը՝ 66 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 21 183 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Ռիո դե լաս Պալմաս* անվամբ:
Անվանումը կազմված է իսպաներեն soto *պուրակ* և marina *ծովային* բառերից:

ՍՎԵՐԴՐՈՒՓԻ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Sverdrup Islands, ֆրանսերեն les Sverdrup. կղզիներ **Կանադական Արկտիկական** կղզեխմբի հյուսիսային մասում՝ **Եղիսաբեթ թագուհու** կղզիների կազմում: Մակերեսը՝ մոտ 66 000 կմ^2: Բարձր կետը Աութլուք Պիկ գագաթն է 2 211 մ, **Աքսել Հեյբերգ** կղզում:
Անվանվել է նորվեգացի բևեռախույզ *Օտտո Նոյման Նոֆ Սվերդրուփի* պատվին:

ՍՏՈՐԻՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ - իսպաներեն Desierto de Baja California. ավազաքարային անապատ Մեքսիկայում, **Կալիֆոռնիա** թերակղզում: Մակերեսը՝ 77 700 կմ^2:
Անվանումը անապատի իսպաներեն Desierto de Baja California անվան հայերեն պատճենումն է:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԳԵՏ - անգլերեն Slave River, ֆրանսերեն Rivière des Esclaves. գետ Կանադայի հյուսիսարևմտյան մասում: Սկիզբ է առնում **Աթաբասկա** լճից և հոսելով հյուսիսային ուղղությամբ՝ թափվում **Ստրուկների մեծ** լիճը: Երկարությունը՝ 434 կմ: Ջրի ծախսը՝ 3 414 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 616 400 կմ^2:
Անվանվել է բրիտանացի Սեմյուել Հիռնի կողմից, այստեղ բնակվող հնդկացիական սլեյվի ցեղի պատվին, որի անունը հետագայում թյուրիմացաբար նույնացվել է անգլերենի slave *ստրուկ* բառի հետ, ինչի հետևանքով գետի անվանումը տարբեր լեզուներում թարգմանվում է որպես *Ստրուկների գետ*:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՄԵԾ ԼԻՃ - անգլերեն Great Slave Lake, ֆրանսերեն Grand lac des Esclaves. լիճ Կանադայի հյուսիս-արևմուտքում: Երկարությունը՝ մինչև 469 կմ, լայնությունը՝ մինչև 203 կմ: Մակերեսը՝ 28 568 կմ^2: Միջին խորությունը՝ 41 մ, առավելագույնը՝ 614 մ: Ծավալը՝ 1 171,3 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 157 մ: Ջրահավաք ավազանը՝ 971 000 կմ^2: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ 3 057 կմ: Լիճն են թափվում Հեյ, Թոլսոն, Սնոուդրիֆտ և այլ գետեր, իսկ արտահոսում՝ **Մակքենզին**:
Անվանվել է բրիտանացի Սեմյուել Հիռնի կողմից, այստեղ բնակվող հնդկացիական սլեյվի ցեղի պատվին, որի անունը հետագայում թյուրիմացաբար նույնացվել է անգլերենի slave *ստրուկ* բառի հետ, ինչի հետևանքով լճի անվանումը տարբեր լեզուներում թարգմանվում է որպես *Ստրուկների մեծ լիճ*:

ՍՈՒՐԲ ԵՂԻԱ - անգլերեն Mount Saint Elias, ֆրանսերեն Mont Saint-Élie. լեռ Կանադայում և ԱՄՆ-ում՝ Յուկոն վարչական տարածքի և Ալյասկայի սահմանագլխին:

Կազմում է համանուն լեռնաշղթայի մասը: Բացարձակ բարձրությունը՝ 5 489 մ, հարաբերականը՝ 3 429 մ:
Տեղացի տլինգիտների լեզվով լեռը հայտնի է Yaas'éit'aa Shaa և Shaa Tléin անուններով: Եվրոպացիներից առաջինը 1741թ-ի հուլիսի 16-ին (հին տոմարով) լեռը տեսել էին Վիտուս Բերինգի արշավախմբի մասնակիցները և հավանաբար նրանց կողմից է լեռը ստացել իր այժմյան անվանումը՝ *Սուրբ Եղիա մարգարեի* պատվին:

ՍՈՒՐԲ ԵՂԻԱՅԻ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Saint Elias Mountains, ֆրանսերեն Chaîne Saint-Élie. լեռներ **Կորդիլյեռաների** համակարգում՝ Կանադայում և Ալյասկայում: Հյուսիս-արևմուտքում հարում է **Վրանգելի**, արևմուտքում՝ Չուգաչ լեռներին: Երկարությունը՝ 480 կմ, լայնությունը՝ մինչև 160 կմ: Մակերեսը՝ 112 509 կմ^2: Բարձր կետը **Լոգան** գագաթն է 5 959մ: Հայտնի են նաև **Սուրբ Եղիա** (5 489 մ), **Լուկանիա** (5 240 մ), **Քինգ Պիկ** (5 173 մ), **Սթիլ** (5 073 մ), **Բոնա** (5 040 մ) և այլ գագաթներ:
Անվանումը ստացել են այս լեռներում գտնվող *Սուրբ Եղիա* լեռից:

ՍՈՒՐԲ ԼԱՎՐԵՆՏԻՈՍ - ֆրանսերեն Fleuve Saint-Laurent, անգլերեն Saint Lawrence River. **Մեծ լճերը** Ատլանտյան օվկիանոսի հետ միացնող խոշոր ջրային համակարգ (գետ) Կանադայում և ԱՄՆ-ում: Սկիզբ է առնում **Օնտարիո** լճից և թափվում համանուն ծոցը: Երկարությունը՝ 1 197 կմ: Ջրի ծախսը՝ 16 800 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 1 344 200 կմ^2:
Հնդկացիական տուսկարորա ցեղի կողմից գետն անվանվում է Kahnawá-kye *Ջրի մեծ հոսք*:
Նախկինում հայտնի էր *Մեն Լորանս, Կանադաս, Կատարակուի* և *Իրոկուազ* անուններով:
Այժմյան անվանումը գետը ստացել է 1535թ-ին ֆրանսիացի հետազոտող Ժակ Կարտյեի կողմից, *Սուրբ Լավրենտիոսի* պատվին:

ՍՈՒՐԲ ԼԱՎՐԵՆՏԻՈՍԻ ԾՈՑ - անգլերեն Gulf of Saint Lawrence, ֆրանսերեն Golfe du Saint-Laurent. **Սուրբ Լավրենտիոս** գետի էստուարը (խոշորագույնը աշխարհում), Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափին: Մակերեսը՝ 236 000 կմ^2: Միջին խորությունը՝ 152 մ, առավելագույնը՝ 572 մ: Ջրահավաք ավազանը՝ 1 600 000 կմ^2: Ծավալը՝ 35 872 կմ^3:
Անվանվել է *Սուրբ Լավրենտիոսի* պատվին:

ՍՈՒՐԲ ԼԱՎՐԵՆՏԻՈՍԻ ԿՂԶԻ - անգլերեն St. Lawrence Island, յուպիկ Sivuqaq. կղզի ԱՄՆ-ում, Բերինգի ծովի հարավային մասում: Վարչականորեն կազմում է Ալյասկա նահանգի մասը: Երկարությունը՝ 144 կմ, լայնությունը՝ մինչև 36 կմ: Մակերեսը՝ 4 640,12 կմ^2: Բարձր կետը Ատուկ գագաթն է 672 մ:
1728թ-ի օգոստոսի 10-ին կղզի այցելած ծովագնաց և հետազոտող Վիտուս Բերինգը անվանել է այն այդ օրվա խորհուրդ *Սուրբ Լավրենտիոսի* պատվին:
Կղզու էսկիմոսերեն Sivuqaq անվանումը բառացի նշանակում է *Լինել առաջնայինը* կամ *Լինել առաջինը*:

ՍՈՒՐԲ ՄԱՏԹԵՈՍԻ ԿՂԶԻ - անգլերեն St. Matthew Island. կղզի ԱՄՆ-ում, Բերինգի ծովի հարավային մասում: Վարչականորեն կազմում է Ալյասկա նահանգի մասը: Երկարությունը՝ 53 կմ, լայնությունը՝ մինչև 6 կմ: Մակերեսը՝ 357,049 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 140 կմ: Բարձր կետը Շուգարլոֆ գագաթն է 449,9 մ:
Անվանվել է *Սուրբ Մատթեոս Ավետարանչի* պատվին:

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ - իսպաներեն Canal de San Nicolas, անգլերեն Nicholas Channel. նեղուց **Կուբայի** հյուսիսային ափերի մոտ: Իրարից է բաժանում **Կուբա** կղզին և **Լուկայան** կղզեխմբի հարավարևմտյան կղզիները:
Անվանվել է *Սուրբ Նիկողայոս Զմյուռնացու* պատվին:

ՍՈՒՖՐԻԵՐ - ֆրանսերեն Soufrière. գործող ստրատոհրաբուխ Գվադելուպում՝ Բաստեր կղզում: **Փոքր Անտիլների** ամենաբարձր կետը: Բարձրությունը՝ 1 467 մ:
Անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Ծծումբի ժայթքում*:
Հայտնի է նաև *Լա Գրանդ Սուֆրիեր, Լա Վիեյ Դամ, Լա Ազուֆրերա* անուններով:

ՍՓԻՐ - անգլերեն Cape Spear, ֆրանսերեն Cap d'Espoir. հրվանդան **Նյուֆաունդլենդ** կղզու հարավ-արևելքում՝ **Ավալոն** թերակղզու արևելյան մասում: Համարվում է Կանադայի արևելյան ծայրակետը (47° 31′ 24,89″ N, 52°37′ 08,59″ W):
Նախկինում հայտնի էր *Էսպերանսա* և *Էսպուար* անուններով:
Այժմյան անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Նիզակ*:

ՍՔՈՐՍԲԻ - գրենլանդերեն Kangertittivaq, դանիերեն Scoresby Sund. աշխարհի խոշորագույն ֆիորդը **Գրենլանդիայի** արևելյան մասում: Երկարությունը՝ 350 կմ, առավելագույն խորությունը՝ 1 450 մ:
Անվանվել է անգլիացի հետազոտող և քահանա *հայր Ուիլյամ Սքորսբիի* պատվին:
Ֆիորդի գրենլանդերեն Kangertittivaq անվանումը բառացի նշանակում է՝ *Մեծ և երկար ֆիորդ*:

Վ

ՎԱՆԴԵԼԻ ԾՈՎ - դանիերեն Wandelhavet Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի եզրային ծով: Տարածվում է **Գրենլանդիայի** հյուսիս-արևելքից մինչև Սվալբարդ կղզեխումբը: Երկարությունը՝ 800 կմ, լայնությունը՝ մոտ 300 կմ:
Հայտնի է նաև ՄկՔինլի ծով անվամբ:
Ծովը 1907թ-ին հայտնաբերվել է Լյուդվիգ Միլիուս-Էրիկսենի ղեկավարած դանիական արշավախմբի կողմից և անվանվել իր խորհրդականներից մեկի՝ ջրագիր, փոխծովակալ *Կառլ Ֆրեդերիկ Վանդելի* պատվին:

ՎԱՆԿՈՒՎԵՐ - անգլերեն Mount Vancouver, ֆրանսերեն Mont Vancouver. եռագագաթ լեռ ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին: Բացարձակ բարձրությունը՝ 4 812 մ, հարաբերականը՝ 2 692 մ: Լեռան հյուսիսարևմտյան լանջին է գտնվում Սյուարդ սառցադաշտը:
1874թ.-ին անվանվել է ամերիկացի բնագետ Ուիլյամ Հիլի Դոլլի կողմից, 1792-94 թթ-ին Ալյասկայի հյուսիսային գոտին ուսումնասիրած բրիտանացի ծովագնաց և հետազոտող *Ջորջ Վանկուվերի* պատվին:

ՎԱՆԿՈՒՎԵՐ - անգլերեն Vancouver Island, ֆրանսերեն Île de Vancouver. լեռնոտ կղզի Կանադայի արևմտյան մասում՝ Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Երկարությունը՝ 458 կմ, լայնությունը՝ մինչև 130 կմ: Ափագծի երկարությունը՝ 3 226 կմ: Մակերեսը՝ 31 285 կմ^2: Բարձր կետը Գոլդեն Հենդ գագաթն է 2 195 մ:
Նախկինում հայտնի էր *Կուադրա* անվամբ:
Անվանվել է բրիտանացի ծովագնաց և հետազոտող *Ջորջ Վանկուվերի* պատվին:

ՎԵՍՏ ԻՆԴԻԱ - իսպաներեն Indias Occidentales, անգլերեն West Indies, ֆրանսերեն Indes occidentales, նիդերլանդերեն West-Indië, պորտուգալերեն Índias Ocidentais. **Մեքսիկական** ծոցում ու Ատլանտյան օվկիանոսում, **Անտիլյան**, **Լուկայան** և նրանց հարող մի շարք կղզիների ավանդական ընդհանրական անվանումը: Զբաղեցնում է շուրջ 244 890 կմ^2 տարածք: Խոշոր կղզին **Կուբան** է: Բարձր կետը՝ **Դուարտե Պիկ** 3 098մ, Դոմինիկանայում:
Տարածաշրջանին Վեստ Ինդիա անվանումը սխալմամբ տրվել է առաջին եվրոպացի ծովագնացների կողմից, որոնք կարծում էին, որ հասել են Հնդկաստանի ափերին:
Անվանումը բառացի թարգմանվում է որպես Արևմտյան Հնդկաստան:

ՎԵՐԻՆ ԼԻՃ - անգլերեն Lake Superior, ֆրանսերեն Lac Supérieur, օջիբվե ᑭᑦᑎᐯ-ᓴᑎᐯ / Gitchi-Gami. լիճ ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին: Երկարությունը՝ մինչև 563 կմ, լայնությունը՝ մինչև 257 կմ: Մակերեսը՝ 82 700 կմ^2 (աշխարհի ամենամեծ քաղցրահամ լիճն է): Միջին խորությունը 147 մ, առավելագույնը՝ 406 մ (**Մեծ լճերի** համակարգում ամենախորն է): Ծավալը՝ 12 157 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 183 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիների շուրջ՝ 4 388 կմ: Ջրահավաք ավազանը՝ շուրջ 127 700 կմ^2 (լճի մակերեսի հետ միասին): Լիճն է թափվում Նիպիգոն, իսկ արտահոսում՝ Սենթ Մերիս գետերը:
Նախկինում հայտնի էր *Լակ Տրեսի* և *Մեծ լիճ* անուններով:
17-րդ դարում ֆրանսիացի հետազոտողների կողմից անվանվել է Le Lac Supérieur *Ամենաբարձր լիճը*, հաշվի առնելով նրա դիրքը **Հուրոն** լճի նկատմամբ:
Հնդկացիական օջիբվե լեզվում լիճը կոչվում է gitchi-gami *Մեծ ծով*:

ՎԻԿՏՈՐԻԱ - անգլերեն Victoria Island, ֆրանսերեն Île Victoria, ինուկտիտուտ Kitlineq. կղզի Կանադայում, **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Երկարությունը՝ մինչև 207 կմ, լայնությունը՝ մինչև 623 կմ: Մակերեսը՝ 217 291 կմ^2: Բարձր կետը՝ 665 մ:
1839 թ-ին անվանվել է Անգլիայի թագուհի *Վիկտորիայի* պատվին:

ՎԻՆԻՊԵԳ - անգլերեն Lake Winnipeg, ֆրանսերեն Lac Winnipeg. խոշոր լիճ Կանադայում՝ Մանիտոբա պրովինցիայում: Լիճն են թափվում **Սասկաչևան**, Ռեդ, Վինիպեգ, Բլադվեյն, Բերենս և այլ գետեր: Երկարությունը՝ 416 կմ, լայնությունը՝ 140 կմ: Միջին խորությունը՝ 12 մ, առավելագույնը՝ 36 մ: Մակերեսը՝ 24 514 կմ^2: Ծավալը՝ 294,2 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 217 մ: Ափագծի երկարությունը՝ 1 858 կմ: Ջրահավաք ավազանը՝ 982 900 կմ^2:
Համարվում է, որ առաջին եվրոպացին՝ ով 1690թ-ին այցելեց այս վայրերը եղել է մորթու վաճառական Հենրի Քեսլին, ով և պահպանեց լճի համար հնդկացիական wīnipēk *Պղտոր ջրեր* անվանումը:

ՎԻՆԻՊԵԳՈՍԻՍ - անգլերեն Lake Winnipegosis, ֆրանսերեն Lac Winnipegosis. խոշոր լիճ Կանադայում, Մանիտոբա պրովինցիայում: Երկարությունը՝ մինչև 195 կմ, լայնությունը՝ մինչև 51 կմ: Մակերեսը՝ 5 370 կմ^2: Միջին խորությունը՝ 8 մ, առավելագույնը՝ 12 մ: Ծավալը՝ 43 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 253 մ: Ջրահավաք ավազանը՝ 49 825 կմ^2: Լիճն են թափվում Սուոն, Ռեդ Դիր, Վուդի և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Ուոթեր Հեսը:
Անվանվել է Վինիպեգ լճից և կազմված է կրի հնդկացիական ցեղի լեզվի winnipeg *Պղտոր ջրեր* անվան և osis նվազական ածանցից՝ *Փոքր պղտոր ջրեր*:

ՎԻՍԿՈՆՍԻՆ - անգլերեն Wisconsin River, ֆրանսերեն Wisconsin. գետ ԱՄՆ-ում համանուն նահանգում, **Միսիսիպիի** ձախ վտակը: Սկիզբ է առնում Վյո Դեսեր լճից և Պրերի դյու Շյեն բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Երկարությունը՝ 680 կմ: Ջրի ծախսը՝ 340 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 31 805 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Մեսկոսինգ* և *Ուիսկոնսին* անուններով:
Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է հնդկացիական մայամի լեզվի meskonsing *Նա կարմիր է* արտահայտությունը, որով արծարծվում է գետի ափերին կարմիր ավազաքարերի առկայությունը:

ՎՈԼԱՍՏՈՆ - անգլերեն Wollaston Lake, ֆրանսերեն Lac Wollaston. լիճ Կանադայում՝ Սասկաչևան պրովինցիայի հյուսիսարևելյան մասում: Երկարությունը՝ մինչև 112 կմ, լայնությունը՝ մինչև 40 կմ: Մակերեսը՝ 2 681 կմ^2: Միջին խորությունը՝ 20,6 մ, առավելագույնը՝ 97 մ: Ծավալը՝ 55,2 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 398 մ: Ջրահավաք ավազանը՝ 23 310 կմ^2: Ափագծի երկարությունը կղզիների հետ միասին՝ 1 475 կմ: Լիճն է թափվում Գիկի գետը:
1821թ-ին անվանվել է բևեռախույզ Ջոն Ֆրանկլինի կողմից բրիտանացի քիմիկոս *Ուիլյամ Հայդ Վոլաստոնի* պատվին:

ՎՈԼԱՍՏՈՆ - անգլերեն Wollaston Peninsula, ֆրանսերեն Péninsule de Wollaston. թերակղզի Կանադայի արևմուտքում՝ **Վիկտորիա** կղզում: Ողողվում է հյուսիսում Արքայազն Ալբերտի նեղուցի, արևմուտքում՝ **Ամունդսենի** ծոցի և հարավում՝ Դոլֆին և Յունիոն նեղուցների ջրերով: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 93-115 կմ:
1826 թ-ին անվանվել է բրիտանացի քիմիկոս *Ուիլյամ Հայդ Վոլաստոնի* պատվին:

ՎՈՒԴ - անգլերեն Mount Wood, ֆրանսերեն Mont Wood. լեռ Կանադայում՝ Կլուան ազգային պարկում, **Սթիլ** լեռից 18.91 կմ հեռավորությամբ: Բացարձակ բարձրությունը՝ 4 842 մ, հարաբերականը՝ 1 190 մ:
1900թ-ին անվանվել է գեոդեզիստ Ջ.Ջ. ՄկԱրթուրի կողմից Դոուսոնի ոստիկանության տեսուչ *Զախարի Թեյլոր Վուդի* պատվին:

ՎՐԱՆԳԵԼ - անգլերեն Mount Wrangell, աթաբասկերեն K'elt'aeni, ատնա Uk'eledi. գործող հրաբուխ ԱՄՆ-ում՝ Ալյասկայի Վրանգելի լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 317 մ, հարաբերականը՝ 1 711 մ: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 2002թ-ի օգոստոսի 1-ից 2-ը:
Անվանվել է Ռուս-ամերիկյան Ընկերության տնօրեն, ծովակալ, *բարոն Ֆերդինանդ Պ. Վրանգելի* պատվին:
Հրաբխի աթաբասերեն K'elt'aeni անվանումը բառացի նշանակում է *Նա ով հսկում է,* իսկ ատնա լեզվի Uk'eledi անվանումը բառացի նշանակում է *նա ով ծխում է:*

ՎՐԱՆԳԵԼԻ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Wrangell Mountains. բարձրադիր հրաբխային զանգված Ալյասկայի հարավ-արևելքում: Իր արևելյան մասով հարում է **Սուրբ Եղիայի** լեռներին: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք 231 կմ երկարությամբ և մինչև 255 կմ լայնությամբ: Լեռների մակերեսը կազմում է 33 538 կմ^2: Բարձր կետը **Բլեքբեռն** գագաթն է 4 996 մ: Հայտնի գագաթներից են նաև **Սենֆորդ** (4 949մ), **Վրանգել** (4 317մ), Ատնա Պիկս (4 225մ), Ռեգալ (4 220մ) և այլն:
Անվանվել է Ռուս-ամերիկյան Ընկերության տնօրեն, ծովակալ, *բարոն Ֆերդինանդ Պ. Վրանգելի* պատվին:

Տ

ՏԱԽՈՒՄՈՒԼԿՈ - իսպաներեն Volcán Tajumulco. երկգագաթ ստրատոհրաբուխ Գվատեմալայի արևմուտքում: Բացարձակ բարձրությունը՝ 4 222 մ, հարաբերականը՝ 3 980 մ: Անվանումը ստացել է Տախումուլկո քաղաքից, որի անունն իր հերթին կազմված է մամ լեզվի taj *ինչ որ բանի մոտ տեղակայվել* և xomulli *անկյուն, եզր* բառերից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը նաուատլ լեզվից բառացի նշանակում է *Վայր երկրի անկյունում:*

ՏԱԿԱԿԱՈՒ - անգլերեն Takakkaw Falls, ֆրանսերեն Chutes Takakkaw. ջրվեժ Կանադայում՝ Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Անկման բարձրությունը՝ 381,1 մ: Ջրվեժի Takakkaw անվանումը հնդկացիական կրի լեզվից բառացի նշանակում է *Դա հիասքանչ է*:

ՏԱՀՈ - անգլերեն Lake Tahoe, իսպաներեն Lago Tahoe. քաղցրահամ լիճ ԱՄՆ-ում, **Սյեռա Նևադա** լեռներում, Կալիֆոռնիա և Նևադա նահանգների սահմանին: Երկարությունը՝ մինչև 35 կմ, լայնությունը՝ մինչև 19 կմ: Մակերեսը՝ 492 կմ^2: Միջին խորությունը՝ 304 մ, առավելագույնը՝ 501 մ: Ծավալը՝ 149,6 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 1 898 մ: Ափագծի երկարությունը՝ 114 կմ: Լճից արտահոսում է Տակի գետը:
Նախկինում հայտնի էր *Բոն Պլան* և *Բիգլեռ* անվամբ:
1862թ-ին ԱՄՆ-ի Ներքին գործերի նախարարության կողմից ստացել է իր այժմյան Տահո անվանումը, որի հիմքում ընկած է հնդկացիական վաշո լեզվի dá'aw *լիճ* բառը:

ՏԱՆԱՆԱ - անգլերեն Tanana River. գետ ԱՄՆ-ում, Ալյասկա նահանգում, **Յուկոն** գետի ձախ վտակը: Կազմավորվում է **Վրանգելի** լեռներում՝ Նաբեսնա ու Չիզանա գետերի միախառնումից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ Մենլի Հոտ Սփրինգս գյուղում թափվում մայր գետը: Վտակներն են՝ Նենանա, Չենա, Դելտա և այլ գետեր: Երկարությունը՝ 940 կմ: Ջրի ծախսը՝ 1 184 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 113 959 կմ^2:
Հավանական է, որ գետի անգլերեն անվան հիմքում ընկած է հնդկացիական կոյուկոն լեզվի Tenen No' *Ջրային կածան* արտահայտությունը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած է TeyNda' *Առևտրի գետ* արտահայտությունը:
Աթաբասկերեն լեզուներում գետը հայտնի է Tth'itu *Ուղիղ ջուր* անվամբ:

ՏԵՄՊԻՍԿԵ - իսպաներեն Río Tempisque. գետ Կոստա Ռիկայում: Սկիզբ է առնում Օրոսի հրաբխի նախալեռնային շրջանից և թափվում Խաղաղ օվկիանոսի **Նիկոյա** ծոցը: Վտակներն են՝ Բեբեդերո, Կոլորադո, Լիբերիա, Սալտո և այլ գետեր: Երկարությունը՝ 144 կմ: Ջրի ծախսը՝ 8,2 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 3 405 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Սապանդի* անվամբ:
Գետն իր անվանումը հավանաբար ստացել է այս վայրերում մեծ տարածում ունեցող Sideroxylon capiri տեսակի դեղին զկեռի նաուատլ լեզվի Tempisque անունից, որն իր հերթին կազմված է templi *գետափ* և ixqui *խնամակալ, պահակ* բառերից:

ՏԵՈՒԱՆՏԵՊԵԿ - իսպաներեն Golfo de Tehuantepec. Խաղաղ օվկիանոսի ծոց Մեքսիկայի հարավում: Միջին խորությունը՝ 187 մ, առավելագույնը՝ մինչև 2000 մ: Երկարությունը՝ 350 կմ, լայնությունը՝ 80 կմ:
Անվանումը ստացել է Սանտո Դոմինգո Տեուանտեպեկ բնակավայրից, որն իր հերթին անվան վերջին մասը ստացել է ացտեկերեն tecuani-tepec *Յագուարի լեռներ* արտահայտությունից:
Հայտնի է նաև *Չյապասի ծոց* և *Չյապասի ծով* անուններով:

ՏԻԲՈՒՐՈՆ - ֆրանսերեն Péninsule de Tiburon / Le Tiburon, իսպաներեն Península de Tiburón. թերակղզի **Հայիթի** կղզու հարավարևմտյան մասում: Երկարությունը՝ մինչև 250 կմ, լայնությունը՝ 60 կմ: Բարձր կետը Մակայա Պիկ գագաթն է 2 347 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Շնաձուկ*:

ՏԼԱԼՈԿ - իսպաներեն Monte Tláloc, նաուատլ Tlalocatepetl հրաբուխ Մեքսիկայում Սյեռա դե Ռիո Ֆրիո լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 120 մ, հարաբերականը՝ 920 մ:
Անվանումն առաջացել է նաուատլ լեզվի Tlalocan *Երկրի նեկտարի տեղ (վայր)* արտահայտությունից:

ՏՈՒՐԿԻՆՈ ՊԻԿ - իսպաներեն Pico Turquino. լեռ **Վեստ Ինդիայում**, **Կուբա** կղզու հարավարևելյան մասում, Սյեռա Մաեստրա լեռներում՝ Կուբայի ամենաբարձր կետը: Բարձրությունը՝ 1 974 մ:
Անվան հիմքում ընկած է իսպաներեն Turqui *Փիրուզ* բառը:

ՈՒ

ՈՒԱՅԹ ՄԱՈՒՆԹԻՆ ՊԻԿ - անգլերեն White Mountain Peak. լեռ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիայում՝ Սպիտակ լեռների համակարգում: Բացարձակ բարձրությունը՝ 4 342 մ, հարաբերականը՝ 2 193 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Սպիտակ լեռան պիկ*:

ՈՒԵԼՍԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԿՂԶԻ - անգլերեն Prince of Wales Island, ֆրանսերեն Île du Prince-de-Galles, ինուկտիտուտ. կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Մակերեսը՝ 33 339 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 2 576 կմ: Բարձր կետը՝ 424 մ:
1851 թ-ին անվանվել է բրիտանացի բևեռախույզ և ծովակալ Ֆրենսիս Լեոպոլդ Մկքլինտոկի կողմից, Վիկտորիա թագուհու որդի՝ *Ուելսի արքայազն Ալբերտ Էդուարդի,* հետագայում Էդուարդ VII թագավորի պատվին:

ՈՒԵԼՍԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ՀՐՎԱՆԴԱՆ - անգլերեն Cape Prince of Wales. 65° 38' 19.13 "N, 168° 07' 27,92" W կոորդինատներով հրվանդան, Ալյասկայում՝ Սյուարդ թերակղզու արևմտյան մասում, Հյուսիսային Ամերիկայի արևմտյան մայրցամաքային ծայրակետը: Նախկինում հայտնի էր *Նիխտա* և *Գվոզդյովի* հրվանդան անվամբ:
1778 թ-ին անվանվել է նավապետ Ջեյմս Կուկի կողմից, այն ժամանակվա *Ուելսի արքայազն Ջորջ Ավգուստ Ֆրեդերիկի*, հետագայում Գեորգ IV թագավորի պատվին:

ՈՒԻԹՆԻ - անգլերեն Mount Whitney. լեռ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիայում՝ **Սյեռա Նևադա** լեռնաշղթայի բարձր կետը: Լեռը վեր է խոյանում Օուենս հովտում: Բացարձակ բարձրությունը՝ 4 421 մ, հարաբերականը՝ 3 071 մ:
1864թ-ի հուլիսին անվանվել է ամերիկացի երկրաբան *Ջոզայա Դուայթ Ուիթնիի* պատվին:

ՈՒԻԼՅԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՂԶԻ - անգլերեն King William Island, ֆրանսերեն Île du Roi-Guillaume, ինուկտիտուտ Qikiqtaq. ցածրադիր կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Երկարությունը՝ 175 կմ, լայնությունը՝ մոտ 160կմ: Մակերեսը՝ 12 516 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 289 կմ: Բարձր կետը Մաթեսոն գագաթն է 141 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Ուիլյամ թագավորի երկիր* անվամբ:
1830թ-ին կղզին հայտնաբերվել է և անվանվել է բրիտանացի հետազոտող Ջեյմս Ռոսսի կողմից, Բրիտանիայի գահակալ *Ուիլյամ IV-ի* պատվին:

ՈՒԻԼՅԱՄՍՈՆ - անգլերեն Mount Williamson. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիա նահանգում՝ **Սյեռա Նևադա** լեռնազանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 4 383 մ, հարաբերականը՝ 501 մ:
Անվանվել է ամերիկացի զինվորական և ճարտարագետ լեյտենանտ *Ռոբերտ Ստոկտոն Ուիլյամսոնի* պատվին:

ՈՒԻԼՍՈՆ - անգլերեն Mount Wilson. երկգագաթ լեռ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում, **Ժայռոտ** լեռներում՝ Սան Միգել լեռնազանգվածի ամենաբարձր կետը: Մերձգագաթային շրջանում կան 4 փոքր սառցադաշտեր: Բացարձակ բարձրությունը՝ 4 344 մ, հարաբերականը՝ 1 227 մ:
Նախկինում հայտնի էր *Գլասիեռ Մաունթին* անվամբ:
1906թ-ին անվանվել է ամերիկացի քարտեզագիր *Ալեն Դեյվիդ Ուիլսոնի* պատվին:

ՈՒՆԳԱՎԱ - անգլերեն Ungava Peninsula, ֆրանսերեն Péninsule d'Ungava. թերակղզի Կանադայում՝ **Լաբրադոր** թերակղզու հյուսիսային մասում: Ողողվում է արևմուտքում **Հադսոնի** ծոցի, հյուսիսում՝ **Հադսոնի** նեղուցի և արևելքում՝ Ունգավա ծոցի ջրերով: Երկարությունը՝ 500 կմ: Մակերեսը՝ 252 000 կմ^2:
Անվանումն ունի հնդկացիական ծագում և ինիկտիտուտ լեզվից թարգմանաբար նշանակում է *Բաց ջրեր*:

ՈՒՈԼԾ - անգլերեն Mount Walsh, ֆրանսերեն Mont Walsh. լեռ Կանադայում՝ Յուկոն վարչական տարածքում: Բացարձակ բարձրությունը՝ 4 507 մ, հարաբերականը՝ 1 646 մ:
Անվանվել է Կանադական Հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության սպա, քաղաքական գործիչ, ձեռնարկատեր և Յուկոնի առաջին լիազոր *Ջեյմս Մոռոու Ուոլշի* պատվին:

ՈՒՍՈՒՄԱՍԻՆՏԱ - իսպաներեն Río Usumacinta. գետ Կենտրոնական Ամերիկայում՝ Գվատեմալայում և Մեքսիկայում: Կազմավորվում է Լա Պասյոն և Սալինաս գետերի միախառնումից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ թափվում Կամպեչե ծոցը: Վտակներն են՝ Չիկսոյ, Նեգրո և այլ գետեր: Երկարությունը՝ մոտ 560 կմ: Ջրի ծախսը՝ 3 250 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 106 000 կմ^2:
Անվանումն առաջացել է նաուատլ լեզվի ozoma-tzin-tla *Կապիկների երկիր* արտահայտության ձևափոխումից:

Փ

ՓԱՅՔՍ ՊԻԿ - անգլերեն Pikes Peak, յուտա Tava, արապահո Heey-otoyoo'. լեռ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում, **Ժայռոտ** լեռների Առաջավոր լեռնաշղթայի ամենահարավային գագաթը: Լեռը կազմված է վարդագույն գրանիտից: Բացարձակ բարձրությունը՝ 4 302 մ, հարաբերականը՝ 1 690 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Էլ Կապիտան, Լոնգ Մաունթին Հայջեստ Պիկ, Ջեյմս Պիկ* անուններով:
Պաշտոնապես անվանվել է 1835թ-ին ամերիկացի գեներալ և հետազոտող *Զեբուլոն Մոնտգոմերի Փայքի* պատվին:
Լեռան յուտա լեզվի Tava անվանումը թարգմանաբար նշանակում է *Արև* , իսկ արապահո լեզվի Heey-otoyoo' անվանումը բառացի նշանակում է *Երկարավուն լեռ*:

ՓԻԹ - անգլերեն Pit River. գետ ԱՄՆ-ում, Կալիֆոռնիա նահանգի հյուսիսարևելյան մասում, **Սակրամենտո** գետի խոշորագույն ձախ վտակը: Կազմավորվում է Հյուսիսային և Հարավային Ֆորքս գետակների միախառնումից և Շաստա ջրամբարում թափվում մայր գետ: Վտակներն են՝ էշ Քրիկ, Մկքլաուդ և այլ գետեր: Երկարությունը՝ 333 կմ: Ջրի ծախսը՝ 136 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 18 296 կմ^2:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Հոր, փոս*:

ՓԻՍ - անգլերեն Peace River, ֆրանսերեն Rivière de la Paix. գետ Կանադայում՝ Բրիտանական Կոլումբիա և Ալբերտա պրովինցիաներում: Սկիզբ է առնում **Ժայռոտ** լեռներից: Վտակներն են՝ Ֆինլի, Հալֆվեյ, Բիտոն, Փայն, Սմոքի և այլ գետեր: Հանդիսանում է **Ստրուկների** գետի ձախ վտակը: Երկարությունը՝ 1 923 կմ: Ջրի ծախսը՝ 2 110 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 306 000 կմ^2:
Նախկինում հայտնի էր Unjegah *Մեծ գետ* անվամբ:
1962թ-ի հունիսի 20-ին Կանադայի աշխարհագրական խորհրդի կողմից գետը ստացել է այժմյան անվանումը ի պատիվ Ալբերտա պրովինցիայի կրի և բիվեր հնդկացիների *Փիս Փոյնթ* հավաքատեղիի:

ՓԼԱՏ - անգլերեն Platte River, ֆրանսերեն Platte. գետ ԱՄՆ-ում, **Միսուրիի** աջ վտակը: Կազմավորվում է **Ժայռոտ** լեռների Առաջավոր լեռնաշղթայից սկիզբ առնող Հյուսիսային և Հարավային Փլատերի միախառնումից և Նեբրասկա նահանգի Փլատսմութ բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Երկարությունը՝ 499 կմ: Ջրի ծախսը՝ 199 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 219 916 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Նեբրասկյե* անվամբ, որը հնդկացիական օտոե ցեղի լեզվից բառացի նշանակում է *Տափակ ջուր*: Այս արտահայտությունը շատ մոտ է գետի ֆրանսերեն Rivière Plate *Տապակ գետ* անվանը, որը և մեծ հավանակությամբ հիմք է հանդիսացել գետի այժմյան անվանը:

ՓՈՔՐ ԱՆՏԻԼՆԵՐ - իսպաներեն Antillas Menores, անգլերեն Lesser Antilles, ֆրանսերեն Petites Antilles, նիդերլանդերեն Kleine Antillen. **Կարիբյան** ծովի համեմատաբար փոքր կղզիների շղթայաձև կղզեխումբ: Բարձր գագաթը **Սուֆրիեր** հրաբուխն է 1 467մ, **Գվադելուպ** կղզում: Զբաղեցնում է 13 887,5065 կմ^2 տարածք: Խոշոր կղզին՝ Տրինիդադ: Կղզեխումբը աշխարհագրորեն բաժանվում է Հողմահայաց և Հողմատակ կղզիների:
Անվանումը ստացել է ***Անտիլներից*** , որին ավելացվել է *Փոքր* ածականը:

ՓՐԻՆՍ ՉԱՌԼԶ - անգլերեն Prince Charles Island, ֆրանսերեն Île Prince-Charles, ինուկտիտուտ Ammaluqtuq. ցածրադիր կղզի **Կանադական Արկտիկական** կղզեխմբում: Երկարությունը՝ 130 կմ, լայնությունը՝ 94 կմ: Մակերեսը՝ 9 521 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 402 կմ: Բարձր կետը՝ 76 մ:
1949թ-ին անվանվել է *Ուելսի արքայազն Չառլզ Ֆիլիպ Արթուր Ջորջի* պատվին:

ՓՐԻՆՍ ՊԱՏՐԻԿ - անգլերեն Prince Patrick Island, ֆրանսերեն Île du Prince-Patrick. կղզի **Եղիսաբեթ թագուհու** կղզիների կազմում: Երկարությունը՝ 240 կմ, լայնությունը՝ մինչև 80 կմ: Մակերեսը՝ 15 848 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 672 կմ: Բարձր կետը՝ 279 մ:
Անվանվել է Միացյալ Թագավորության *արքայազն Արթուր Ուիլյամ Պատրիկի* պատվին:

ՓՐԻՆՍՏՈՆ - անգլերեն Mount Princeton. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում՝ **Ժայռոտ** լեռների Սավեչ լեռնաշղթայի Կոլեգիալ Պիկերում: Բացարձակ բարձրությունը՝ 4 327.25 մ, հարաբերականը՝ 664 մ:
Նախկինում հայտնի էր *Չալք Պիկ* անվամբ:
Լեռն անվանվել է *Փրինստոնի համալսարանի* պատվին:

Ք

ՔԱՍԼ ՊԻԿ - անգլերեն Castle Peak. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադոյում, **Ժայռոտ** լեռների Էլք լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 352.2 մ, հարաբերականը՝ 721 մ:
Castle անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Դղյակ*:

ՔԵՅՆԻ ԱՎԱԶԱՆ - անգլերեն Kane Basin, ֆրանսերեն Bassin Kane, դանիերեն Kane Bassin. ծով Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: Իրարից բաժանում է **Գրենլանդիայի** հյուսիսարևմտյան մասը և **Էլսմիր** կղզին: Իրար է միացնում **Բաֆֆինի** և **Լինքոլնի** ծովերը: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ 130 կմ: Առավելագույն խորությունը՝ 384 մ:
Նախկինում հայտնի էր *Փիբոդի Բեյ* անվամբ:
Անվանվել է ամերիկացի հետազոտող, նավատորմի բժիշկ և սպա *Էլայշա Քենթ Քեյնի* պատվին:

ՔԵՅՓ ԲՐԵՏՈՆ - անգլերեն Cape Breton Island, ֆրանսերեն Île du Cap-Breton, շոտլանդերեն Eilean Cheap Bhreatainn, միկմակ Unama'kik. կղզի Կանադայում, Նոր Շոտլանդիա թերակղզուց հյուսիս-արևելք, **Սուրբ Լավրենտիոսի** ծոցում: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ 114 կմ: Մակերեսը՝ 10 311 կմ^2: Բարձր կետը Ուայթ գագաթն է 535 մ:
Անվանումը կազմված է անգլերեն Cape *Հրվանդան* բառից և ֆրանսիական *Բրետոն* պատմական մարզի անունից:

ՔԵՆԵԴԻԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Kennedy Channel, ֆրանսերեն Passage Kennedy, դանիերեն Kennedykanalen. նեղուց Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, **Գրենլանդիա** և **Էլսմիր** կղզիների միջև, կազմում է **Ներսի** նեղուցի մասը: Իրար է միացնում **Քեյնի** և **Հոլլի** ծոցերը: Երկարությունը՝ մոտ 130 կմ, լայնությունը՝ 24-32 կմ: Խորությունները 180-340 մ:

1854 թ-ին անվանվել է Արկտիկայի հետազոտող Էլայշա Ք. Քեյնի կողմից, ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի քարտուղար *Ջոն Փենդլտոն Քենեդիի* պատվին:
Մեկ այլ վարկածի համաձայն նեղուցն անվանվել է բրիտանացի ճանապարհորդ և նավատորմի սպա *Ուիլյամ Քենեդիի* պատվին:

ՔԵՆԹ - անգլերեն Kent Peninsula, ֆրանսերեն Péninsule de Kent. ցածրադիր, խոշոր թերակղզի Կանադայի հյուսիս-արևմուտքում: Ողողվում է արևմուտքում **Քորոնեյշն** ծոցի, հյուսիսում՝ Դիս նեղուցի, հարավում՝ Մելվիլ նեղուցի և Էլու ծոցի, հարավ-արևելքում՝ Լաբիրինթ ծովախորշի և Քուին Մոդ ծոցի ջրերով: Բարձր կետը Ջորջ գագաթն է 183 մ: Երկարությունը՝ 169 կմ, լայնությունը՝ 40 կմ:
Անվանվել է անգլիացի բևեռախույզ Թոմաս Սիմփսոնի կողմից, Բելգիայի Լեոպոլդ I թագավորի քույր և Միացյալ Թագավորության Վիկտորիա թագուհու մայր *Քենթի դքսուհի Վիկտորիա Սաքս Կոբուրգ Սաալֆելդի* պատվին:

ՔԵՓԻՏՈԼ ՊԻԿ - անգլերեն Capitol Peak. լեռնագագաթ ԱՄՆ-ում, Կոլորադո նահանգում՝ **Ժայռոտ** լեռների Էլք լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 4 309 մ, հարաբերականը՝ 533մ:
Լեռն անվանվել է, իր տեսքով ԱՄՆ-ի կոնգրեսի *Կապիտոլիումի* շենքին նման լինելու շնորհիվ:

ՔԻՆԳ ՊԻԿ - անգլերեն King Peak, ֆրանսերեն Pic King. լեռ Կանադայի Յուկոն վարչական տարածքում, **Լոգան** լեռից արևմուտք: Ծածկված է բազմաթիվ սառցադաշտերով: Բացարձակ բարձրությունը՝ 5 173 մ, հարաբերականը՝ 1 053 մ:
Անվանումն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Թագավոր պիկ*:

ՔԼՈՆԴԱՅՔ - անգլերեն Klondike River, ֆրանսերեն Klondike, հան Tr'ondëk. գետ Կանադայի հյուսիս-արևմուտքում, **Յուկոնի** աջ վտակը: Սկիզբ է առնում Օգիլվի լեռներից և Դոուսոն քաղաքի մոտ միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 168 կմ: Ջրահավաք ավազանը՝ ավելի քան 8 000 կմ^2:
Անվանումը գետին հնդկացիական հան ցեղի կողմից տրված Tr'ondëk *Շատ ձուկ* կամ *Ջրում գամված* անվան աղճատված ձևն է:

ՔՈԹՍ - անգլերեն Coats Island, ֆրանսերեն Île Coats, ինուկտիտուտ Akpatordjuark. ցածրադիր կղզի **Հադսոնի** ծոցի հյուսիսային մասում: Երկարությունը՝ 130 կմ, լայնությունը՝ 65 կմ: Մակերեսը՝ 5 498 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 385 կմ: Բարձր գագաթը՝ 185 մ:
Անվանվել է XVIII դարում Հադսոնի Ծոցի Ընկերության ղեկավար *Ուիլյամ Քոթսի* պատվին:

ՔՈՐՈՆԵՅՇՆ - անգլերեն Coronation Gulf, ֆրանսերեն Golfe du Couronnement. Կռուզենշտեռն հրվանդանի և Քենտ թերակղզու միջև ընկած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց: Ծոցն են թափվում բազմաթիվ գետեր՝ Քոփերմայն, Ռեյն, Թրի, Ասիակ և այլն: Երկարությունը՝ 220 կմ, լայնությունը՝ 85 կմ: Միջին խորությունը 85 մ, առավելագույնը՝ 180 մ:
Ծոցն անվանվել է Անգլիայի թագավոր Գեորգ IV-ի, 1821 թ-ի հուլիսի 19-ի թագադրման առիթով:

ՔՐԵԲԹՐԻ - անգլերեն Crabtree Falls. բարձր ջրվեժ ԱՄՆ-ում, Վիրջինիա նահանգում՝ Քրեբթրի Քրիկ գետի վրա: Ունի 5 սանդղավանդ: Անկման ընդհանուր բարձրությունը՝ 317 մ:
Համարվում է, որ ջրվեժն անվանվել է 1777թ-ին, նրա մոտ բնակություն հաստատած ոմն *Ուիլյամ Քրեբթրիի* պատվին:

Օ

ՕԿԻՉՈԲԻ - անգլերեն Lake Okeechobee, իսպաներեն Lago Okeechobee. քաղցրահամ լիճ ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի հարավային մասում: Երկարությունը՝ մինչև 57,5 կմ, լայնությունը՝ մինչև 46,6 կմ: Մակերեսը՝ 1 900 կմ^2: Միջին խորությունը՝ 2,8 մ, առավելագույնը՝ 3,7 մ: Ծավալը՝ 5,32 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը 4,61 մ: Լիճն են թափվում մի քանի փոքր գետակներ, որոնցից խոշորը Կիսիմին է, իսկ արտահոսում՝ Էվերգլեյդս համակարգի մի քանի մանր ջրհոսքեր: Կան մի քանի կղզիներ՝ Քրիմեր, Թորի, Ռիտա, Գրաս և այլն:
Նախկինում հայտնի էր *Սեռոպե, Էսպիրիտու Սանտու, Մայակա* անուններով:
Անվանումը կազմված է հնդկացիական մայամի լեզվի oki *ջուր* և chubi *մեծ* բառերի միացումից՝ *Մեծջուր*:

ՕՀԱՅՈ - անգլերեն Ohio River. գետ ԱՄՆ-ի արևելյան մասում, **Միսիսիպիի** ձախ և ամենաջրառատ վտակը: Կազմավորվում է **Ապալաչյան** լեռներից սկիզբ առնող **Ալեգեյնի** և Մոնոնգահիլա գետերի միախառնումից: Վտակներն են՝ Բիվեր, Ուիլինգ Քրիկ, Հոկինգ, Սոլթ և այլ գետեր: Երկարությունը՝ 1 579 կմ : Ջրի ծախսը՝ 7 957 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 490 601 կմ^2:
Անվանումն առաջացել է գետի հնդկացիական իրոկուանե կամ սենեկե ցեղերի լեզվի Ohi: yó *Ընտիր գետ* անունից:

ՕՆՏԱՐԻՈ - անգլերեն Lake Ontario, ֆրանսերեն Lac Ontario. լիճ ԱՄՆ-ի և Կանադայի սահմանին: Երկարությունը՝ մինչև 311 կմ, լայնությունը՝ մինչև 85 կմ: Մակերեսը՝ 19 500 կմ^2: Միջին խորությունը՝ 86 մ, առավելագույնը՝ 244 մ: Ծավալը՝ 1 677 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը 74 մ: Ափագծի երկարությունը ներառյալ կղզիները՝ շուրջ 1 146 կմ: Ջրահավաք ավազանը՝ շուրջ 64 030 կմ^2 (լճի մակերեսի հետ միասին): Լիճն է թափվում Նիագարա, իսկ արտահոսում՝ **Սուրբ Լավրենտիոս** գետերը:
Նախկինում հայտնի էր *Օնդիարա, Ֆրոնտենակ, Կատարակի* անուններով:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական իրոկեզ ցեղի լեզվի skanadario *Ճաճանչվող ջրերի լիճ* բառը:

ՕՍԱ - իսպաներեն Península de Osa. թերակղզի Կենտրոնական Ամերիկայում՝ Կոստա Ռիկայի հարավ-արևմուտքում: Իրարից բաժանում է Դուլսե ծոցը և Խաղաղ օվկիանոսը: Այստեղ հոսող գետերից խոշորագույնը Ռինկոնն է: Թերակղզու արևմտյան մասում է գտնվում Կորկովադո լիճը: Բարձր կետը՝ 745 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Արջ*:

ՕՏՏԱՎԱ - անգլերեն Ottawa River, ֆրանսերեն Rivière des Outaouais, ալգոնկիներեն Kitchissippi. գետ Կանադայի հարավ-արևելքում, Սուրբ Լավրենտիոս գետի խոշորագույն ձախ վտակը: Սկիզբ է առնում Կապիմիչիգամա լճից և Մոնրեալ քաղաքի մոտ

թափվում մայր գետը: Վտակներն են՝ Գատինո, Կուլոնժ, Մատտավա, Ռիդո և այլ գետեր: Երկարությունը՝ 1 271 կմ: Ջրի ծախսը՝ 1 950 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 146 300 կմ^2: Նախկինում հայտնի էր *Կանադա* անվամբ:
Ներկայիս անվանումը գետը ստացել է նրա ափերին բնակվող օտտավա ցեղերից, որոնց անունը իր հերթին ալգոնկինյան լեզվի adawe *Առևտուր անել* բառի ձևափոխման արդյունք է:
Հնդկացիական ալգոնկինյան ցեղերի կողմից գետը կոչվում է Kitchissippi *Մեծ գետ*:

Ֆ

ՖԱՐԱԼՅՈՆՆԵՐԻ ԾՈՑ - անգլերեն Gulf of the Farallones, իսպաներեն Golfo de los Farallones. Խաղաղ օվկիանոսի ծոց ԱՄՆ-ի արևմտյան ափերի մոտ: Սան Ֆրանցիսկո և Դրեյքսի ծոցերից մինչև Ֆարալյոն կղզիները: Մակերեսը՝ 3 200 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Բահյա դե Պուերտո դե Սան Ֆրանցիսկո, Էնսենադա դե Լոս Ֆարայլոնես և Լա Բահյա դե Լոս Պինոս* անուններով:
Անվանումն առաջացել է իսպաներեն farallón *սյուն, ժայռ, քարափ բառից*:

ՖԵՐՈՒՈԹԵՐ - անգլերեն Mount Fairweather, ֆրանսերեն Mont Fairweather, տլինգիտ Tsalxhaan. լեռ Բրիտանական Կոլումբիայի և Ալյասկայի սահմանագլխին, **Սուրբ Եղիայի** լեռների ծայր հարավում՝ Գլեյշեր ծոցի ափին: Բացարձակ բարձրությունը՝ 4 671 մ, հարաբերականը՝ 3 961 մ: Լեռան լանջերին ձևավորված սառցադաշտերը հոսում են դեպի արևմուտք՝ **Ալյասկայի** ծոց:
Նախկինում հայտնի էր *Բոտեմ, Բուենտյեմպո, Շոնվետեռբերգ* և այլ անուններով: 1778 թ-ի մայիսի 3-ին անվանվել է Ջ.Կուկի կողմից՝ Mount Fairweather, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Հի ասքանչ եղանակի լեռ*:

ՖԼՈՐԻԴԱ - անգլերեն Florida Peninsula, իսպաներեն Península de Florida. ցածրադիր թերակղզի ԱՄՆ-ի հարավ-արևելքում: Ողողվում է արևելքից Ատլանտյան օվկիանոսի, հարավից՝ **Ֆլորիդայի** նեղուցի և արևմուտքից՝ **Մեքսիկական** ծոցի ջրերով: Երկարությունը՝ մինչև 650 կմ, լայնությունը՝ 130 կմ: Մակերեսը մոտ 115 000 կմ^2: Բարձր կետը Բրիտոն Հիլ գագաթն է 105 մ:
Նախկինում հայտնի էր *Պասկուա Ֆլորիդա* անվամբ:
Թերակղզին 1513 թ-ին ապրիլի 2-ին հայտնաբերել է իսպանացի կոնկիստադոր Խուան Պոնսե դե Լեոնը և անվանել այն Florida *Ծաղկանոց (ծաղիկների երկիր)*:

ՖԼՈՐԻԴԱ ՔԻՍ - անգլերեն Florida Keys, իսպաներեն Cayos de la Florida. կղզեխումբ ԱՄՆ-ում՝ **Ֆլորիդա** թերակղզուց հարավ-արևմուտք: Կան շուրջ 1 700 կղզիներ, կղզյակներ և բուստախութեր, որոնց ընդհանուր մակերեսը 355,6 կմ^2 է: Կղզեխումբը բաժանվում է 4 շղթաների՝ Վերին, Միջին, Ստորին Քիսերի և Հեռավոր կղզիների:
Կղզեխումբը 1513թ-ին հայտնաբերվել է իսպանացի ծովագնաց Խուան Պոնսե դե Լեոնի կողմից և անվանվել Los Martires *Մարտիրոսների* կղզիներ անվամբ:
Այժմյան անվանումը կազմված է **Ֆլորիդա** թերակղզու անվան և անգլերեն key բառից, որն իր հերթին առաջացել է իսպաներեն cayo *կղզյակ* բառից:

ՖԼՈՐԻԴԱՅԻ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Estrecho de Florida, անգլերեն Florida Strait. **Մեքսիկական** ծոցը և Ատլանտյան օվկիանոսը իրար միացնող նեղուց: Հյուսիսից եզերված է **Ֆլորիդա** թերակղզով և **Ֆլորիդա Քիս** կղզեխմբի շղթաների շարքով, հարավից՝ **Կուբա** կղզով: Երկարությունը՝ 650 կմ, լայնությունը՝ 150 կմ: Միջին խորությունը՝ 150 մ: Անվանումը ստացել է ***Ֆլորիդա*** թերակղզուց:

ՖՈՆՍԵԿԱ - իսպաներեն Golfo de Fonseca. Խաղաղ օվկիանոսի ծոց Էլ Սալվադորի, Հոնդուրասի և Նիկարագուայի ափերի մոտ: Ափագծի երկարությունը՝ 261 կմ: Առավելագույն խորությունը՝ 27 մ: Երկարությունը՝ 74 կմ, լայնությունը՝ 35 կմ: Մակերեսը՝ 3 200 կմ^2: Ծոցում են գտնվում Մեանգուերա, Մեանգուերիտա, Կոնչագուա, Էլ Տիգրե, Սակատե Գրանդե և այլ կղզիներ: Ծոցն են թափվում Ամատիլյո, Չոլուտեկա, Գոասկորան, Նակաոմե, Սումպիլե և այլ գետեր:
Ծոցը 1522 թ-ին հայտնաբերվել է իսպանացի կոնկիստադոր Խիլ Գոնսալես դե Ավիլայի կողմից և անվանվել իր հովանավոր արքեպիսկոպոս *Խուան Ռոդրիգես դե Ֆոնսեկայի* պատվին:

ՖՈՐԵՅՔԵՐ - անգլերեն Mount Foraker. լեռ ԱՄՆ-ում Ալյասկայի կենտրոնական լեռնաշղթայում՝ Դենալի ազգային պարկում: Բացարձակ բարձրությունը՝ 5 303,5 մ, հարաբերականը՝ 2 209,8 մ:
1899թ-ին լեռն անվանվել է լեյտենանտ Ս.Ս. Հեռոնի կողմից, ԱՄՆ-ի Օհայո նահանգից սենատոր *Ջոզեֆ Բ. Ֆորեյքերի* պատվին:

ՖՈՔՍ - ֆրանսերեն La Fox / Rivière aux Renards, անգլերեն Fox River. գետ ԱՄՆ-ում, Վիսկոնսին նահանգի արևելքում: Սկիզբ է առնում Փարդիվիլ բնակավայրի մոտ բխող աղբյուրներից և հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ՝ թափվում **Միչիգան** լճի Գրին ծոցը: Խոշոր վտակը Վոլֆն է: Երկարությունը՝ 322 կմ: Ջրի ծախսը՝ 117 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 16 651 կմ^2:
Անվանումը գետի ֆրանսերեն Rivière aux Renards *Աղվեսների գետ* անվան անգլերեն պատճենումն է:

ՖՈՔՍ - անգլերեն Foxe Peninsula, ֆրանսերեն Péninsule de Foxe. թերակղզի Կանադայում: **Բաֆֆինի երկիր** կղզու հարավարևմտյան մասում: Երկարությունը՝ 241 կմ, լայնությունը՝ մինչև 161 կմ: Ողողվում է հյուսիսից **Ֆոքսի ավազանի**, արևմուտքից՝ Ֆոքսի և հարավից՝ **Հադսոնի** նեղուցների ջրերով:
Անվանվել է անգլիացի հետազոտող *Լյուկ Ֆոքսի* պատվին:

ՖՈՔՍԻ ԱՎԱԶԱՆ - անգլերեն Foxe Basin, ֆրանսերեն Bassin de Foxe. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծոց՝ **Բաֆֆինի երկիր**, **Մելվիլ թերակղզու** և **Սաութհեմփտոն** կղզու միջև: Երկարությունը՝ մոտ 600 կմ, լայնությունը՝ մոտ 500 կմ: Միջին խորությունները՝ 100-400 մ: Ծոցում կան բազմաթիվ կղզիներ՝ Արքայազն Չառլզ, Բրեյ, Ռոուլի, Ֆոլի և այլն:
Անվանվել է անգլիացի հետազոտող *Լյուկ Ֆոքսի* պատվին:

ՖՐԵՅԶԵՐ - անգլերեն Fraser River, ֆրանսերեն Fleuve Fraser. գետ Կանադայում՝ Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում: Սկիզբ է առնում **Ժայռոտ** լեռների արևմտյան լանջերից և հիմնականում հոսելով հարավարևմտյան ուղղությամբ՝ թափվում Խաղաղ օվկիանոսի Ջորջիա նեղուցը: Վտակներն են՝ Նեչակո, Չիլկոտին, Թոմփսոն և այլ գետեր: Երկարությունը՝ 1 375 կմ: Ջրի ծախսը՝ 3 475 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 248 035 կմ^2: Հայտնի է նաև Sto:lo, Lhtakoh և Elhdaqox անուններով:
Անվանվել է գետն ուսումնասիրած մորթու վաճառական, հետազոտող և քարտեզագիր *Սայմոն Ֆրեյզերի* պատվին:

ՖՈՒԵՐՏԵ - իսպաներեն Rio Fuerte. գետ Մեքսիկայի հյուսիսային մասում:Կազմավորվում է Արևմտյան Սյեռա Մադրեյում՝ Վերդե և Ուրիկե գետերի միախառնումից և հոսելով հարավային, ապա արևմտյան ուղղությամբ՝ թափվում **Կալիֆոռնիական** ծոց: Երկարությունը՝ 670 կմ: Ջրի ծախսը՝ 164 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 33 590 կմ^2: Անվանումը ստացել է El Fuerte բնակավայրից, որի անունը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Բերդ* կամ *ամրոց*:

Հյուսիսային Ամերիկայի
խոշոր ֆիզաշխարհագրական
օբյեկտների տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանը կազմվել է
Հայաստանի Հանրապետության
Կադաստրի կոմիտեի
Գեոմատիկայի կենտրոնի կողմից

Գլխավոր խմբագիր՝ Յու. Վարյան

Խմբագիր՝ Վ. Թովմասյան